ԼՆԺԵԼԱ ՏԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԻ ՀԶՈՐ ՁԵՆՔԸ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ Է



ԱՍԿԱՆ
ԵՐԵՎԱՆՑԻ

9(47.925)
Հ-47

ANGELA TERYAN

ARMENIA AND HISTORY

АНЖЕЛА ТЕРЯН

АРМЕНИЯ И ИСТОРИЯ

"VOSKAN EREVANTSI" PUBLISHING HOUSE

ИЗДАТЕЛЬСТВО "ВОСКАН ЕРЕВАНЦИ"

YEREVAN 2007 ЕРЕВАН

48772

ԱՆԺԵԼԱ ՏԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2007

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Տ 470

Հրատարակվել է Երևանի պետության թանգարանի գիտամեթոդական խորհրդի որոշմամբ:

Գրքի տպագրությունը հովանավորել է
Երևանի քաղաքապետ ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆԸ

Տերյան Անժելա

Տ 470 Հայաստանը և պատմությունը.– Եր.: Ոսկան Երևանցի, 2007.-100 էջ:

Գրքում ներկայացված են հայոց պատմության հնագույն շրջանի մասին հոդվածներ, որոնցում հեղինակը առաջ է քաշում նոր տեսակետներ և նոր մոտեցումներ առաջադրված հարցերի վերաբերյալ: Հոդվածների մի մասը լույս է տեսել ՀՀ պաշտպանության նախարարության «Հայրենիքի մարտիկ» ամսագրում, ինչպես նաև զանազան հանդեսներում և մամուլում: Ներկայացվող հոդվածները լրամշակվել են և հարստացվել:
Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

Տ $\frac{0503020913}{847(01)2007}$ 2007 ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-99930-0-114-0

© ՏԵՐՅԱՆ Ա., 2007թ.
© »ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ«, 2007թ.

ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶԱՆ ԼԵՌԱՆ ՍԻՍ, ՄԱՍԻՍ ԵՎ ԱՐԱՐԱՏ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր երկգագաթ լեռը (5.165 մ.) հայերը կոչել են Սիս և Մասիս: Մասիսը հայտնի է նաև Արարատ անունով: Հայոց պատմության շատ հարցերի ու հնագույն շատ անունների նման հայոց սրբազան լեռան Մասիս և Արարատ անունները ևս հետաքրքրել են ուսումնասիրողներին և բազմաթիվ հարցերի տեղիք տվել: Իսկ հարցերը շատ են. ինչո՞ւ սրբազան այս լեռն ունի երկու անուն՝ Մասիս և Արարատ, ո՞րն է հնագույնը, ի՞նչ են նշանակում Սիս, Մասիս և Արարատ անունները, ինչո՞ւ և ե՞րբ է սարը կոչվել նաև Արարատ:

Անդրադառնանք այս հարցերից յուրաքանչյուրին և փորձենք պարզաբանել դրանք:

Սիս և Մասիս անունները լեռան հնագույն անուններն են: Նկատում ենք, որ Հայկական լեռնաշխարհի այլ լեռնագագաթներ ևս կրում են Մասիս անվանը մոտ անուններ: Այսպես. Վանա լճից հյուսիս գտնվող լեռը կոչվում էր Նեխ-Մասիք (Սիփան)[1], Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում՝ Հայկական Միջագետքում գտնվող լեռը հունական[2] և հայկական[3] հնագույն գրավոր աղբյուրներում կոչվում է Մասիոս կամ Մասիոն (այժմ՝ Տուր-Աբդին): Ասուրական գրավոր աղբյուրներն այս լեռների համար օգտագործում են Քաշշիարի լեռներ[4] անունը: Շումեր-աքադական «Գիլգամեշ» դյուցազնավեպից հայտնի է երկգագաթ Մասու կամ Մաշու անունով լեռը[5], որի հետևից ծագում ու մայր է մտնում արևը, և որի վրա կանգ է առել Ուտնապիշտիի տապանը (հմմ. Նոյի տապանը): Մասու-Մաշուն հաճախ նույնացվում է Մասիոս-Մասիոն լեռների հետ:

Սիս և Մասիս անունների ծագման մասին եղել են բազմաթիվ բացատրություններ ու տեսակետներ, որոնք շարունակվում են մինչ օրս: Հնագույնը Մ. Խորենացու բացատրությունն է: «Հայոց պատմություն» աշխատության մեջ նա գրում է, որ Մասիս անունը առաջացել է Հայկի թոռնորդի Ամասիայի անունից[6] (Հայկ, Արամանյակ, Արամայիս, Ամասիա): Տեսակետներից մեկի համա-

1. ՀԺՊ, 1971թ. էջ 21:
2. *Ստրաբոն,* Աշխարհագրություն, XI, 14(2):
3. *Ս. Երիմյան,* Հայաստանը ըստ Աշխարհացույցի, Երևան, 1963, էջ 65, 113:
4. ՀԺՊՔ, Երևան, 1981, էջ 15-16, 21:
5. ՀԱՊ, 1982, էջ 145:
6. *Մ. Խորենացի,* Հայոց Պատմություն, 1981, էջ 50-51:



Մասիս (Արարատ) լեռը

ձայն՝ Մասիս, Մաշու-Մասու անունները «զույգեր», «զույգ լեռներ», «երկվորյակ լեռներ»[7] իմաստներն ունեն: Ըստ տարածված մեկ այլ տեսակետի՝ «Մասիս» անունը առաջացել է «մաս» բառից, քանի որ լեռը բաղկացած է երկու մասից և այլն: Սակայն լեռան վեհապանծ տեսքն այլ բան է հուշում: Սիսը և Մասիսը իրենց տեսքով (միայնակ, երկգագաթ) այն տպավորությունն են թողնում, որ ասես անմիջականորեն բուսել են Մայր Երկրից, հողից և շատ ամուր կապված են հողին: Այլ դեպքերում բարձր լեռնագագաթները միայնակ չեն և անմիջականորեն կպած չեն մայր հողին: Դրանք լեռնաշղթաների բարձր գագաթներ են:

Մասիս (Սիս, Մա-Սիս) լեռան տեսքը հուշում է, որ Սիս անունը կարելի է կապել «կաթնաբեր մասունք մայց»[8] բառի իմաստի հետ: Հնդեվրոպական մի շարք լեզուներում (սլավոնական լեզուներ, ալբաներեն, նաև էտրուսկերեն) հանդիպում են իմաստով և հնչողությամբ Սիս անվանը մոտ բառեր[9]:

Մա-սիս անվան «Մա»-ն հայոց լեզվում «սերել» իմաստն ունի, այն է. մայր: Հետևաբար կարելի է ասել, որ Մասիսը **Մայր Սիս** իմաստն ունի: Հայերը Սիս և Մասիս կոչելով Հայկական լեռնաշխարհի գրեթե կենտրոնում գտնվող երկգագաթ այս լեռը, այն դիտել են իբրև Մայր Երկիրը, հողը սնուցող մասունքներ, որոնք իրենց բարձր գագաթներով տիեզերական կենսատու հոսք են ստանում և սնուցում անմիջականորեն իրենց կպած Մայր հողն ու երկիրը՝ Հայաստան աշխարհը:

7. *Ն. Մարտիրոսյան,* Պրպտումներ փոքրասիական անունների մասին, ՊԲՀ, 1961, 3-4, էջ 107:
8. Նոր Բառգիրք Հայկազյան լեզվի, էջ 746:
9. *Հ. Մնացական,* Հայերեն արմատական բառարան, 1973, հ. 2, էջ 471-472, *В. Даль,* Толковый словарь, М. 1956, с. 188:

Հայտնի է, որ շումերները Ստորին Միջագետք են իջել Հայկական լեռնաշխարհի հարավային մասերից, տանելով իրենց հետ բնօրրանում ստեղծված մշակութային, այդ թվում նաև կրոնաաղիցաբանական շատ արժեքներ: Անշուշտ, նրանք իմացել են Հայկական լեռնաշխարհի Սիս ու Մասիս անուններով երկգագաթ սրբազան լեռան մասին և, նոր հայրենիքում խոսելով ջրհեղեղի մասին, տապանի երկգագաթ սարը կոչել են Մասու-Մաշու: Ի դեպ, գագաթը, որի վրա կանգ է առել Ուտնապիշտիի (Նոյի) տապանը, կոչվում էր Նիսիր, որը հեռավոր նմանություն ունի Մասիս անվան հետ: Մասու-Մաշու երկգագաթ լեռը, որտեղից, ըստ «Գիլգամեշի», ծագում և մայր է մտնում արևը, պատկերված է նաև աքադական կնիքների վրա, ընդ որում լեռները պատկերված են այնպես, ինչպես դրանք երևում են Միջագետքից՝ Մասիսը ձախ, իսկ Սիսը՝ աջ կողմում:

Հայերը սուրբ, աստվածային լեռ են համարել Մասիսը, որի գագաթին չպետք է դիպչի մահկանացու մարդու ոտքը: Հայոց հավատալիքներում լեռը պահպանում են քաջքերն ու վիշապազունները: Հիշենք Մ. Խորենացու վկայությունը, երբ հայոց Արտաշես արքան անիծում է որդուն՝ Արտավազդին, ասելով.

Թե դու հեծնես, որսի գնաս
Ազատն ի վեր, դեպի Մասիս,
Քաջքերը քեզ բռնեն տանեն
Ազատն ի վեր, դեպի Մասիս:[10]

Մասիս լեռը պահպանող այս քաջքերն ու վիշապազունները հիշեցնում են «Գիլգամեշ» դյուցազնավեպի Մասու-Մաշու լեռների դարպասները պահպանող ու միայն աստվածների համար այն բացող մարդակարիճներին: Հայերի համար Մասիսի ձյունն անգամ սուրբ է համարվել: Երբ Խ. Աբովյանը գերմանացի գիտնական Ֆ. Պարրոտի հետ բարձրացել է Մասիսի գագաթը, այնտեղից շշով ձյուն է բերել, որը պահել է իբրև սրբազան մասունք:

Այսպիսով՝ միանշանակ կարելի է ասել, որ Հայկական լեռնաշխարհի այլ մասերում գտնվող **Նեխ-Մասիք, Մասիոս-Մասիոն,** նաև **Մասու-Մաշու** անունների համար հիմք է հանդիսացել հայոց սուրբ լեռան՝ **Մասիս** հնագույն անունը:

Սուրբ լեռան համար օգտագործվում է նաև Արարատ անունը, որը Հայաստան երկրին տրվող հնագույն անուններից է: «Արարատ» անունն իր իմաստով ու բացատրությամբ հասնում է արարչագործության ժամանակներ և «**արարելու, ստեղծելու տեղ, վայր**»[11] իմաստն ունի: Արարատ անունը տարածվել է աշխարհում Աստվածաշնչի միջոցով: Ըստ հին կտակարանի՝ Համաշխարհային

10. *Մ. Խորենացի,* 1981, էջ 233:
11. *Ա. Տերյան,* Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Եր., 2002, էջ 18-19:

ջրհեղեղի ժամանակ Նոյի տապանը կանգ է առել Արարատի լեռներին[12]: Աստվածաշնչի եբրայերեն բնագիրը Հայաստանի համար օգտագործում է Արարատի թագավորություն (Ուրարտու) անունը, իսկ Նոյյան տապանի սարը կոչում է Արարատի լեռներ (լեռ): Ավելի ուշ՝ միջնադարում, Աստվածաշնչի քրիստոնյա մեկնիչները Արարատի երկրում (լեռներում) գտնվող Նոյյան տապանի սարը նույնացրին հայերի կողմից Մասիս կոչվող լեռան հետ և **Արարատ-Մասիսը Արարատ անվամբ համարվեց Նոյյան տապանի լեռ**:

Այսպիսով՝ Հայկական լեռնաշխարհի գրեթե կենտրոնում գտնվող սրբազան լեռան **Մասիս** անունը հայերի կողմից տրված հնագույն անունն է և **Մայր-Սնուցող** (Մա-Սիս) իմաստն ունի, իսկ **Արարատ** անունը տրվել է ավելի ուշ, իբրև Արարատ-Ուրարտու երկրի կենտրոնում գտնվող լեռ, ուր համաշխարհային ջրհեղեղի ժամանակ հանգրվանել ու փրկվել են Նոյի սերունդները: Եվ Արարատ-Մասիս լեռան շուրջ ջրհեղեղից հետո սկիզբ դրվեց մարդկային նոր քաղաքակրթության:

12. Ծննդոց, 4,5:

ՍՎԱՍՏԻԿԱ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Արարիչ Ար Աստծո, Արև-Աստծո, Արևի տարածված խորհրդանիշեր են սվաստիկան ու խաչը: Սվաստիկան իր հիմքով նման է խաչի, սակայն թևերի չորս ծայրերը ուղիղ անկյունով թեքվում են աջ կամ ձախ՝ խորհրդանշելով աշխարհի չորս կողմերը տարածվող լույսը, արևը, անսահմանությունը ու հավերժությունը: Կենտրոնում ունենալով Մայր Երկիրը, այն նաև անընդհատ շարժման տպավորություն է թողնում, խորհրդանշելով այևի շարժումը: Բացի սվաստիկայի դասական այս ձևից, որը շատ պարզ է ու գեղեցիկ, գոյություն ունեն նաև եռաթև, բազմաթև, կորածայր, միոլոր, բազմոլոր և այլ ձևի սվաստիկաներ:

Սվաստիկան տարբեր ժողովուրդների մոտ տարբեր անվանումներ է ունեցել, սակայն 19-րդ դարի վերջերից տարածվում է սանսկրիտ **սվաստիկա** անվանումը: Հայաստանում տարածված են արևխաչ, կեռխաչ, ճանկախաչ, խաչաթև, արմնկաձև խաչ, հավերժության նշան և այլ անվանումներ: «Սասնա ծռեր» դյուցազնավեպից հայտնի «Խաչ Պատերազմին», որն իրենց աջ բազկին կապում էին Սասնա դյուցազունները թշնամու դեմ մարտի գնալուց առաջ, անկասկած սվաստիկա էր, քանի որ հենց սվաստիկան է եղել հայ ռազմիկների սիրված ու տարածված խորհրդանիշերից մեկը՝ ըստ հայտնաբերված հնագիտական նյութերի:

Հայաստանում հանդիպում են և՛ աջ թեքումով, և՛ ձախ թեքումով սվաստիկաներ, որոնք մեծ քանակությամբ պատկերված են Գեղամա և Սյունյաց լեռներին (ժայռապատկերներ), պեղումների ժամանակ հայտնաբերված զենքերահին, զարդերին, պաշտամունքային ու կենցաղային իրերին:

Սվաստիկայի նկատմամբ միշտ մեծ հետաքրքրություն է եղել աշխարհում: Բազմաթիվ գիտնականներ և ուսումնասիրողներ (Յ. դը Մորգան, Մուրիե, Լիտտրե, Դիմմուրտիե, Մ. Մյուլլեր) զբաղվել են սվաստիկայի առեղծվածով: Նրանք փորձել են պատասխանել բազմաթիվ հարցերի, այդ թվում. ի՞նչ է նշանակում սվաստիկայի աջ թեքումը, ի՞նչ է նշանակում ձախ թեքումը, ի՞նչ է նշանակում սվաստիկա բառը, ինչպե՞ս կարելի է այն բացատրել, ի՞նչ է խորհրդանշում այն և այլն:

Տարածված կարծիքներից մեկի համաձայն՝ սվաստիկայի (նաև խաչի) հիմքի հորիզոնական գիծը նյութական աշխարհն է, իսկ ուղղահայացը՝ ոգեղեն,

Նկ.1. Գեղամա ժայռապատկեր

տիեզերական աշխարհը: Այս պատկերում խաչաձևվում են նյութն ու ոգին: Սվաստիկայի աջ թեքված չորս ծայրերը՝ ըստ ջայնիզմի հետևորդ հնդիկ մի վարդապետի, նյութական տիեզերքում հոգիների գոյության չորս աստիճաններն են ներկայացնում. ա) նախասկզբնական, ստորին շրջան, բ) երկրային կյանք, բուսական և կենդանական աշխարհ, գ) մարդկային վիճակ և դ) երկնային կյանք: Այս բոլոր աստիճանավորումները նյութի ու ոգու միակցումներն են տարբեր վիճակներում:

Տարածված է այն տեսակետը, որ աջ թեքվող սվաստիկան կյանքի ու հավերժության խորհրդանիշն է, իսկ ձախ թեքվողը՝ մահվան խորհրդանիշը: Այլ տեսակետի համաձայն՝ աջ թեքվող սվաստիկան արական իմաստ ունի, իսկ



Նկ.2. Սյունյաց ժայռապատկերներ



Նկ.3. ա) Գեղամա ժայռապատկերներ

ձախ թեքվողը՝ իգական: Այս տեսակետը համապատասխանում է տիեզերքում և բնության մեջ գործող արական-իգական, դրական-բացասական (ին, յան) և այլ նմանատիպ հակադրությունների պայքարի ու միասնության հասկացողությանը: Այս առումով հետաքրքիր է Ակներից հայտնաբերված դաշույնի պատյանը, որը թվագրվում է մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբով (նկ. 5): Իմաստային առումով պատյանը բաժանվում է երեք մասի: Ամենավերևում Արև-Աստվածն է, միջին մասում Մայր-Աստվածուհուն հիշեցնող պատկեր է, որն իր բացված թևերի տակ է առել հակառակ (աջ, ձախ) պտտվող երկու



Նկ.3. բ) Գեղամա ժայռապատկերներ

սվաստիկաներ: Ստորին մասում կլոր շրջանակ է, որի մեջ հավասարաթև խաչ է պատկերված: Այն երկրագունդը՝ Մայր Երկիրն է հիշեցնում[1]:

Տարածված տեսակետ գոյություն ունի **սվաստիկա** բառի բացատրության վերաբերյալ: Ընդունված է, որ svastika –ն կազմված է su «լավ, բարի» և asti «լավ լինել» բաղադրիչներից, որը բարեկեցություն, երջանիկ վիճակ իմաստներն ունի (ka-ն մասնիկ է): Սվաստիկայի առեղծվածով զբաղվող գիտնականները համակարծիք են մեկ հարցում՝ սվաստիկան արևապաշտ արիական ցեղի խորհրդանիշն է և տարածվել է այդ ցեղի հետ միասին:

20-րդ դարի երկրորդ կեսին առաջ քաշվեցին նոր տեսակետներ հնդեվրոպացիների նախնիների՝ արիական ցեղերի նախահայրենիքի, նրանց կողմից ստեղծված քաղաքակրթության, մշակույթի և այլ հարցերի մասին: Վերանայվեցին ու նորովի մեկնաբանվեցին շատ տեսակետներ: Փորձենք նորովի մեկնաբանել նաև սվաստիկա բառի իմաստը: Դիմենք արիական ցեղերի հնագույն գրավոր աղբյուրներին՝ հնդկական վեդաներին և իրանական «Ավեստային»: Հին հնդկական վեդայական գրականության մեջ (սանսկրիտ) հանդիպում են svar, suar բառերը «արև, լույս, փայլ, ցոլք» իմաստներով (հմմ. ռուսերեն свет–«լույս» բառը): «Ավեստայում» հանդիպում է hvar բառը «արև, արևի լույս» իմաստով:

Հնդեվրոպական «աստ, ազդ» բառարմատները «ուժ, զորություն» իմաստն ունեն (հմմ. հայերեն աստիած, աստված բառը), իսկ ուժ, զորություն աստվածներն ունեն: Նկատում ենք, որ **սվաստիկա** բառը բաղկացած է **svar, suar**–արև, լույս, փայլուն և **asti**–աստիած բաղադրիչներից: Հետևաբար **սվաստիկան արևի, լույսի աստված իմաստն ունի** (կա-ն մասնիկ է) և կապված է Արև-Աստծո ու նրա պաշտամունքի հետ: Այս տեսակետը լիովին ապացուցվում է Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական մշակույթի բազմաթիվ գտածոներով: Սվաստիկայի բազ-

1. Այս պատկերի նկարագրությունը հիշեցնում է խուրրի-հայկական «Երկնային բազավորության մասին» պոեմի բովանդակությունը:



Նկ.4. Բրոնզե ճակատակալ, Լոռի բերդ, մ.թ.ա. 12–11-րդ դդ.



Նկ.5. Դաշույնի բրոնզե պատյան, Ակներ, մ.թ.ա. 1-ին հազ. սկիզբ



Նկ.6. Երկաթե դաշույն, Իջևան, մ.թ.ա. 1-ին հազ. սկիզբ



Նկ.7. Բրոնզե վահանակ, Սևանի ավազան մ.թ.ա. 13–12-րդ դդ.



Նկ.8. Բրոնզե մարտական կացին, Արթիկ, մ.թ.ա. 2-րդ հազ. կես



Նկ.9. Ռազմիկի ֆալլիկ արդանիկով բրոնզե շերեփ, Լոռի բերդ, մ.թ.ա. 12-րդ դար



Նկ.10. Բրոնզե գոտու մաս, մ.թ.ա. 1-ին հազ. սկիզբ

մաթիվ պատկերներ կան հատկապես Գեղամա ժայռապատկերներում: Իմաստային առումով հետաքրքիր է Գեղամա ժայռապատկերներից մեկը (նկ. 1), որտեղ Արև-Աստվածը խորհրդանշող պարույրից ծնվում են երկու սվաստիկաներ՝ երկվորյակներ, որոնցից մեկը աջ թեքմամբ դասական սվաստիկա է, մյուսը՝ ձախ թեքմամբ աղավաղված սվաստիկա (երկվություն, նաև հակադրություն ու միասնություն)[2]: Սվաստիկայի նախատիպը հիշեցնող պատկերներ կան Սյունյաց ժայռապատկերներին, ուր պատկերված են մեկ ձեռքը վեր բարձրացրած, մյուսը՝ ցած իջեցրած մարդկային կերպարներ (դարձյալ երկվություն, միասնություն և հակադրություն):

Գեղամա և Սյունյաց լեռների ժայռապատկերները թվագրվում են մ.թ.ա. 7-3-րդ հազարամյակներով:

19-րդ դարի վերջերին Հայկական լեռնաշխարհում կատարվում են հնագիտական պեղումներ (Ռեսլեր, Ն. Մառ, Յ. դը Մորգան, Է. Շանտր, Խ. Սամվելյան), որոնց արդյունքում հայտնաբերվում են բազմաթիվ իրեր՝ սվաստիկայի (նաև խաչի) պատկերով: Հնագիտական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սվաստիկան սիրված խորհրդանիշ է եղել հատկապես հայ ռազմիկների համար, քանի որ այն մեծ քանակությամբ պատկերված է հայ առաջնորդների և ռազմիկների պեղված դամբարաններում (Լոռի բերդ, Շիրակ, Իջևան) հայտնաբերված զենք-զրահին ու հանդերձանքին: Դրանք դաշույններ են, սրեր, սրի պատյաններ, ճակատակալներ, կրծքին ամրացվող ճարմանդներ, վահանակ-սկավառակներ, կոճակներ, մարտական սակրեր, գոտիներ, զրահի բեկորներ և այլն: Իբրև ռազմի աստծո

Նկ.11. Քրեղան, Շենգավիթ, 4–3-րդ հազ-ներ



Նկ.12. Խեցանոթ, Լոռի, մ.թ.ա. 2-րդ հազ. կես



Նկ.13. Կարաս, Արտաշատ (Վերին Նավեր), մ.թ.ա. 19-րդ դ.

2. Այս դեպքում համեմատության համար հիշենք «Սասնա ծռերի» Սանասարին ու Բաղդասարին (նաև հռոմեական Հռեմոս-Հռոմուլոսին և հնդեվրոպական նույնատիպ այլ հերոսների, երբ հերոսներից մեկը անթերի է ու ամբողջական, մյուսը՝ քիչ պակասավոր:



Նկ.14. Սափոր, Արցախ, մ.թ.ա. 2-րդ հազ. կես

Նկ.15. Խեցու բեկոր, Քյուլ-թեփե (Կեսարիա) մ.թ.ա. 3-րդ հազ.



Նկ.16. Աղորիքի գրորիչի մաս Իջևան, մ.թ.ա. 1-ին հազ. սկիզբ

խորհրդանիշ (Արև-Աստվածը որպես հզոր աստված նաև ռազմի աստվածն էր) սվաստիկան (նաև խաչը) պետք է ուժ, զորություն տար կրողին, նաև պաշտպաներ նրան չարից ու թշնամու հարվածներից: Հանդիպում են նաև խաչի ու սվաստիկայի միացյալ պատկերներով իրերի, որոնք կոմպոզիցիոն պատկերներ են (նկ. 22 բ):

Սվաստիկան բազմապիսի ձևերով ու մեծ քանակությամբ պատկերված է նաև խեցեղենի, զարդերի, աղորիքների ու կենցաղային այլ իրերի վրա, որոնք պաշտպանիչ, նաև պաշտամունքային նշանակություն են ունեցել: Սվաստիկայի պատկերով հնագույն խեցանոթ է հայտնաբերվել Շենգավիթում (մ.թ.ա. 4-րդ հազարամյակ, նկ. 11), որը դարձյալ կոմպոզիցիոն պատկեր է: Խեցանոթի՝ (քրեղան) կենտրոնում եռաթև խաչ է՝ առնված կլոր շրջանակի մեջ, որից դուրս պատկերված է թռչունների և օձերի մենամարտ, իսկ դրանց միջև՝ երկու փոքր լուսատու շրջանակներ և սվաստիկա: Խեցեղենի մեջ հանդիպում են այնպիսի նմուշներ, որոնց վրա սվաստիկան պատկերված է հատակին, արտաքին մասում: Հանդիպում են նաև երկճյուղ ու եռաճյուղ թեքումներով սվաստիկաներ: Այդպիսի խեցանոթներ հայտնաբերվել են Արթիկում, Քարաշամբում, Վանաձորում և այլն: Սվաստիկայի պատկերով մեծ քանակությամբ զարդեր են հայտնաբերվել Վանաձորում (Թագավորանիստ), Լոռի բերդում, Իջևանում, Արթիկում, Շամխորում (Գարդման) և այլ վայրերում կատարված պեղումների ժամանակ: Դրանք բրոնզե ու ծարիրե կախազարդեր են, ուլունքներ, կոճակներ և այլն: Հայկական լեռնաշխարհից հարավ, Հյուսիսային Միջագետքում՝ Սամարրայում ևս հայտնաբերվել են սվաստիկայի պատկերներ (մ.թ.ա. 5-րդ հազարամյակ, Հասունյան մշակույթ), որոնք պատկերված են խեցե ափսեների վրա և ստացվել են երկրաչա-



Նկ.17. Սափոր, Քարաշամբ, մ.թ.ա. 2-րդ հազ. կես

Սափոր, Ավանի իսնուղի, մ.թ.ա. 17–15-րդ դդ.



Խեցանոթ, Վանաձոր, մ.թ.ա. 16–15-րդ դդ.



Խեցանոթ, մ.թ.ա. 2-րդ հազ. կես

Նկ.18. Սափոր, Արթիկ, մ.թ.ա. 2-րդ հազ. կես



Խեցանոթ, Արթիկ, մ.թ.ա. 2-րդ հազ. կես



Խեցանոթ, Լճաշեն, մ.թ.ա. 2-րդ հազ. կես



Խեցանոթ, Հառիճ, մ.թ.ա. 17–16-րդ դդ.

փական պատկերների՝ եռանկյունիների, քառանկյունիների և վազող կենդանիների համադրությամբ: Շատ հետաքրքիր է այդ ափսեներից մեկը, որի վրա պատկերված է Մայր Երկիրը (նկ. 19): Կենտրոնում սվաստիկայի պատկերով արարչագործության երկիրն է՝ Հայկական լեռնաշխարհը, շրջապատված լեռներով: Լեռներից սկիզբ են առնում չորս գետեր (ինչպես Աստվածաշնչում): Մայր Երկիրը շրջապատված է Համաշխարհային օվկիանոսի ջրերով: Այս պատկերը

Նկ.19. Խեցե ափսե Մայր Երկրի պատկերով, Սամարրա, մ.թ.ա. 5-րդ հազ.

Նկ.20. Ծարիրե կախիկ Մայր Երկրի պատկերով, Շամխոր (Գարդման), մ.թ.ա. 2-րդ հազ.



Նկ.21. Շրասեղներ, Լոռի, մ.թ.ա. 2-րդ հազ. վերջ



Նկ.22. ա) Կախիկ, Վանաձոր, մ.թ.ա. 2-րդ հազ. 2-րդ կես

բ) Կախիկ խաչով և ռելիեֆ սվաստիկայով, Հաղարծին



գ) Մեսրոպի զարդ, Լճաշեն, մ.թ.ա. 2-րդ հազ. կես

Նկ.23. Կուռք, Շամարշավան, մ.թ.ա. 1-ին հազ. կես

իմաստային առումով նման է Շամխորից հայտնաբերված ծարիրե կախիկին (մ.թ.ա. 2-րդ հազարամյակ, նկ. 20), ուր կենտրոնում դարձյալ սվաստիկայի պատկերով արարչագործության երկիրն է՝ շրջապատված լեռներով, դրանցից սկիզբ առնող գետերով ու Համաշխարհային օվկիանոսի ջրերով: Ինչպես տեսնում ենք, արարչագործության երկիրը պատկերվում է սվաստիկայի պատկերով՝ Արարչի (Ար Աստված) խորհրդանշանով: Այսպես էին մեր նախնիները պատկերում Մայր Երկրի այն մասը (տարածքը), ուր նրանք արարվել ու բնակվում էին:

Տիեզերական խորհուրդ ունի նաև Մեծամորի քարե կուռքի աջ ականջին պատկերված սվաստիկան՝ առնված



Նկ.24. Կուռք, Մեծամոր, մ.թ.ա. 2-րդ հազ. կես



Նկ.25. Կնիքադրոշմ բազմաճյուղ սվաստիկայի պատկերով, Սառիթեփե, մ.թ.ա. 5–4-րդ հազ.-ներ

Նկ.26. Կնիքադրոշմ, Սառիթեփե (Ուրիք), մ.թ.ա. 5–4-րդ հազ.



Նկ.27. Կնիքադրոշմ, Թոյրեփեփե (Գարդման), մ.թ.ա. 5–4-րդ հազ.-ներ

48777

շրջանակի մեջ: Սվաստիկայից ներքև երկու շրջանակներ են և էլ ավելի փոքր օղակ, որը արքանյակ է հիշեցնում: Հայտնաբերվել են նաև սվաստիկայի պատկերով կնիքադրոշմներ[3] և այլ իրեր, որոնք վկայում են սվաստիկայի պատկերով իրերի լայնորեն օգտագործման և գործածության մասին:



Նկ.28. Կնիքադրոշմ, Մեծամոր, մ.թ.ա. 5–4-րդ հազ.

Սվաստիկայի պատկերով գտածոներ են հայտնաբերվել նաև Հնդկաստանում, Իրանում, Հունաստանում, որոնք թվագրվում են մ.թ.ա. 2-րդ–1-ին հազարամյակներով: Այս գտածոները ևս վերագրվում են արիական ցեղերին, որոնք դուրս գալով նախահայրենիքից, հայտնվել էին այդ և այլ տարածքներում:

301թվականին՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո, հայ վարպետները շարունակել են սվաստիկան օգտագործել որպես խորհրդանիշ և զարդանախշ՝ պատկերելով այն Անիի պարիսպներին, Դվինի եկեղեցիներին, խաչքարերին, միջնադարյան ձեռագիր մատյաններին, նաև խեցեղենի, զորգերի, կարպետների, հագուստների վրա և այլն:

Ինչպես տեսնում ենք, սվաստիկան Հայաստանում պատկերվել է հազարամյակներ շարունակ և հանդիպում է բազմապիսի ձևերով, ինչը չենք հանդիպում այլ երկրներում հայտնաբերված նմուշներում: Հետևաբար, վստահորեն կարող ենք ասել, որ սվաստիկան իբրև **Արարչի, Արևի, Լույսի, Բարու ու Հավերժության խորհրդանիշ** ստեղծվել է արիական ցեղի բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում և, իբրև ընդունված ու հայտնի խորհրդանիշ,

3. Կնիքադրոշմների նկարները ըստ Ա. Փիլիպոսյանի «Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնիքագործության համակարգում» աշխատության, Երևան, 1998թ.:



Նկ.29. Անիի պարիսպը սվաստիկայի պատկերով, 11–12-րդ դդ.



Նկ.30. Խաչքար, Եղեգիս (Յաղաց քար), 1041թ.



Նկ.31. Դվին, բազիլիկայի խճանկարի մի հատված



Մարկոսի ավետարանի անվանաթերթը, նկարիչ Գր. Տաթևացի, 1297թ.

հազարամյակներ շարունակ մշակութային արժեքների վրա պատկերվել ու պահպանվել է արիական ցեղի անմիջական ժառանգների՝ հայ-արմենների կողմից:

1930-ական թվականներին Գերմանիայում իշխանության գլուխ անցան ֆաշիստները: Նրանք իրենց հայտարարեցին արիական ցեղի ժառանգներ և ֆաշիստական Գերմանիայի խորհրդանիշ դարձրին սվաստիկան (ձախ թեքմամբ): Արևի, Լույսի ու Բարու խորհրդանիշը դարձավ չարի և դժբախտության խորհրդանիշ:

Գերմանիան պարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմում: Սակայն մարդկությունը այսօր էլ անվստահությամբ ու անբարյացակամությամբ է նայում սվաստիկային: Սվաստիկան շարունակում է մնալ ֆաշիստների կողմից առաջ քաշված ոչ մարդասիրական գաղափարների խորհրդանիշ: Մինչդեռ Արևի ու Լույսի խորհրդանիշ սվաստիկան կապ չունի մի խումբ մարդկանց կողմից իրականացված հանցագործությունների հետ: Սվաստիկան պետք է մաքրվի և աշխարհի ու մարդկանց կողմից նորից ընկալվի այնպես, ինչպես մեր արևապաշտ նախնիները՝ հայ-արմենները են այն ընկալել, ընդունել ու պահպանել հազարամյակներ շարունակ: **Սվաստիկան Արարչի, Արևի, Լույսի, Բարու և Հավերժության խորհրդանիշն է:**

ԽԱՉ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Արարիչ Ար Աստծո, Արև-Աստծո տարածված խորհրդանիշ է նաև խաչը: Այն բաղկացած է հորիզոնական և ուղղահայաց մեկական գծից, որոնք խաչաձևվում են հիմնականում կենտրոնում: Հանդիպում են քառաթև, հավասարաթև ու անհավասարաթև, շրջանակի մեջ առնված և առանց շրջանակի խաչի պատկերներ:



Նկ.1. Գեղամա ժայռապատկերներ

Նկ.2. Գեղամա ժայռապատկեր

Նկ.3. Խաչաձև միջուկով Երկրի սկավառակը

Խաչի ու նրա բազմազան ձևերի ուսումնասիրության համար շատ կարևոր են հայկական ժայռապատկերները (Գեղամա և Սյունյաց), որոնք թվագրվում են մ.թ.ա. 7–3-րդ հազարամյակներով: Խաչի վաղագույն նմուշներ են Գեղամա լեռների ժայռապատկերների հավասարաթև և Վարդենիսի ոչ հավասարաթև խաչերը, որոնք շատ յուրահատուկ են ու գեղեցիկ: Ուշագրավ է նաև Վարդենիսի ժայռապատկերներից մեկը, ուր պատկերված է խաչաձև միջուկով երկրագունդը, որի վրա կանգնած են չորս թևատարած մարդկային կերպարներ (նկ. 3):

Ուսումնասիրողները հնագույն խաչի պատկերների հանդիպել են Եգիպտոսում, Ասորեստանում, Հունաստանում, Հռոմում և այլ երկրներում: Եգիպտոսում փարավոնները, իբրև աստվածային նշան, վզին կրում էին բրոնզե խաչ, իսկ զգեստներին պատկերում էին խաչեր: Բրոնզե խաչեր են կրել փարավոն Ամենհոտեպ 3-րդը

(մ.թ.ա. 14-րդ դարի սկիզբ), Ամոն–արև աստծո քուրմը, իսկ եգիպտական թագուհի (հայ–միտանական ծագումով) Նեֆերտիտիի խույրին պատկերված է թևավոր խաչ: Խաչի հորիզոնական գիծը թևերի նման է, որը արև–թևավոր խաչ պատկերի հետաքրքիր նմուշ է: Հռոդոսում (Կիպրոս) և Էտրուրիայում (Իտալիա) հայտնաբերված խեցեղենին ևս պատկերված են հավասարաթև խաչեր (մ.թ.ա. 3–2 հազարամյակ): Խաչ է կրել նաև ասուրական Շամշի–Ադադ թագավորը (մ.թ.ա. 824-812 թթ.): Հին Հռոմում վեստալուհիները, որոնք տաճարներում պահպանում էին անշեջ կրակը, իրենց վզին կրում էին խաչ: Հին հռոմեական զենքերին, փոքրասիական (Պոնտոս), եգիպտական, հունա–հռոմեական դրամներին ևս դրոշմվել են խաչեր: Ինչպես տեսնում ենք, հայաստանյան ժայռապատկերների խաչերը հնագույն նմուշների թվին են պատկանում:



Նկ.4. Բրոնզե վահանակներ, Արծվաբերդ, Օշական



ա բ գ դ

Նկ.5. Խաչի պատկերով ծարիրե կախազարդեր, Վանաձոր

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Հայաստանում հնագիտական պեղումները (Ռեսլեր, Ն. Մառ, Յ. դը Մորգան, Է. Շանտր, Խ. Սամվելյան, Հ. Օրբելի) ի հայտ բերեցին բազմաթիվ իրեր Արև-Աստծո, Արևի ու նրա խորհրդանիշերի (խաչ, սվաստիկա, շրջանակ) պատկերով: Ինչպես ժայռապատկերներում, այնպես էլ այս դեպքում ամենից հաճախ հանդիպող խորհրդանիշերից է խաչը:

Հնագիտական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խաչը սվաստիկայի նման սիրված խորհրդանիշ է եղել հայ ռազմիկների համար և

Նկ.6. Բրոնզե կախիկ, Սևանի ավազան



Նկ.7. Զարդեր, Մովսես (Շամշադին)





Նկ.8. Խեցանոթներ, Լճաշեն, մ.թ.ա. 2-րդ հազ. կես



Նկ.9. Խնոցի, Սևան, մ.թ.ա. 2-րդ հազ. կես

Նկ.10. Սափոր (գրաֆաշիշ), Օշական, մ.թ.ա. 4–3-րդ դդ.

հաճախ է պատկերվել զենք-զրահին ու հանդերձանքին: Ռազմական արվեստի գեղեցիկ նմուշ է Ակներից հայտնաբերված արդեն հիշատակված երկաթե դաշույնի բրոնզե պատյանը (մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկիզբ), որի վրա պատկերված են զույգ սվաստիկաներ, իսկ ավելի ներքև՝ շրջանակի մեջ առնված խաչ:

Հայտնաբերվել են նաև խաչի պատկերով բրոնզե վահանակներ, սկավառակներ ու կոճակներ, որոնք մեծ քանակով ամրացվել են զրահաշապիկին ու ոչ միայն պաշտպանել ու պահպանել, այլև զարդարել են կրողին: Այդպիսի գեղեցիկ բրոնզե խաչ-վահանակներ են հայտնաբերվել Արծվաբերդից (Շամշադին) և Օշականից (մ.թ.ա. 13–12-րդ դդ., նկ. 4): Արթիկի դամբարաններից մեկում հայտնաբերվել են հավասարաթև խաչի պատկերով սկավառակներ ու կոճակ (մ.թ.ա. 14–13-րդ դդ.):

Խաչի պատկերով բրոնզե սկավառակներ են հայտնաբերվել նաև Հաղարծնից (նախկինում՝ Ջարխեչ) և Արծվաբերդից: Նշված իրերը թվագրվում են մ.թ.ա. 13–10-րդ դարերով: Մետաղե սկավառակների հետ հանդիպում են նաև մետաղե կոճակներ:

Խաչի պատկերին շատ ենք հանդիպում նաև զարդերի վրա: Մեծ քանակությամբ այդպիսի ականջօղեր, կախազարդեր, գոտու մասեր, ապարանջաններ ու այլ զարդեր են հայտնաբերվել Վանաձորում (Դիմաց թաղ), Լոռի բերդում, Իջևանում, Արթիկում ու այլ վայրերում:

Շատ գեղեցիկ են Վանաձորում հայտնաբերված ծարիրե ինը կախազարդերը, որոնց վրա հիմնականում պատկերված են խաչեր ու սվաստիկաներ (մ.թ.ա. 11–10-րդ դդ., նկ. 5): Դրանցից մեկը շատ յուրօրինակ է, նրա մի երեսին պատկերված է սվաստիկա, մյուսին՝ խաչ, որի 4 թևերին ռելիեֆ կիսագնդեր են (նկ. 5 գ): Կենտրոնում ևս պատկերված է ռելիեֆ կիսագունդ՝ շրջանակի մեջ առնված: Ուշադրության արժանի է նաև Վանաձորում



Նկ.11. Կնիքադրոշմներ, Թեփեջիկ, մ.թ.ա. 5–4-րդ հազ.



Նկ.12. Կնիքադրոշմ, Բարեկամական, մ.թ.ա. 5–4-րդ հազ.



Նկ.13. Կնիքադրոշմ, Քյուլ-թեփե (Կեսարիա) մ.թ.ա. 3-րդ հազ. կես

հայտնաբերված կենտրոնական խաչի ու եռանկյունիների համադրությունից ստացված խաչի պատկերով կախիկը (նկ. 5 դ): Շատ գեղեցիկ է մեկ ուրիշ կախիկ, որ հավանաբար պատկանել է երեխայի, քանի որ իր չափերով փոքր է մյուսներից: Նրա մի երեսին պատկերված է խաչ, մյուսին՝ իրար մեջ հագած անկյուններ (խաչ), իսկ կենտրոնում՝ շեղանկյունի (մ.թ.ա. 11–10-րդ դդ., նկ. 5 ա): Խաչի պատկերով յուրահատուկ ու գեղեցիկ կախիկ է հայտնաբերվել Հաղարծնից: Խաչի կենտրոնում շատ արտահայտիչ, ռելիեֆ սվաստիկա է պատկերված (մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկիզբ, նկարը նախորդ հոդվածում՝ նկ. 22 բ): Խաչի պատկերով ուլունքներ հայտնաբերվել են Արթիկում և Քաղսիում (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կես):

Գեղեցիկ են նաև Սևանի ավազանից հայտնաբերված կախիկը (նկ. 6) և Մովսես գյուղից (Շամշադին) հայտնաբերված երկու զարդեր՝ խաչի պատկերով, որոնցից մեկը կետանախշ է, ծայրերը՝ հովհարաձև (մ.թ.ա. 2-րդ հազ. կես, նկ. 7):

Մեր նախնիները խաչը պատկերելով զարդերին ու զենքերին, հավանաբար այն դիտում էին նաև որպես հմայիլներ, որոնք պետք է կրողին պահպանեին չարից ու դժբախտությունից և հզորություն, ուժ ու բարիք պարգևեին նրան:



Նկ.14. Կուռք, Կարմիր բլուր, մ.թ.ա. 8-րդ դար

Նկ.15. Հեթանոսական դամբարի խոյակ, Արցախ

Նկ.16. Խաչքար, Վերին Թալին, 8-րդ դար



Նկ.17. Խաչքար, Ղուշչի, 8-րդ դար

Խաչի պատկերը մեծ քանակությամբ պատկերված է նաև հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված խեցեղենին, կենցաղային իրերին և այլն: Դրանք կարասներ են, սափորներ, թասեր, գավաթներ, խնոցիներ և այլն: Հայտնաբերվել են նաև հեթանոսական տաճարի խոյակներ, կուռքեր ու կնիքադրոշմներ խաչի պատկերով: Հայաստանում քրիստոնեության տարածումից հետո հայ վարպետները շարունակում են խաչի պատկերը օգտագործել որպես զարդանախշ: Հանդես են գալիս խաչի բազմաթիվ ձևեր՝ կապված արդեն քրիստոնեության հետ: Խաչի պատկերով զարդարում են մատյանները, եկեղեցիները և ճարտարապետական այլ հուշարձաններ: Սակայն խաչի պատկերին հանդիպում ենք նաև աշխարհիկ շինությունների վրա: Խաչ է պատկերված Անիի պարիսպներին, այնտեղ հայտնաբերված խեցանոթներին (11–12-րդ դար):

Խաչի պատկերը օգտագործվել է նաև հայկական նշանագրերում և գաղափարագրերում (ըստ պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանի դրանք ստեղծվել են հայոց տառերի հիման վրա, համառոտագրության համար): Սակայն ժամանակի ընթացքում խաչը կորցրել է Արարչին, Արև-Աստծուն ու արևը խորհրդանշող նշանակությունը և հանդես եկել իբրև քրիստոնեական նշան:

Ո՞ՐՆ Է ՀԱՅ ՑԵՂԻ ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Այս հարցը շատ հաճախ են տալիս հայ գրողները, բանաստեղծները, պատմաբանները և յուրաքանչյուր հայ մարդ, ով քիչ թե շատ ծանոթ է իր ժողովրդի պատմությանը: Իսկապես, ինչպե՞ս և ինչի՞ շնորհիվ է, որ մարդկության պատմության արշալույսից մինչև մեր օրերը գոյություն ունի հայ ցեղը: Եթե հաշվի առնենք այն ծանր փորձությունները, որոնք վիճակվել են հային ու Հայաստանին, իրոք զարմանալ կարելի է, որ հայը գոյատևել է հազարամյակներ շարունակ և չի անհետացել կամ լիովին չի ձուլվել այլ ազգերին:

Հարցի պատասխանը ստանալու համար հայացք նետենք Առաջավոր Ասիայի հնագույն քարտեզներին ու պատմությանը: Աշխարհի հնագույն քարտեզը մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսով թվագրվող շումեր-աքադական քարտեզն է՝ գծագրված աղյուսի վրա: Այնտեղ պատկերված են լեռներ, Տիգրիս ու Եփրատ գետերը և դրանց ակունքների շրջանը՝ Հայկական լեռնաշխարհը, շրջակա տարածքները և Միջագետքը:

Հույն ճանապարհորդ ու աշխարհագիր Հեկատեոս Միլեթացու կողմից մ.թ.ա. 517թ. կազմված քարտեզի շատ ընդարձակ տարածքի վրա գրված է Հայաստան՝ Armenia: Այդ տարածքն ընդգրկում է համարյա ամբողջ արևելյան Փոքր Ասիան (ներառյալ Կիլիկիան), մինչև Կովկասի նախալեռները: Փոքր Ասիայի միայն արևմտյան մասում նշված է Լիդիա: Նկատում ենք, որ Հայաստանը ձգվում է Միջերկրական, Սև և Կասպից ծովերի միջև ընկած տարածքներում:

Մ.թ.ա. 5-րդ դարում կազմված Բաբելական կոչված քարտեզում ընդամենը 6 երկրների շարքում, ինչպես նաև հետագա հռոմեական և այլ քարտեզներում, Հայաստանը միշտ նշված է ընդարձակ տարածքով:

Առաջավոր Ասիայի հնագույն գրավոր աղբյուրները շումերական և աքադական գրավոր տեքստերն են (մ.թ.ա. 4–3-րդ հազարամյակներ), որոնք խոսում են Սուբարտու, Արմանի, Արատտա և այլ հայկական պետական կազմավորումների մասին: Ավելի ուշ շրջանի՝ մ.թ.ա. 3–2-րդ հազամյակների գրավոր աղբյուրները (եգիպտական, խեթական, խուրրիական, բաբելական, ասուրական, արարատ-ուրարտական) խոսում են Նաիրի, Սիտանի, Հայասա, Շուպրիա, Ալզի, Արարատ-Ուրարտու և այլ անուններով հայկական պետա-



Հ. Միլեթացու քարտեզը, մ.թ.ա. 517թ.

կան կազմավորումների մասին, որոնք ստեղծվել են Հայկական լեռնաշխարհում և շրջակա տարածքներում, տարբեր ժամանակներում ունենալով տարբեր սահմաններ:

Մ.թ.ա. 4–3-րդ հազարամյակների գրավոր աղբյուրները (աքադական, խեթական, եգիպտական, խուրրիական) վկայում են, որ Միջերկրական ծովից՝ Կիլիկիայից մինչև Կովկասյան նախալեռներ, Կասպից և Սև ծովերից՝ Միջագետք ընկած ընդարձակ տարածքը մինչև մ.թ.ա. 4–3-րդ հազարամյակները՝ մինչև Արաբական թերակղզուց և Աֆրիկայի հյուսիսային մասերից սեմական ցեղերի (աքադացիներ, բաբելացիներ, արամեացիներ, ասորեստանցիներ, ավելի ուշ հրեաներ, արաբներ) հայտնվելը Միջագետքում, ապա նաև Միջերկրական ծովի արևելյան ափամերձ շրջաններում, բնակեցված էր հայկական (արիական) ցեղերով: Սեմական ցեղերի հայտնվելուց հետո սկսվել են հայկական (արիական) ու սեմական ցեղերի ռազմական բախումները, որոնք տևել են հազարամյակներ:

Արտաքին թշնամուն միասնաբար դիմակայելու համար հայ-արմենները հաճախ միավորվել են մեկ պետության մեջ: Գրավոր աղբյուրների վկայություններով՝ երկրի միավորման հաջող փորձ են կատարել խուրրիական (հայկական) միտանի ցեղի թագավորները մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբնե-

ին: Նրանց հաջողվել է ստեղծել Միտանի ուժեղ պետությունը՝ հզորացած Եգիպտոսի և Խաթթիի դեմ հաջողությամբ պայքարելու համար: Հայկական հաջորդ ուժեղ պետությունը Արարատ-Ուրարտուն էր, որը նույնպես ստեղծվել էր արտաքին թշնամու, այս անգամ հզորացող Ասորեստանի դեմ պայքարելու: Մ.թ.ա. 1-ին դարում նորից ստեղծվել է հայկական հզոր պետություն Տիգրան 2-րդ Մեծի (մ.թ.ա. 95-55) գլխավորությամբ, Հռոմի և Պարթևստանի դեմ պայքարելու: Այդ ժամանակաշրջանի Հայաստանը ձգվում էր Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով և Սև ծովից մինչև Միջագետք: Սրանք Հայաստանի ու հայ-արմենների բնակեցված այն տարածքների սահմաններն են, որոնք մեզ են ներկայանում հնագույն գրավոր աղբյուրների և հնագույն քարտեզների վկայություններով: Այս դեպքում ավելորդ չէ հիշել Մ. Խորենացու մի ուշագրավ վկայությունը: «Հայոց պատմություն» աշխատության մեջ Խորենացին խոսելով Տիգրան Երվանդյանի սխրագործությունների մասին (մ.թ.ա. 1-ին հազարամյակի կես) գրում է. (նա) «մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը»[1]: Ինչպես տեսնում ենք, Խորենացու վկայությունը պատմական հիմք է ունեցել և պատահական արտահայտություն չի եղել:

Մ.թ.ա. 4–3-րդ հազարամյակներում սկսված հայկական (արիական) և սեմական ցեղերի ռազմական բախումները, չնայած հայ ռազմիկների ու հայ զորավարների քաջությանը, արիությանն ու հմտությանը ռազմի դաշտում, դարերի ընթացքում ավարտվել են հայկական ու հայ-արմենների (արիական ցեղերով) բնակեցված տարածքների կորուստներով: Սեմականանում են Միջերկրական ծովի արևելյան ափամերձ շրջանները (Պաղեստին, Հորդանան, Լիբանան, Հյուսիսային Սիրիա), Հարավային Միջագետքը, Հյուսիսային Միջագետքը (Սիրիա, Իրաք) և այլն: Միտանիի անկումից հետո, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերին անընդհատ շարունակվող սեմական ցեղերի ներհոսքի ու ճնշման հետևանքով Հյուսիսային Միջագետքի (Հայկական Միջագետք) բնակչությունը հարթավայրերից մղվում է դեպի լեռներ՝ Աղձնիք ու Սասունի լեռներ (Արմե-Շուպրիա): Կորսվում են նաև Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մասերը (Իրանի հյուսիսարևմտյան մաս, Իրաքի հյուսիսային մաս):

Հայ-արմենների բնակեցված տարածքները կրճատվում են նաև հետագա դարերում: Հայտնվում են խառը բնակչությամբ տարածքներ (հայ-արմեններ-սեմական ցեղեր, ավելի ուշ՝ հայ-արմեններ-թուրքական ցեղեր, քրդեր):

Առաջավոր Ասիայում կազմավորված յուրաքանչյուր նոր պետություն կամ կայսրություն (Հռոմեական, Պարսկական, Բյուզանդական, Արաբական, Օսմանյան) ընդարձակվում ու հզորանում էր ի հաշիվ հայկական տարածքների:

1. *Մ. Խորենացի*, 1981, էջ 85: Նշենք, որ ուսումնասիրողների մեծ մասը այս դեպքերը վերագրում է Տիգրան 2-րդ Մեծին:


ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԻԳՐԱՆ 2-ՐԴ ՄԵԾԻ ԺԱՄԱՆԱԿ (Մ.Թ.Ա. 95-55)
ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ
Տիգրան Մեծի տերությունը Ք.ա. 70թ.
Այլ պետությունների սահմաններ
Տիգրան Մեծի կողից ժամանակավորապես գրավված երկրների և թագավորությունների սահմաններ
Տիգրան Մեծի տերության գերիշխանության ներքո գտնվող թագավորությունների սահմաններ
Տիգրան Մեծի տերությանը ենթակա թագավորությունների և երդվյալների սահմաններ
Մեծ Հայքի թագավորության սահմանները Ք.ա. 66թ.
ԱՐՏԱՇԱՏ Մայրաքաղաքներ
ԱՐՏԱՇԱՏ Թագավորական նստավայրեր
Քարտեզներ
Վան
Մանկիա
Սմբատ
Սմբատ
Սմբատ

(16–17-րդ դդ.), ռուս-պարսկական (19-րդ դարի սկիզբ), ռուս-թուրքական (19–20-րդ դդ.) պատերազմների և թուրքական ու մոնղոլական ներխուժումների, ինչպես նաև սելջուկյան տիրապետության ժամանակ (11–12-րդ դարեր) Հայաստանի հարավային մասեր քրդերի թափանցելու հետևանքով:

Բագրատունիների թագավորության անկումից հետո (1045թ.) Հայաստանը դառնում է ռազմական գործողությունների թատերաբեմ: Երկիրը ամայանում է, ժողովուրդը տեղահանվում կամ փախուստի է դիմում՝ ֆիզիկական գոյությունը պահպանելու համար:

Հայաստանի համար հատկապես ավերիչ են եղել ընդհատումներով շարունակվող թուրք-պարսկական պատերազմները (1514-1639), որոնք ընթացել են Հայաստանի տարածքում: Այդ պատերազմների հետևանքով ամայացել է երկիրը: Տասնյակ հազարավոր հայեր սպանվել, գաղթել կամ տեղահանվել են: Տեղահանությունների ժամանակ բնակիչները հիմնականում ապաստանում էին հայկական այլ տարածքներում: Այսպես մշեցիները հայտնվել են Ջավախքում, էրզրումցիները՝ Շիրակում, պարսկահայերը՝ Արցախում, արցախցիները Լոռու և Իջևանի շրջաններում և այլն:

Ինչպես տեսնում ենք, երկրի մի անկյունից դուրս մղված հայը ապաստանում էր իր երկրի մեկ այլ անկյունում, և հայը որպես հայ էթնոսի ներկայացուցիչ պահպանում էր իր ազգային նկարագիրը: Այս դեպքում շատ մեծ էր ընդարձակ երկիր ու տարածք ունենալու դերն ու նշանակությունը: Հայաստանից դուրս հայտնված հայը, չնայած իր գործադրած վիթխարի ջանքերին (դպրոց, եկեղեցի, մամուլ), ի վերջո կտրվում էր ազգային արմատներից և ձուլվում: Վկան՝ Ֆրանսիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Ռումինիայում, Մոլդովայում, Ուկրաինայում, անգամ Հայաստանին շատ մոտ Վրաստանում և այլ երկրներում միջնադարում ապաստանած հայ բնակչության օրինակն է, երբ այսօր շատ երկրներում պահպանվել են հայկական մշակույթի հետքեր (եկեղեցիներ, շինություններ, ձեռագրեր), իսկ հայ բնակչություն այլևս չկա: Նրանք ձուլվել են տեղացիներին: Եվ միայն հատուկենտ հայերի ժառանգներ են պահպանում ինչ-որ հեռավոր հիշողություն հեռավոր հայրենիքի մասին:

Հայաստանը դարերի ընթացքում ունեցել է ոչ միայն տարածքային, այլև պետականության երկարատև կորուստ: 1045թ. վերացել է Բագրատունյաց թագավորությունը (885-1045): 1375թ. վերացել է Կիլիկյան Հայաստանի թագավորությունը (1080-1375): Եվ հրաշքի նման էր, որ 20-րդ դարի սկզբներին՝ 1918թ. (մայիսի 28) նորից վերականգնվեց հայոց պետականությունը ու ստեղծվեցին նախ Հայաստանի առաջին Հանրապետությունը (մոտ 58.000 կմ2 տարածքով), ապա Խորհրդային Հայաստանը (29.800 քառ. կմ տարածքով): Այսօր՝ 21-րդ դարի սկզբին ունենք Հայաստանի Հանրապետություն (29.800

Հայաստանը 21-րդ դարի սկզբին

քառ. կմ տարածքով), Արցախի Հանրապետություն (12.000 քառ. կմ տարածքով) և հայաբնակ Ջավախք Վրաստանի կազմում:

Ինչպես տեսնում ենք, հայ ժողովուրդը սեղմվել է իր հայրենիքում: Հազարամյակների ու դարերի ընթացքում հայերի հարևանությամբ հայտնված եկվորներին հաջողվել է դիվանագիտական ճանապարհով, խաբեությամբ, խարդավանքով, ռազմական ուժով և այլ միջոցներով տեր դառնալ հայկական տարածքներին ու երբևէ ընդարձակ Հայաստան երկրին:

Նորից անդրադառնանք վերը հնչած հարցին, ինչպե՞ս է, որ Հայաստանը և հայ ժողովուրդը դիմացել են դարերի փորձությանը և չեն անհետացել պատմության թատերաբեմից, ինչպես իր հնագույն հարևաններ Շումերը, Աքադը, Էլամը, Բաբելոնը, Խաթթին, Եգիպտոսը, Ասորեստանը և այլ պետություններ: Հարցին միանշանակ կարելի է պատասխանել. **դիմացել է իր ընդարձակ տարածքների շնորհիվ:** Անհետացած պետությունները Հայաստանի հետ համեմատած տարածքով փոքր էին և հաճախ մեկ ճակատամարտում պարտվելը բավական էր երկրի կործանման ու պատմության թատերաբեմից անհետանալու համար: Այսպես. երբ մ.թ.ա. 612թ. Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն գրավվեց մարերի, հայերի ու բաբելացիների կողմից, Ասորեստանը

դադարեց գոյություն ունենալ: Երբ մ.թ.ա. 592թ. Բաբելոնը գրավվեց մարերի, հայերի և սկյութների կողմից, Բաբելոն պետությունը ևս դադարեց գոյություն ունենալ և այլն: Այլ է եղել Հայաստանի դեպքում: Հայաստանը ընդարձակ երկիր էր և երբ թշնամին գրավել է երկրի մի մասը, ապա ժողովուրդը նահանջել, սեղմվել է իր տարածքում: Այս երևույթը կրկնվել է բազմաթիվ անգամներ, և հայ ժողովուրդը անընդհատ կորցրել է իր երկրի, իր հայրենիքի ինչ-որ մասը: Ժամանակի ընթացքում կորուստը մեծացել է, նկատելի դարձել և այժմ՝ 21-րդ դարի սկզբին ունենք փոքր Հայաստան երկիր, Արցախ, հայաբնակ Ջավախք ու հայաթափված բազմաթիվ տարածքներ: Պետք է նշել, որ այլ օբյեկտիվ պատճառներից բացի, նաև այս վիճակն էր (փոքր Հայաստան) պատճառը, որ 20-րդ դարի վերջերին իր բնօրրանից տեղահանված աղբեջանահայությունը (Գանձակ, Գարդման) չկարողացավ ապաստանել այսօրվա Հայաստանում և ցրվեց՝ տեղավորվելով հիմնականում Ռուսաստանի հարավային մասերում, էլ ավելի մեծացնելով Հյուսիսային Կովկասում, Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում ապրող հայ բնակչության թիվը:

Այսպիսով, մեր պատմությունը և անցյալի դասերը հուշում են, որ հայ ժողովրդի ապագան, նրա անվտանգությունը և ապահովությունը պահանջում են այլևս չզիջել անգամ մեկ թիզ հող: Նահանջելու տեղ այլևս չունենք և իրավունք չունենք որևէ տարածք կորցնելու, զիջելու: Սա պետք է հասկանանք ու հասկացնենք, բացատրենք նաև ուրիշներին: Ոչ ոք իրավունք չունի մեզ պարտադրելու կամ ստիպելու, որ հանձնենք բռնագրավված մեր հայրենիքի ազատագրված տարածքները:

Չբացառելով հայ մարդու ոգու ամրությունը, նրա համամարդկային ու բարոյական բարձր հատկանիշներով օժտված լինելը, հայ ռազմիկի արիությունն ու քաջությունը, նաև հոգևոր, մշակութային, տնտեսական և այլ հարցերի կարևորությունը ազգի գոյատևման ու առաջընթացի համար, այնուամենայնիվ պետք է նշել, որ ազգը գոյատևում է իր երկրում, իր տարածքների վրա: Հետևաբար՝ **հազարամյակների փորձությանը հայ ազգը առաջին հերթին դիմացել է իր ընդարձակ երկրի ու տարածքների շնորհիվ:**

ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ՌԱԶՄԻԿԻ ՄԱՍԻՆ

Հայոց պատմության հնագույն շրջանի մասին քիչ գրավոր աղբյուրներ են մեզ հասել, ընդ որում դրանք հիմնականում օտար թագավորների կողմից գրված արձանագրություններ են, որոնք լի են պարծենկոտ հայտարարություններով ու իրենց անձը փառաբանող արտահայտություններով:

Այդ արձանագրություններից (աքադական, եգիպտական, խեթական, ասուրական) հայտնի է դառնում, որ հին աշխարհի համարյա բոլոր ուժեղ պետությունները փորձել են նվաճել Հայկական լեռնաշխարհը: Սակայն դա այնքան էլ հեշտ չի եղել, որովհետև Հայաստանը միշտ ունեցել է հմուտ ու քաջարի պաշտպաններ, որոնց հաղթելը դյուրին չի եղել: Հայերը (արձանագրություններում՝ խուրրիներ, միտանիներ, կուտիներ, հիքսոս-հաքսոսներ, հայասացիներ, նաիրցիներ, ուրարտացիներ) ոչ միայն հմուտ ու քաջարի ռազմիկներ էին, այլև զինված էին ժամանակի լավագույն զենքերով: Ընդունված է, որ Հայաստանը մետաղների մշակման և ձիու ընտելացման հայրենիքն է, հետևաբար հայ ռազմիկները զինված են եղել մետաղե զենքերով, ունեցել են ձիեր ու մարտակառքեր, որոնք էլ անշուշտ նպաստել են նրանց հաջողությանը մարտի դաշտում:

Հնագույն գրավոր աղբյուրները, պատկերները ու քանդակները վկայում են, որ հայոց զորքը հիմնականում կազմված է եղել հետևակից, հեծելազորից և մարտակառքերից: Հայերը մեծ ուշադրություն են դարձրել պատանիների ու երիտասարդների ռազմական դաստիարակությանն ու պատրաստվածությանը: Եղել են հատուկ ռազմական բազաներ, ուր ավագները իրենց հարուստ փորձը հաղորդել են կրտսերներին: Այսպես, հայոց հնագույն պետության՝ Արարատ-Ուրարտուի արքա Մենուան (810-786) Վան քաղաքի շրջակայքում ունեցել է մարգարան, ուր մարզվելու ժամանակ նրա Արծիբի (Արծիվ) անունով ձին, որի վրա նստած է եղել ինքը՝ Մենուան, ցատկել է 22 կանգուն[1]: Վանից հայտնաբերված մեկ այլ արձանագրություն, որը պատկանում է Արգիշտի 2-րդին (713-685), վկայում է. «Արգիշտե Ռուսայորդին նետը վերագցեց հենց այս

1. Մեկ կանգունը 51,8 սմ է, հետևաբար Մենուայի ձին ցատկել է 11 մ 39 սմ, որը մոտ 2800 տարի մնում էր չգերազանցված և միայն 1975 թ. գերմանացի Բերգմանը իր Սվինգեր նժույգով ցատկեց 22 մ 16 սմ (УКН, М. 1960, 110, с. 205, ՀԺՊՔ, էջ 52):

տեղից՝ Գիլուարա (գյուղի) անտառի առջևից մինչև Իշպիլե Բատուրդու այգին՝ ինը հարյուր հիսուն կանգուն»: Հաշվարկները ցույց են տալիս, որ Արգիշտի արքան նետը արձակել է 492 մետր[2]:

Հնագույն գրավոր աղբյուրները վկայում են Հայկական լեռնաշխարհի բնակիչների՝ հայկական ցեղերի դեպի հարավ, արևմուտք ու հարավ-արևմուտք կատարած խոշոր ռազմական արշավանքների մասին: Անդրադառնանք երկու խոշոր ռազմական արշավանքների: Մ.թ.ա. 22-րդ դարի վերջերին Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մասերից՝ Կորդվաց լեռներից խոշոր մի արշավանք է կազմակերպվել դեպի Հարավային (Ստորին) Միջագետք, ուր ստեղծվել էր Աքադ պետությունը: Աքադի միապետների դեպի հարևան երկրներ, նաև Հայկական լեռնաշխարհ հաճախակի կազմակերպվող արշավանքները, որոնք ուղեկցվում էին սպանություններով, ավերով ու թալանով, մեծ անհանգստություն էին պատճառում բնակիչներին: Կորդվաց լեռների բնակիչների՝ կուտիների (նաև գուտիներ) կազմակերպած արշավանքը, որը գլխավորում էր ցեղի առաջնորդ Էնրիդավիզիրը, նպատակ ուներ վերջ տալ աքադացիների կողոպտչական ներխուժումներին: Հայտնի է, որ գոռոզ ու դաժան տիրակալ Նարամ-Սուենը սպանվել է կուտիների հետ տեղի ունեցած մի ճակատամարտում մոտավորապես մ.թ.ա. 2200 թ., որից հետո կուտիների առաջնորդ ու զորավար Էնրիդավիզիրը իրեն է վերցրել սպանված Նարամ-Սուենի «աշխարհի չորս կողմերի թագավոր» տիտղոսը: Ենթադրվում է, որ Էնրիդավիզիրը առաջնորդել է թեթևազեն հետիոտն բանակը (այդպիսին էր նաև աքադացիների բանակը): Էնրիդավիզիրը ոչ միայն փայլուն զորավար էր, այլև հմուտ կազմակերպիչ, քանի որ մեծ հաջողությամբ իրագործել է այն նպատակը, որի համար ուղարկվել էր Հարավային Միջագետք՝ վերջ տալ Նարամ-Սուենի բռնապետությանը և բոլոր ցեղերի համար խաղաղ գոյակցության պայմաններ ստեղծել:

Հնագույն գրավոր աղբյուրները վկայում են Հայկական լեռնաշխարհից կատարված մեկ այլ սրընթաց ռազմական արշավանքի մասին ևս, որը մինչև այսօր զարմանք ու հիացմունք է պատճառում ուսումնասիրողներին: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներից եգիպտական փարավոնները շատ հաճախ կողոպտչական արշավանքներ էին կազմակերպում դեպի հարևան երկրներ: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին երկրում աճում է դժգոհությունը 13-րդ դինաստիայի փարավոնների դեմ: Հավանաբար ոչ պատահականորեն հենց այս ժամանակ՝ մոտ մ.թ.ա. 1700 թ. հյուսիս-արևելքից՝ Խուրրի երկրից Եգիպտոս են ներխուժում անխոցելի զրահներով և սուր, հատող սրերով

2. УКН, 277, էջ 339, ՀԺՊՔ, էջ 87:



Շումերական հեծելակ, մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 1-ին կես (այսպիսին էր նաև հայկական (կուտիներ) թեթևազեն հեծելակը)



Վահանակիր շումերական ֆալանգա, մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կես

զինված, մարտակառքեր վարող, լեռնական քաջ ռազմիկներից բաղկացած ջոկատներ, որոնց առաջնորդում էին Սալիտիս, Հիան, Ապոպի, Յակոբեր անունով զորավարները: Եգիպտացի պատմիչ Մանեթոնը (մ.թ.ա. 4–3-րդ դդ.) դառնությամբ գրում է, որ այս ռազմիկները, որոնց կոչում էին հիքսոսներ (կամ հաքսոսներ), դյուրությամբ տիրեցին մեր աշխարհին: Այս ռազմիկները զինված էին մետաղե (երկաթե) ամուր զենքերով ու պաշտպանված անխոցելի զրահներով: Անխոցելի զրահներով էին պաշտպանված նաև ձիերն ու մարտակառքերը: Այսպիսի զորքի դեմ անզոր էր եգիպտական հետիոտն բանակը, որը զինված էր բրոնզե զենքերով: Եվ Եգիպտոսը նվաճվեց հիքսոսների կողմից ու մոտ 110 տարի նրանք իշխում էին Եգիպտոսում: Այս առումով պատահական չպետք է համարել, որ 17-րդ ու 18-րդ դինաստիաների փարավոնների ժամանակ, իշխանությունը նորից իրենց ձեռքը վերցնելուց հետո (մ.թ.ա. 1580 թ. Յահմոս 1-ինը գրավեց հիքսոսների հիմնած մայրաքաղաք Ավարիսը) եգիպտացիները պատերազմ սկսեցին Միտանիի (Խուրրի-Միտանի) դեմ, այդ երկիրը համարելով իրենց դժբախտության պատճառը:



Հայ (հիքսոս) ռազմիկները մարտակառքով, մ.թ.ա. 2-րդ հազ. կեսը

Հայկական լեռնաշխարհից կատարված այս երկու խոշոր արշավանքները սոսկ արշավանքներ չէին: Անկասկած դրանք նպաստել են պատմական, քաղաքական, մշակութային և այլ իրադարձությունների արագ զարգացմանն ու առաջընթացին: Այսպես. հիքսոսները Եգիպտոս տարան երկաթե զենքեր ու ձիեր, կուտիները վերջ տվեցին աքադական միապետների բռնակալությանը Միջագետքում և հաստատեցին խաղաղություն ու այնպիսի կարգեր, երբ Միջագետքը հաճախ ղեկավարվում էր ընտրված կառավարիչների միջոցով: Համեմատության համար նշենք, որ մինչև հռոմեական արշավանքները նույնպիսի խաղաղ իրավիճակ էր տիրում նաև Տիգրան 2-րդ Մեծի հսկայածավալ պետության ներսում: Այդ մասին Պոմպեոս Տրոգոսը գրում է, որ Տիգրան արքան կառավարում էր ամենայն հանգստությամբ, նա պատերազմով չէր խաթարում այլոց հանգիստը և ոչ ոք նրան անհանգստություն չէր պատճառում, այնպես որ պատերազմելու անհրաժեշտություն չկար:

Վահանակիր հեծյալ, մ.թ.ա. 3-րդ հազ. վերջ

Հայկական լեռնաշխարհի բնակիչները՝ հայերը գերազանց ռազմիկներ էին, որոնց հարգում ու գնահատում էին անգամ թշնամիները: Նրանց հաճույքով էին ծառայության վերցնում հարևան բոլոր թագավորները: Խեթական թագավոր Մուրսիլիս 2-րդի (1340-1320) մի արձանագրությունից հայտնի է դառնում, որ 3000 հայ ռազմիկներ ծառայության են վերցվել խեթական թագավորի կողմից՝ որպես հետևակ ու մարտակառք վարողներ: Հայ-խեթական հարաբերությունների՝ հիմնականում փոխադարձ արշավանքների մասին տեղեկություններ կան մ.թ.ա. 15–14-րդ դարերի խեթական թագավորների արձանագրություններում: Հնագույն խեթական արձանագրությունը, որ տեղեկություններ է տալիս դեպի Հայասա կատարված արշավանքների մասին, պատկանում է Մուրսիլիս 2-րդին: Մուրսիլիսը պատմում է իր պապի՝ Թութհալիա 3-րդի (1400-1380) արշավանքների մասին: Այդ արձանագրությունից հայտնի է դառնում, որ Թութհալիա 3-րդը անսպասելի հարձակվել է Հայասայի վրա և հաջողություն ունեցել: Սակայն կարճ է տևել նրա հաջողությունը, որովհետև հայերը արագ վերադասավորել են իրենց ուժերը և խեթերին դուրս շպրտել երկրից: Խեթական թագավորը մեծ ուժերով նորից է արշավանք ձեռնարկել դեպի Հայասա: Այս անգամ նա բախվել է հայոց բանակին («հետիոտն զինվորներ և կառամարտիկներ»), որին գլխավորում էր Հայասայի թագավոր Կարաննին: Գլխավոր ճակատամարտը տեղի է ունեցել Եփրատ գետի աջ ափին՝ Կումմախա (Կոմագեն, Մալաթիայից հարավ) քաղաքի մոտակայքում: Այս ճակատամարտում խեթերին չի հաջողվել վճռական հաղթանակի հասնել, քանի որ հետագայում նրանք բազմաթիվ նոր արշավանքներ են ձեռնարկել դեպի Հայկական լեռնաշխարհ:



Բարձրակող սայլ (մարտակառք), Լճաշեն, մ.թ.ա. 2-րդ հազ. կեսը

Խեթերի հաջորդ ընդհարումը հայերի հետ եղել է Սուպիլուլիումաս 1-ինի օրոք (1380-1340), երբ հայոց ծերացած թագավոր Հուկաննան գերադասել է հաշտության պայմանագիր կնքել խեթերի հետ: Ստորագրված պայմանագրի համաձայն հայերը պետք է ռազմական օգնություն ցույց տային խեթերին այլ երկրներ կատարած նրանց արշավանքների ժամանակ, հայոց թագավորը պետք է պահպաներ իրեն հայտնի ռազմական գաղտնիքները խեթերի արշավանքների մասին և այլն: Խաղաղության այս պայմանագիրը ձեռնտու էր խեթերին, քանի որ նրանց հաջողվում էր ժամանակավորապես մեկուսացնել հայերին և նույնիսկ օգտագործել նրանց ռազմական ուժը իրենց արշավանքների ժամանակ:

Հետագա արձանագրություններից հայտնի է դառնում, որ երբ խեթական թագավոր Մուրսիլիս 2-րդը երկարատև պատերազմի մեջ է եղել իր մեկ այլ հարևանի հետ, հայոց թագավորը՝ Մարիասի որդի Անիասը հաճախակի արշավանքներ է կազմակերպել դեպի խեթերի երկիր: Այդ արշավանքներից մեկի ժամանակ Անիասը մեծ քանակությամբ գերիներ ու ավար է վերցրել: Մուրսիլիսը պահանջել է հետ վերադարձնել դրանք, սակայն մերժում է ստացել: Դրանից հետո խեթերը վերսկսել են ռազմական գործողությունները, որոնք շարունակվել են մոտ չորս տարի և հաջողություն չեն բերել ոչ մեկին: Մ.թ.ա. 1330 թ. Մուրսիլիսը մեծ ուժերով անցել է վճռական հարձակման: Հայերը փորձել են օգտագործել իրենց լեռներն ու ամրոցները, բայց խեթերը շրջանցել



Բրոնզե գոտի, Մեծամոր, մ.թ.ա. 2-րդ հազ. կես

են այդ ամրությունները, դուրս եկել չպաշտպանված բնակավայրերի մոտ ու մեծ կորուստների գնով գրավել դրանք: Սակայն խեթերը չեն կարողացել իրենց տիրապետությունը հաստատել Հայաստանում, քանի որ հետագա վավերագրերից հայտնի է դառնում, որ մ.թ.ա. 14–13-րդ դարերում հայերը դաշինքի մեջ են եղել խեթերի հետ, չլինելով խեթական թագավորության կազմում:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսից Փոքր Ասիայի արևմտյան մասին և Միջերկրական ծովի արևելյան ափերին տիրելու համար պայքարի մեջ են մտնում Եգիպտոսը և Հայկական լեռնաշխարհի հարավում կազմավորված մեկ այլ հայկական պետություն՝ Միտանին (Խուրրի-Միտանի): Մոտ մեկ դար տեղի են ունեցել ռազմական բախումներ, որոնք ընթացել են փոփոխակի հաջողություններով:

Հայկական լեռնաշխարհում միշտ պատվավոր զբաղմունք է համարվել զինվորական գործը՝ հայրենիքի պաշտպանությունը: Հայկական լեռնաշխարհում կազմավորված բոլոր պետական միավորումներում, բարձրագույն էլիտար դասի մեջ են մտել այն ազնվականները, որոնց հիմնական զբաղմունքը զինվորական գործն էր: Այդ դասը Միտանիում կոչվում էր marjanni մարյանի:

Ընդունված կարծիքի համաձայն՝ marjanni-ն «երիտասարդ տղամարդ, մարտիկ» իմաստներն ունի: Հայկական լեռնաշխարհի հյուսիսում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին կազմավորված Հայասա պետության թագավորը կոչվում էր marja (marija), որը «թագավոր, առաջնորդ» իմաստներն ունի: Ի դեպ, արամեերենում հանդիպող mar բառն ուսումնասիրողները արիական փոխառություն են համարում, որի նախնական իմաստը «այր, արք» է եղել[3]: Հետևաբար կարելի է ասել, որ marjanni-ն «առաջնորդ, այր, տղամարդ, մարտիկ, ռազմիկ» իմաստներն ունի, որը միանգամայն համապատասխանում է այն դերին, որը նախատեսված էր նրա համար: Այն է. առաջնորդել զորքը և լինել քաջ ու արի այր, տղամարդ:

Ազնվական մարյանիները կազմում էին ընտրովի հեծյալ զորք (այրուձի), որն էլ վճռում էր ճակատամարտի ելքը: Մարյանիները քաջ, արի ու հմուտ հեծյալներն էին, լավ զինված, ունեին մետաղե (երկաթե) զենքեր ու պաշտպանված էին մետաղե զրահներով: Պաշտպանված էին նաև նրանց ձիերը և մարտակառքերը (հիշենք հաքսոս-հիքսոսներին): Դժվար էր մարյանիին գերի վերցնելը: Նրանք գերադասում էին մեռնել, քան գերի ընկնել թշնամու ձեռքը: Այդ են վկայում եգիպտական փարավոնների արձանագրությունները, ուր նրանք հատուկ շեշտում են յուրաքանչյուր գերի ընկած mrjn-մարյանիի մասին: Գերված մարյանիների թիվը շատ քիչ է եղել: Այսպես. Թութմոս 3-րդը (մ.թ.ա. 1508-1449) հայտնում է, որ գերել է հինգ mrjn, նրա զորավար Ամենեմխեբը՝ երկու mrjn: Գերիների ամենամեծ թիվը հանդիպում է Թութմոս 3-րդի հաջորդի՝ Ամենհոտեպ 2-րդի (մ.թ.ա. 15-րդ դարի 2-րդ կես) արձանագրության մեջ: Նա հայտնում է, որ գերել է 550 կենդանի mrjn[4]:



Զրահաշապիկ, Գոլովինո (Դիլիջան), մ.թ.ա. 2-րդ հազ. կես





Ճակատակալներ, Լոռի բերդ, մ.թ.ա. 12–11-րդ դդ.



Ճակատակալ, Արծվանիկ, Դաիան, մ.թ.ա. 2–1-ին հազ.-ներ

3. ՀԱ, 1913, ապրիլ, էջ 208:
4. Նույն տեղում, էջ 203:



Հայ (խուրրի) ռազմիկները զուրգով և նիզակով, պարկեր միրանյան կնիքից, մ.թ.ա. 2-րդ հազ. կես



Հայ ռազմիկները մարտակառքով, Մալաթիա, մ.թ.ա. 2-րդ հազ. կես

Եգիպտոսի դեմ պատերազմելիս խուրրիները օգտվել են հետախույզների ծառայություններից: Այսպես. եգիպտական գրավոր աղբյուրները հայտնում են, որ փարավոն Ամենհոտեպ 2-րդին հաջողվել է բռնել Միտանիի թագավոր Սաուսադատտարի հետախույզին, որը վզին կապված նամակ էր տանում Եգիպտոսի դեմ պայքարող Սիրիա-Պաղեստինի մանր թագավորությունների տիրակալներին[5]: Երկար տարիներ պատերազմելուց հետո, համոզվում են, որ ռազմական ուժով իրենք համազոր պետություններ են և երկուսի համար էլ ավելի շահավետ է ոչ թե պատերազմը շարունակել, այլ փոխհամաձայնության գալ: Որոշվում է վիճելի տարածքները բաժանել ազդեցության ոլորտների, հյուսիսային Սիրիան անցնում է Միտանիին, իսկ հարավային Սիրիան և Պաղեստինը՝ Եգիպտոսին: Միտանիի և Եգիպտոսի բարեկամությունը ամրապնդվում է նաև ամուսնություններով: Այս ժամանակաշրջանում Եգիպտոս հարս են գնում Հայկական լեռնաշխարհի չորս արքայադուստրեր, որոնցից մեկը հանրահայտ գեղեցկուհի Նեֆերտիտին էր: Նշենք նաև, որ եգիպտական փարավոնները իրենց նամակներում Միտանիի թագավորներին դիմում էին «իմ եղբայր», «Միտանիի մեծ թագավոր» արտահայտություններով: Նույն ձևով էլ նրանց էին դիմում Միտանիի թագավորները: Դիմելու այս ձևը բացառիկ դեպքերում էին օգտագործում փարավոնները: Բոլորին չէ, որ նրանք եղբայր էին անվանում, կամ թույլ տալիս,

5. ИДВ, I, М. 1983, с. 224, II, с. 242.

որ այդպես կոչեն իրենց: Սա յուրահատուկ հարգանքի ու վստահության արտահայտություն էր:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսից ռազմական ընդհարումներ են եղել նաև խուրրիների և խեթերի միջև: Իր արշավանքներից մեկի ժամանակ խեթական Խաթթուսիլիս 1-ին (մ.թ.ա. 18-րդ դարի սկիզբ) թագավորին հաջողվել է անցնել Եփրատ գետը ու գրավել մի շարք քաղաքներ, այդ թվում Խախուն, որն այնուհետև հրի է մատնել: Այդ մասին Խաթթուսիլիսը պարծենկոտությամբ գրել է. որ Խախուն Սարգոն Հինը (Աքադի թագավորը) անգամ չի կարողացել գրավել, իսկ ինքը գրավել ու այրել է այն[6]: Սակայն պատասխան հարվածը չի ուշացել: Խաթթուսիլիս 1-ինի թագավորության 4-րդ տարում, երբ թագավորը արշավանքի մեջ էր և գտնվում էր Արցավայում (Լուվիա, Փոքր Ասիայի հարավային ծովեզերք), խուրրիները հարձակվում են Խաթթիի վրա ու գրավում մի շարք քաղաքներ, այդ թվում՝ Կուսսարի մայրաքաղաքը:

Խեթական հաջորդ թագավորները՝ Մուրսիլիս 1-ինը (մ.թ.ա. 16-րդ դարի սկիզբ) և Խանտիլին (մ.թ.ա. 16-րդ դարի 1-ին կես) նորից փորձում են ներխուժել Հայկական Միջագետք՝ խուրրիների ազդեցության տակ գտնվող տարածքներ: Սակայն խուրրիները նորից հարված են հասցնում Խաթթին, որին ի դեպ, ըստ հին խեթական տեքստերի, սպասում էին խեթերը, պատրաստի վիճակում պահելով իրենց սահմանային զորքը: Հավանաբար խեթերը հասկացել էին, որ իրենց դեմ պայքարում խուրրիները այլ մարտավարություն են ընտրել. անսպասելի և սրընթաց հարվածել երկրին ու մայրաքաղաքին, երբ թագավորը գտնվում էր արշավանքի մեջ: Նշենք, որ այս մարտավարությունը իրեն լիովին արդարացնում էր: Այս դեպքում ևս, երբ Խանտիլին դեպի Հյուսիսային Սիրիա կատարած իր հաջող արշավանքից հետո գտնվում էր Թոգարամայում (Թոգարմա), խուրրիները սրընթաց (հավանաբար այրուձի) ներխուժել են Խաթթի: «Խուրրիները... սրընթաց արշավով... բարձր բացականչություններով... Խաթթի երկիրը մտան...»[7] - գրում են խեթական տեքստերը:

Խուրրի-խեթական ռազմական ընդհարումները շարունակվում են մինչև երկու երկրների անհետանալը պատմական ասպարեզից: Եվ եթե խեթական թագավորությունը շարունակություն չունեցավ ու խեթերը վերացան որպես ժողովուրդ ու պետություն, ապա Միտանիի պատմությունը շարունակվեց Հայկական լեռնաշխարհում այլ պետական կազմավորումների (Նաիրի, Արմե-Շուպրիա) ու պետությունների (Արարատ-Ուրարտու) կազմավորմամբ:

6. ИДВ, II, М. 1988, с. 130.
7. ВДИ, 1969, I, с. 82.

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերին և 1-ին հազարամյակի սկզբներին պատմական ասպարեզում հայտնվում է նոր երկիր՝ հզորացած Ասորեստանը: Նշենք, որ Ասորեստանը (նախկին Աշշուրի թագավորությունը) հզորանում էր ի հաշիվ թուլացող Միտանիից խլված հողերի, հատկապես Տիգրիսից արևելք ընկած տարածքների: Այս երկիրը ևս բազմաթիվ արշավանքներ է կազմակերպում դեպի Հայկական լեռնաշխարհ: Մ.թ.ա. 13-րդ դարում Ասորեստանի թագավորները Հայաստանի համար օգտագործում են նաև Նաիրի անունը: Իրենց արձանագրություններում նրանք պատմում են դեպի Նաիրի երկիր կատարած արշավանքների մասին: Նրանցից մեկը՝ Թիգլաթպալասար 1-ինը (1115-1077) վեց արշավանք է կազմակերպել դեպի Հայկական լեռնաշխարհ: Իր արձանագրություններում նա հայտնում է, որ ինքը մեծ պատասխանատվությամբ է նախապատրաստվել դեպի Նաիրի երկիր կատարվող արշավանքներին, քանի որ այդ երկիրն ընդարձակ, անծանոթ ու երբևէ չնվաճված երկիր է, որի «շատ ճանապարհներին ոտք չեն դրել այլ երկրների թագավորներ»[8]: Այդ մասին գրել են նաև Ասորեստանի այլ թագավորներ՝ Թիկուլթի-Նինուրթան (1243-1221), Աշշուրբելկալը (1076-1059)[9] և ուրիշներ:

Ասորեստանի թագավորների արձանագրությունները լի են դաժանության, թալանի ու կոտորածների սարսափելի նկարագրություններով: Սակայն այդքան հաճախակի կազմակերպվող արշավանքները վկայում են այն մասին, որ ասորեստանցիներին երբեք չի հաջողվել մեծ հաջողություններ ունենալ: Նրանց դեմ միշտ դուրս էին գալիս հայոց միացյալ ուժերը, որոնց հաղթելը հեշտ չէր: Չնայած մեծամտությանը, այդ մասին անգամ Ասորեստանի թագավորներն են հիշատակում իրենց արձանագրություններում: Այսպես Թիկուլթի-Նինուրթան արձանագրության մեջ վկայում է «նաիրցի մարտիկների հանդուգն քաջության ու մարտական ոգու մասին»[10]: Թիգլաթպալասար 1-ինը գրում է, որ պատանդ է վերցրել Նաիրի երկրների թագավորների «հպարտ որդիներին», որոնց սակայն ազատ է արձակել փրկագին ստանալուց հետո (1200 ձի, 2000 խոշոր եղջերավոր անասուն)[11]: Սարգոն 2-րդը (721-705) իր արձանագրություններում խոսելով դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքների, թալանի, կոտորածների ու ավերածությունների մասին, գրում է. «... իմ հպարտ թշնամիների վրա հաղթանակ տարա»[12]: Նշենք, որ Ասորեստանի թագավորները «հպարտ» են անվանում պարտվող կողմի մարտիկներին: Ասորեստանցի մի այլ

8. АВИИУ, ВДИ, 1951, № 2-3, 10 (III, 35).
9. АВИИУ, 3, 19.
10. АВИИУ, 3.
11. АВИИУ, 10 (IV, 43).
12. ՀԺՊՔ, էջ 31:

թագավոր՝ Թիգլաթպալասար 1-ինը «հպարտ ու անհնազանդ» է անվանում Նաիրի (նաև Խանիգալբատ) երկրի Մելիդիա (Մալաթիա) քաղաքի բնակիչներին, որոնց համառությունը կոտրել է իր 4-րդ արշավանքի ժամանակ: Հետաքրքիր են Ասորեստանի մեկ այլ թագավորի՝ Ասարհադոնի (680-669) նամակները՝ ուղղված Արմե-Շուպրիայի (Սասուն) թագավորին: Արմե-Շուպրիա փախած իր հպատակներին (հավանաբար հայ) ետ ստանալու համար Ասարհադոնը 4 նամակ է ուղարկել հայ թագավորին, որը չի բավարարել Ասորեստանի թագավորի պահանջը: Չայրացած Ասարհադոնը իր 3-րդ նամակում գրում է. «Լսված է, որ հզոր թագավորի խոսքը երկրորդ անգամ կրկնվի, իսկ ես հզոր թագավորս, երեք անգամ գրում եմ քեզ...: Քանի որ դու չես վախենում իմ սպառնալիքներից, մի կողմ չես նետում քո հպարտությունը, դրանով դու դրդում ես ինձ պատյանից հանել Աշշուրի հզոր զենքը և պատրաստվել արշավանքի»[13]:

Արքան (հավանաբար Արգիշտի 1-ինը) մարտակառքով, Էրեբունի, որմնանկար, մ.թ.ա. 8-րդ դար

Արմե-Շուպրիայի թագավորի այս հանդգնությունը անշուշտ պայմանավորված էր ինքն իրեն ուժեղ զգալու հանգամանքով: Նշենք, որ երկար նախապատրաստությունից հետո միայն (մոտ 8 տարի), մ.թ.ա. 673 թ. Ասարհադոնը արշավանք է կազմակերպում դեպի Արմե-Շուպրիա, որի արդյունքները շատ չնչին էին սպառնալիքների համեմատ (ստրուկների հարցաքննություն, նրանց վերադարձը տերերին և այլն):

Ասորեստանի թագավորների այդքան հաճախակի կրկնվող արշավանքները պատճառ են դառնում, որ նորից միավորվեն Հայկական լեռնաշխարհի բոլոր մանր ու մեծ պետական կազմավորումները: Եվ արտաքին թշնամու դեմ մղված պայքարում կազմավորվում ու պատմական ասպարեզ է իջնում հայոց մեկ այլ հզոր պետություն՝ Ուրարտուն (Արարատ):

Մ.թ.ա. 9-րդ դարից սկսած հայոց զորքը Արամե, Սարդուր, Մենուա, Արգիշտի, Ռուսա և այլ թագավորների (նրանք նաև զորահրամանատարներ

13. АВИИУ, 67 (g).



Հայ (ուրարտացի) հեծյալ ռազմիկներ, բրոնզե զոտու բեկորներ, մ.թ.ա. 9–8-րդ դարեր



Հայ նիզակակիր և աղեղնավոր, մ.թ.ա. 1-ին հազ. սկիզբ

Հայ զինվոր, մ.թ.ա. 9-րդ դար

էին) գլխավորությամբ հաղթական պատերազմներ են մղել ասորեստանցիների, բաբելացիների և այլ թշնամիների դեմ: Ասորեստանի թագավոր Սալմանասար 3-րդի տուրտան (զորահրամանատար)՝ Շամշիլուն, որ կռվում էր Արգիշտի 1-ինի (786-764) դեմ, մ.թ.ա. 780 թ. խոստովանում է. «Արգիշտի Ուրարտացու անունը սարսափելի է որպես ծանր հողմ, իսկ նրա ուժերը մեծաքանակ են»[14]:

Ասորեստանի թագավորների արձանագրություններից հայտնի է դառնում, որ հայոց թագավորները այս պատերազմի ժամանակ ևս ունեցել են հետախույզներ և դարձյալ օգտվել են նրանց ծառայություններից: Սարգոն 2-րդը իր արձանագրության մեջ գրում է, որ նվաճել է Ուրարտուի ծայրամասում, Նաիրի երկրի մոտ գտնվող Ուայախս քաղաքը, «որտեղ բնակվում էին Ուրսայի (Ռուսա) քաջ ռազմիկները, հետախույզները՝ շրջակա երկրների գաղտնիքների մեջ թափանցողները»[15]:

Պատմական վկայություններ կան նաև հայ զորահրամանատարների մասին, որոնք ծառայության մեջ էին օտար թագավորների մոտ,

14. АВИИУ, 38.
15. ՀԺՊՔ, էջ 32:

առաջնորդում էին նրանց զորքը կամ հայկական զորագնդերի հետ մասնակցում այդ թագավորների ձեռնարկած արշավանքներին: Հույն պատմիչ Քսենոփոնը վկայում է, որ պարսից Կյուրոս Մեծ (550-529) թագավորի ձեռնարկած լյուդական և բաբելական արշավանքներին մասնակցել են հայկական հեծելազորը և հետևակը՝ Տիգրանի (հետագայում Տիգրան 1-ին հայոց թագավոր) և Եմբասի գլխավորությամբ[16]: Այդ արշավանքների ժամանակ գրավվում և կործանվում է Բաբելոնը (539): Իսկ մինչ այդ, մ.թ.ա. 612 թ. մարերը դաշնակցելով հայերի, բաբելացիների ու սկյութների հետ նվաճել ու ավերել էին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն: Խորենացին վկայում է, որ Նինվեի գրավման ժամանակ հայոց զորքին առաջնորդում էր Պարույր Սկայորդին[17]:

Պարսից Դարեհ 1-ին արքայի Բեհիսթունյան արձանագրության մեջ վկայություններ կան երկու հայ զորավարների մասին: Մ.թ.ա. 521-520 թթ. Դարեհի դեմ ապստամբում են մի շարք երկրներ, այդ թվում՝ Հայաստանը: Ապստամբությունը ճնշելու համար Դարեհը Հայաստան է ուղարկում Դադարշիս անունով իր հայ զորավարին, որը սակայն չի կարողանում ճնշել իր հայրենակիցների ապստամբությունը և պարտություն է կրում բոլոր երեք ճակատամարտերում: Դարեհը Հայաստան է ուղարկում նոր զորք, նոր զորավարի՝ պարսիկ Վահումիսայի գլխավորությամբ: Երկու ճակատամարտից հետո միայն Վահումիսային հաջողվում է ճնշել հայերի ապստամբությունը: Դարեհի արձանագրության մեջ չենք հանդիպում այն հայ զորավարի կամ թագավորի անվանը, որի հրամանատարությամբ հայոց զորքը հինգ անգամ ճակատամարտ է տվել պարսից զորավարներ Դադարշիսի և Վահումիսայի դեմ: Հավանաբար Դարեհը չի ցանկացել, որ իր դեմ ապստամբած հայոց զորավարի անունը հավերժանա: Հայտնի է, որ հայոց Տիգրան 1-ին թագավորին հաջողվել է որդին՝ Վահագնը մ.թ.ա. 531 կամ 530 թվականին, ուստի հավանական է, որ Դարեհի դեմ կռվող հայոց զորքի հրամանատարը հենց այս Վահագնը լինի[18]:

Դարեհի դեմ ապստամբած երկրների թվում էր նաև Բաբելոնը: Այս ապստամբությունը ղեկավարում էր Արախա անունով մի հայ, Խալդիտա-Հալդիտայի որդին: Արախան հայտարարում է, որ ինքը բաբելական գահի թեկնածու Նաբոնիդի որդի Նաբուգոդոնոսորն է: Ապստամբ ժողովուրդը ընդունում է Արախային և հռչակում թագավոր: Սակայն Դարեհին հաջողվում է ճնշել նաև այս ապստամբությունը, իսկ Արախան մահապատժի է ենթարկվում[19]:

16. *Քսենոփոն*, Կյուրոպեդիա (Հ. Մանանդյանի թարգմանությամբ), Հ. Մանանդյան, հ. 1, 1977, էջ 384-400:
17. *Մ. Խորենացի*, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 77-79:
18. *Հ. Տեր-Մովսեսյան*, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1922, էջ 140, *Լ. Շահինյան*, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան, 1993, էջ 289:
19. ՀԺՊՔ, էջ 154-159:



Հայ ռազմիկներ՝ հեծյալներ և մարտակառք վարողներ, հայտված Սարդուրի 2-րդի սաղավարտից, մ.թ.ա. 8-րդ դար

Մ.թ.ա. 4–3-րդ դդ., մոտ մեկ դար, տեղի են ունենում հույն-պարսկական պատերազմներ, որոնց, հույն պատմիչների վկայությամբ, մասնակցել են նաև հայկական ջոկատներ՝ հիմնականում պարսկական կողմից: Հայոց հնագույն Միտանի և Արարատ-Ուրարտու պետությունների անկումից հետո հայերն ու իրանական ցեղերը (մարեր, պարթևներ, պարսիկներ), ինչպես վերը նշվեց, միասին են հանդես գալիս նախ բաբելացիների ու ասորեստանցիների, ապա որպես զավթիչներ Առաջավոր Ասիա ներխուժող հույների ու հռոմեացիների դեմ: Մ. Խորենացու վկայությամբ, դեռևս Տրոյական պատերազմի ժամանակ հայոց նահապետներից մեկը՝ Զարմայր Նահապետը իր զորքով օգնության է գնացել Տրոյային, երբ հույները ավարի ու առևտրական ճանապարհներին տիրելու համար հարձակվել են այդ քաղաքի վրա (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջ): Հայոց քաջ նահապետը զոհվել է Տրոյայի պաշտպանության ժամանակ, նրա պարիսպների տակ[20]:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ ևս հայերը պարսիկների դաշնակիցներն էին: Արիանոսը վկայում է, որ Ալ. Մակեդոնացու և պարսից զորքերի միջև մ.թ.ա. 331 թ. տեղի ունեցած Գավգամելայի ճակատամարտին պարսիկների կողմից մասնակցել են հայոց հռչակավոր այրուձին ու հետևակը Երվանդի և Միհրվահիշտի գլխավորությամբ[21]: Պարսից բանակի աջ թևը, որտեղ կռվում էր հայոց զորագունդը, հերոսաբար դիմակայել է հունական զորքին և մարտը շարունակել նույնիսկ այն ժամանակ, երբ պարսիկները Դարեհ 3-րդի

20. *Մ. Խորենացի*, 1981, էջ 107:
21. Arrian, III, 8, 5, 11, 7: ՀԺՊ, 1971, էջ 494:

գլխավորությամբ անկազմակերպ ու խուճապահար փախել են մարտի դաշտից: Աջ թևում մարտը շարունակվել է մինչև երեկո, սակայն երբ հայտնի է դարձել, որ պարսից զորքը ճակատամարտի ձախ թևում և կենտրոնում պարտություն է կրել, Երվանդը և Միհրվահիշտը կազմակերպել են հայոց զորքի կանոնավոր նահանջը դեպի հայրենիք՝ հռչակելով Հայաստանը անկախ ու ինքնուրույն թագավորություն:



Ռազմի ասպված Արդի-Խալդին, վահանի մնացորդ, մ.թ.ա. 8-րդ դար

Տեղն է հիշել, որ հույն պատմիչները (Քսենոփոն, Դ. Սիկիլիացի, Դիոն Կասիուս) ևս վկայում են հայերի հմուտ և քաջ ռազմիկներ լինելու մասին: Դ. Սիկիլիացին (մ.թ.ա. 5-րդ դարի վերջ) գրում է. «Սրանք՝ կարդուխները (իմա՝ Կորդվաց լեռների բնակիչները) արքային (պարսից) թշնամի էին ու ազատ, և զբաղվում էին ռազմական արվեստով: Նրանք առանձնապես վարժ էին պարսատիկներով խոշորագույն քարեր արձակելու մեջ, որոնցով էլ նրանք հարմար դիրքերից հելլեններին հարվածներ հասցնելով, շատերին սպանեցին: Նրանց նետերը երկու կանգունից ավելի երկար էին և ծակում էին թե՛ վահանները, թե՛ լանջապանները, և ոչ մի զրահ չէր դիմանում նրանց հարվածին: Կարդուխները այնպիսի խոշոր նետեր էին օգտագործում, որ հելլենները նրանց արձակած նետերին կաշվե բռնակ ամրացնելով, դրանք իբրև տեգ էին օգտագործում»[22]: Քսենոփոնը ևս վկայում է Կորդվաց լեռների հմուտ պաշտպանների և նրանց աղեղների ու նետերի մեծ չափերի մասին: Նա գրում է. «Կարդուխների աղեղներն ունեն մոտավորապես երեք կանգուն երկարություն, իսկ նետերը՝ ավելի քան երկու կանգուն երկարություն»[23]:



Հայ նետաձիգներ, մ.թ.ա. 8-րդ դար

Հայոց զենքը Ուրարտուից հետո մեծ հաջողություններ ու հաղթանակներ է

22. ՀԺՊՔ, էջ 174:
23. *Քսենոփոն*, Անաբասիս, IV, 2, 27-28:

արձանագրել Տիգրան 2-րդ Մեծի (95-55) ժամանակ: Մ.թ.ա. 1-ին հազարամյակի վերջերին հայերը հաջողությամբ պայքարում էին հռոմեացիների ու պարսիկների դեմ: Մ.թ.ա. 1-ին դարում Միտանիից և Արարատ-Ուրարտուից հետո նորից ստեղծվում է հայոց հզոր պետություն՝ Տիգրան Մեծի գլխավորությամբ, որի սահմանները ձգվում էին Միջերկրական ծովից մինչև Կովկասի նախալեռներ ու Կասպից ծով: Այս պետությունը այդ ժամանակ հաջողությամբ կասեցրեց հռոմեացիների առաջխաղացումը դեպի Արևելք: Հայ ռազմիկների քաջությունը, արիությունը և մարտական բարձր ոգին նոր ուժով է դրսևորվում այս շրջանում: Տիգրան Մեծի մասին գրվել ու դեռ պիտի գրվեն շատ ուսումնասիրություններ: Այժմ բավարարվենք Մ. Խորենացու կողմից արված մի արտահայտությամբ, որ լավագույնս է բնութագրում Տիգրան Մեծին ու հայ ռազմիկներին. «Նա արանց (տղամարդկանց) գլուխ կանգնեց և արիություն ցուցաբերելով մեր ազգը բարձրացրեց»[24]:

Անշուշտ, բարոյական ու ռազմական բարձր հատկանիշներով օժտված հայ ռազմիկի արդեն հայտնի կերպարն է առիթ հանդիսացել, որ հռոմեացիների կողմից (Վերգիլիոս) արվի հետևյալ արտահայտությունը. «Արաքսը կամուրջներ չի հանդուրժում»[25]: Թեև այս արտահայտությունը նշանակում էր, որ հայերին հնարավոր չէ հնազանդեցնել, նվաճել: Այս արտահայտությունը այն խոստովանություններից է, որը շարունակում և լրացնում է մյուսներին, ինչպես նաև լավագույն ձևով բնութագրում հայերին ու հայոց անպարտելի մարտական ոգին: Հիշենք նաև մեկ ուրիշ փաստ: Ահա թե ինչպես է արտահայտվել Օգոստոս կայսրը Հայաստանի մասին. «Մեծ Հայաստանը, - ասված է Օգոստոս կայսեր կտակի մեջ, - ես կարող էի նրա Արտաշես թագավորի սպանությունից հետո դարձնել նահանգ, սակայն ավելի լավ համարեցի, հետևելով մեր նախնիների օրինակին այդ թագավորությունը տալ Տիգրանին, որը Արտավազդի որդին էր և Տիգրան թագավորի թոռը»[26]: Նկատենք սակայն, որ նախնիների օրինակին հետևելու սովորույթը չէր Հայաստանի անկախությունը պահպանելու հիմնական պատճառը, պարզապես Հայաստանն իր ամբոստ ոգով ու պայքարող որդիներով ստիպել է, որ Օգոստոս կայսրն ընդունի Հայաստանի անկախությունն ու ինքնուրույնությունը, հակառակ դեպքում հռոմեացիներին Փոքր Ասիայում սպառնում էր երկարատև ու անօգուտ պատերազմի վտանգը:

Մեր թվարկության սկզբներին հռոմեացիների օգնությամբ Հայաստանում

24. *Մ. Խորենացի*, էջ 84-85: Խորենացին գրում է Տիգրան Երվանդյանի մասին (մ.թ.ա. 6-րդ դար), սակայն ուսումնասիրողները իրավացիորեն նշում են, որ այն վերաբերում է Տիգրան 2-րդին, (Մ. Խորենացի, էջ 472-473):

25. ՀԺՊ, 1971, էջ 633:

26. *Հ. Մանանդյան*, հ 1, 1977, էջ 296:

ստեղծվեց խառնակ ու խառնաշփոթ իրավիճակ, երբ սպանվում կամ գահընկեց էին արվում հայոց թագավորները: 4-րդ դարում կազմավորված Արևելա-հռոմեական կամ Բյուզանդական կայսրությունը ամեն ինչ արեց Հայաստանը թուլացնելու և որպես պրովինցիա իր կայսրությանը կցելու համար: Հայ ժողովրդի ողբերգության հիմքը դրվեց 387թ., երբ Հայաստանն առաջին անգամ բաժանվեց Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև: Հայերին ձուլելու քաղաքականությունը իրագործելու համար բյուզանդացիները սկսեցին հայոց ռազմական ուժը Հայաստանից դուրս բերելու և իրենց զավթողական նպատակների համար օգտագործելու քաղաքականություն վարել: Հայոց այրուձին ու հետևակը քաջաբար կռվում էին՝ փառք ու պատիվ ապահովելով բյուզանդացիների համար:



Հեծյալ նիզակակիրների մենամարտ, 4-րդ դար

Հայ ռազմիկները և զորավարները իրենց մարտունակությամբ, արիությամբ ու կարգապահությամբ աչքի են ընկել բյուզանդական կայսրության գոյության ողջ ժամանակաշրջանում: Ուսումնասիրողները նշում են, որ բյուզանդական բանակի լավագույն զինվորները հայերն էին[27]: Հուստինիանոս 1-ինի (527-565) ժամանակներից Արևմտյան Հայաստանի բնակիչները լայնորեն ներգրավվում են զինվորական ծառայության մեջ: Բյուզանդական բանակի հայտնի զորավար էր Արտավան Արշակունին, որը սկզբում պայքարել է Հայաստան ուղարկված բյուզանդական բանակի դեմ և նույնիսկ սպանել է այդ բանակի ծագումով հայ զորավար Սիտտասին: Այդ դեպքից հետո, ավելի ուշ Արտավան Արշակունին ծառայության է անցել բյուզանդական բանակում, որտեղ ծառայության մեջ էր նաև նրա եղբայր Հովհանը:

Արտավան Արշակունին հռոմեական բանակի կազմում մասնակցել է օստգոթերի դեմ մղված պատերազմին, որոնք նվաճել էին Իտալիան և Հռոմը:

538-539թթ. կայսր Հուստինիանոս 1-ինը օգնական մեծ զորք է ուղարկում Հռոմ՝ հայ Նարսեսի հրամանատարությամբ: Նրա հրամանատարությամբ գործում էր մեկ այլ հայ զորավար նույնպես՝ Նարսես անունով: Գոթերի դեմ պատերազմին մասնակցում էին նաև այս (վերջին) Նարսեսի երկու եղբայր-

27. *F. W. Bussel*, Essays on the Constitutional History of the Roman Empire, L. 1910, II, p. 344. *Վ. Խաչանյան*, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Եր., 1991թ.:

ները՝ Արատիոսը (Հրահատ) և Իսակեսը (Սահակ): Ենթադրվում է, որ երեք եղբայրները Կամսարական ազնվական տոհմից են սերվել[28]:

Հետաքրքիր է, որ Արտավան Արշակունու նման Նարսեսն ու Արատիոսը նույնպես սկզբում պայքարել են Սիտտաս և Բելիսարիոս զորավարների դեմ, երբ նրանց գլխավորած բյուզանդական բանակը 530թ. ներխուժել է Արևմտյան Հայաստան:

Նարսեսի բանակում ծառայել է մեկ այլ հայ քաջ զորավար ևս, Քանարանդ անունով[29]: Բալկաններում սլավոնների դեմ մղված ճակատամարտում (Թրակիայում կամ Դանուբի ափին) է կռվել ու սպանվել հայ նշանավոր զորավար Վահան Մամիկոնյանը (նշվում են 586-587, նաև 600 թվականները): Հայտնի է նաև, որ արքունիքի պահպանության, ինչպես նաև մոտ 3500 զինվորից բաղկացած թիկնապահ զորամասում ծառայելու համար բյուզանդական կայսրերը հիմնականում ընտրում էին հայ զինվորներ՝ «նախապատվությունը տալով նրանց մարդկային արժանիքներին»[30]:

Այսպիսով, պատերազմներում ունեցած հաջողությունների համար բյուզանդացիները մեծ չափով պարտական են հայկական մարտունակ զորագնդերին և նրանց քաջ ու հմուտ հրամանատարներին, որոնք հիմնականում հայ նախարարական տների ներկայացուցիչներ էին:

Հայ իշխանների ու հայոց ռազմական ուժի դերը նշանակալից էր նաև 11–12-րդ դարերում ուժեղացած Վրաստանի կյանքում: Վրաստանը համեմատաբար զերծ էր մնացել 11-րդ դարի վերջերից սկսված թուրք-սելջուկյան արշավանքներից և պայքար սկսեց իր հարավային ու արևելյան սահմանների մոտ առաջացած մահմեդական իշխանությունների դեմ: Այդ պայքարում վրացական պետության գլուխ կանգնած Բագրատունիներին (սերված հայ Բագրատունիներից) մեծապես օգնում էին հայ իշխանները և հայ զինվորները, որոնք մեծ ցանկություն ունեին հայ-վրացական միացյալ ուժերով ազատագրել Հայաստանը թուրք-սելջուկներից: Մոտ 25 տարի (1194-1219թթ.) տևած պայքարը ավարտվել է հաջողությամբ: Հայ-վրացական միացյալ բանակը հայ իշխաններ Զաքարե և Իվանե զորավարների գլխավորությամբ ապահովել են Վրաստանի և Հյուսիսային Հայաստանի անվտանգությունը, բազում հաղթանակներ տանելով սելջուկների ու այլ մահմեդական իշխանությունների զորքերի դեմ: Հայ զորահրամանատարների և հայկական ռազմական ուժի դերը շատ մեծ էր վրացական պետության կայացման գործում և նրա ունեցած հաջողություններում:

28. *Ղ. Փարպեցի*, Պատմություն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնյան, Տփղիս, 1904, էջ 122, 162:
29. *Агафин*, О царствовании Юстиниана, М-Л, 1953, с. 22-26, 35-36, 41-44.
30. *Պրոկոպիոս*, Գաղտնի պատմություն, գլ. 24, էջ 296:

Ինչպես տեսնում ենք, հայ ռազմիկը քաջաբար կռվել է ոչ միայն իր երկրի, այլև ուրիշ երկրների համար, երբ դեպքերի բերումով, հայտնվել է այդ երկրների բանակներում:

Հայ մարդը, հայ ռազմիկը երբեք թալանի ու կոտորածի համար չի պատերազմել, երբեք անմեղ արյուն չի հեղել: Նա մարտի է գնացել մեր դեմ եկած թշնամուն հաղթելու, նրան երկրից դուրս քշելու համար: Հայ ռազմիկի վեհ կերպարը լավագույնս է ներկայացված «Սասնա ծռեր» դյուցազնավեպում: Դյուցազնավեպի հերոսներից մեկը՝ Սասունցի Դավիթը մարտի է գնում թշնամուն պատժելու, հաղթելու, նրան երկրից դուրս վռնդելու համար: Սակայն նա ուզում է թշնամուն հաղթել արդար, բաց մարտում: Նա չի հարձակվում քնած թշնամու վրա, այլ որոտաձայն գոռում, արթնացնում է նրան, հետո միայն հարձակվում:

Հիշենք դյուցազնավեպի այդ հատվածը.

Է՛հե՛յ,
Ով քնած է՝ արթուն կացե՛ք,
Ով արթուն է՝ ձիեր թամբե՛ք,
Ով թամբել է՝ զենքե՛ր կապեք,
Ով կապել է՝ ելե՛ք, հեծեք[31]:

Այսպիսով, հայ ռազմիկները հնագույն ժամանակներից աչքի են ընկել իրենց մարտունակությամբ, արիությամբ ու քաջությամբ, ունեցել են մարտական բարձր վարպետություն, բարոյական բարձր հատկանիշներ, ոգի, կամք ու անհրաժեշտ պահին հաղթելու մեծ վճռականություն: Իր երկարատև պատմության ընթացքում հայը ընդունել է կյանքի, գոյության ու լինելու համար մղվող բնական պայքարի՝ գոյամարտի պայմանները և հայ ռազմիկներին բնորոշ վերոհիշյալ հատկանիշների շնորհիվ հազարամյակներ շարունակ ապահովվել հայ ցեղի հարատևությունը իր բնօրրանում՝ Հայաստանում:

31. Սասունցի Դավիթ, 1939, էջ 268:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՍՏԱՆ ԳԱՎԱՌԻ, ՄԱՐԴՊԵՏՈՒՆԻ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏԱՆ MARD ԵՎ ՔՐԴԵՐԻ KURDIOI ԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայոց հնագույն Արծրունի նախարարական տոհմին պատկանող Վասպուրական նահանգի գավառներից մեկը կոչվում էր Մարդաստան (Մարդոցայք, Մարդոցեք), ուր ապրում էին հայկական մարդ ցեղի մարդիկ՝ մարդերը: Այս գավառը տարածվում էր Մակու քաղաքից արևմուտք, Կոտուրի լեռների արևելյան ստորոտներում (Վասպուրականի հյուսիսարևելյան մասերը, ներառյալ Նախիջևանը): Մարդաստան գավառի նախարարական տոհմը կոչվում էր Մարդպետունի, իշխանը՝ Մարդպետ կամ Հայր Մարդպետ, իսկ ռազմական ուժը՝ մարդպետական գունդ: Այս նախարարության մարդպետական գունդը Հայր Մարդպետի գլխավորությամբ 451թ. մասնակցել է Ավարայրի ճակատամարտին և իրեն դրսևորել լավագույն կողմերով: Մարդպետունի նախարարական տան պարտականությունն էր հսկել արքունական կալվածքները, արքունի գանձերը, ամրոցներն ու կանանոցը:

19-րդ դարի վերջերին գիտական աշխարհում առաջ է քաշվում մի տեսակետ, ըստ որի որոշ ուսումնասիրողներ (G. Markward, W. Gaiger) փորձում էին կապ տեսնել mard և kurdioi անունների միջև[1]: Այդպիսի կապի մասին հնագույն գրավոր աղբյուրները լռում են: Իսկ լռում են, որովհետև այդպիսի կապ չէր կարող լինել: Անունների արտաքուստ թվացյալ նմանությունը չի կարող հիմք հանդիսանալ նման եզրակացության: Քրդերի մասին առաջին տեղեկությունները տալիս են արաբ աշխարհագիրները, իսկ վերոհիշյալ տեսակետի համար հիմք է հանդիսացել արաբ աշխարհագիր Ալ-Մասուդիի (10-րդ դար) վկայությունը, որը նա լսել է մի քուրդ ցեղապետից. «Քրդերի նախահայր Քուրդը Մարդի որդին էր»:

Մարկվարտը և Գայգերը, ուսումնասիրելով mardioi-kurdioi առնչությունները, այն կարծիքն են հայտնել, որ mardioi անունը ծագում է իրանական marcba–«ոչնչացնող», «վնաս տվող» բառից և որ անունը ցեղին տրվել է իբրև նախատական անուն[2]: Վերոհիշյալ քուրդ ցեղապետի պատմածից կարելի է եզրակացնել նաև, որ մարդերի (մանա-մատիենների) մի մասը աննպաստ պայմանների հետևանքով դարերի ընթացքում կարող էր կտրվել իր ցեղակիցներից և խառնվել քուրդ ցեղին, սակայն պահպաներ հիշողություն իր ծագման մասին, այն է. հայկական մարդ ցեղից ծագելու մասին, կապելով այն քրդերի նախահայր Քուրդի հետ: Արաբ աշխարհագիրների աշխատություններում քուրդը «քոչվոր անասնապահ» իմաստն ունի: Հայերի մոտ քուրդը հաճախ ընկալվում է «անսիրտ, անգութ» իմաստով:

Հայտնի է, որ քրդերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական ճյուղին է պատկանում, իսկ քրդերի նախահայրենիքը Իրանի Ֆարս նահանգն է համարվում[3]: Արաբական խալիֆայության ժամանակ քրդական ցեղերը թափանցել են Հյուսիսային Միջագետք և ընդունել մահմեդականություն: Թուրք-սելջուկների տիրապետության ժամանակ քրդական ցեղերը թափանցել են նաև Հայաստան և հաստատվել Հայաստանի հարավային մասերում՝ Հայկական Միջագետքում, Աղձնիքում (Դիարբեքիրի շրջան), Կորդուք-Կորճայքում[4] և այլն: Հայկական լեռնաշխարհի այլ տարածքներ քրդական ցեղերը թափանցել են 16-րդ

1. Ուսումնասիրողները փորձում էին կապ տեսնել նաև **մար** (Մարդաստան) և **քուրդ** անունների միջև: Նույնիսկ քրդերին փորձում էին ներկայացնել իբրև մ.թ.ա. 6–5-րդ դարերում անհետացած (հայերի և պարսիկների մեջ ձուլված) մարերի հետնորդներ:

2. *J. Markward*, Die Enstchung..., 1919, էջ 21-25: *Ա.Խաչատրյան*, Հայաստանի սեպագրական շրջանի պատմություն, Երևան, 1933, էջ 221: И. Дьяконов, История Мидии, М-Л, 1956, ст. 417. W. Gaiger, Ostiranische Kultur im Altertum. Erlangen, 1882, str. 203.

3. Այսօր շատ ժողովուրդներ են փորձում ներկայանալ որպես արիական ցեղի հետնորդ (արիացի) և տեղի ու անտեղի շահարկվում է այդ գաղափարը: Սակայն արիացի լինելը ժառանգություն չէ, այլ փաստացի վիճակ: Արիացի կարող է համարվել այն էթնոսը, ազգը (անհատը), ով առաջնորդվում է արիական օրենքներով, վարք ու բարքով, բարոյական բարձր չափանիշներով, ով արարում է, կառուցում, մշակույթ ու քաղաքակրթություն ստեղծում:

Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ոչ բոլոր ժողովուրդները կարող են արիական ցեղի ավանդույթների պահապաններ ու հետնորդներ համարվել: Կան ժողովուրդներ, որոնց լեզուն պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին, սակայն իրենց վարք ու բարքով, սովորույթներով նրանք շատ հեռու են արիական օրենքներից ու ավանդույթներից: Եթե հնդիկները, իրանցիները, հույները և այլոք, հեռանալով նախահայրենիքից՝ Հայկական լեռնաշխարհից ու շրջակա տարածքներից, պահպանեցին ու էլ ավելի զարգացրին նախնիներից ժառանգած հոգևոր ու նյութական մշակութային արժեքները, ապա սկյութները և այլոք այլ արժեքներ որդեգրեցին, այն է. անընդհատ տեղաշարժվել, պատերազմել, թալանել, գողանալ, սպանել, ավերել, սեփականել ուրիշի ստեղծածը և այլն: Դարեր շարունակ այսպես են ապրել նաև քրդերը, որոնք միջնադարում հայտնվեցին Հայկական լեռնաշխարհի հարավային մասերում և շրջակա տարածքներում ու շատ արագ բազմացան: Ի դեպ, գնչուների լեզուն ևս հնդեվրոպական լեզվաընտանիքին է պատկանում, սակայն հայրենիքը Հնդկաստանի հյուսիսային մասերում է:

Ինչպես տեսնում ենք, միայն հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող որևէ լեզվով խոսելը բավական չէ արիացի լինելու համար: Անհրաժեշտ է օժտված լինել հոգևոր ու բարոյական բարձր արժեքներով ու հատկանիշներով, որոնք փոխանցվում են արյան, գենների, դաստիարակության, միջավայրի ու հասարակության միջոցով:

4. Քուրդ անունը և քրդերը կապ չունեն նաև հայոց Կորդուք-Կորճայք աշխարհի (գավառի) անվան հետ: Նրանք այդ տարածքներում հայտնվել են ուշ, 11–12-րդ դարերից հետո:

դարի սկզբներին, թուրքական տիրապետության ժամանակ: Թուրք-պարսկական երկարատև հակամարտության ընթացքում (1514-1639թթ.) թուրք սուլթանները պարսիկների դեմ պատնեշ ստեղծելու նպատակով քրդական վերնախավին Հայաստանում հողեր էին տրամադրում: Այսպես, Բիթլիսցի մի քուրդ՝ Մոլլա Իդրիսը, իր իշխանության տակ է միավորել Մծբինից մինչև Դերսիմ ընկած տարածքը և անվանել Դիարբեքիր: Քուրդ առաջնորդները որպես սեփականություն հողեր են ստացել Տիգրիսի ակունքների շրջանում: Իդրիսը նաև որոշ քրդական ցեղեր է տեղափոխել Էրզրումի նահանգ՝ Հայաստանի այդ մասում ևս հիմք դնելով քրդական էթնիկ տարրի հաստատմանը: Այդ գործողությունները հաջողությամբ իրագործելու համար Իդրիսի միջոցով քուրդ առաջնորդները սուլթանից ընծաներ են ստացել՝ 25 հազար դուկատ, 70 խալաթ և 70 դրոշ[5]:

Դարերի ընթացքում քրդերը բազմանալով, Հայաստանի ու Հյուսիսային Միջագետքի շատ տարածքներ (Հյուսիսային Սիրիա, Հյուսիսային Իրաք) դարձրել են քրդաբնակ: Թուրքական տիրապետության ժամանակ թուրքերի վարած հակահայ քաղաքականության հետևանքով, ցավոք, մեծ թափ է ստացել նաև հայերի ձուլման գործընթացը քրդերին: Արևմտյան Հայաստանի քուրդ ազգաբնակչության ձևավորման մեջ զգալի է հայկական տարրի ներկայությունը: Այդ են վկայում քրդական շատ ցեղերի ծագումնաբանության հետ կապված անհայտ էջերի առկայությունը (օրինակ. դուժիկների կամ զազաների ծագումը), շատ քրդերի բացահայտ արմենոիդ տիպին պատկանելու փաստը, կենցաղային ու մշակութային շատ տարրեր և այլն:

19-րդ դարի վերջերից որոշ գիտնականների կողմից Արևմտյան Հայաստան անվան փոխարեն շրջանառության մեջ է դրվում Քրդստան անվանումը: Ինչպես այս իրողությունը, այնպես էլ mardioi-kurdioi անունները նույնացնելը ուներ քաղաքական դրդապատճառներ:

19-րդ դարում Ռուսաստանը փորձում էր ամրապնդվել Մերձավոր Արևելքում: Դրա համար նա օգտագործում էր հայերին, որոնք հույս ունեին Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել թուրքական լծից: Այդ տարածաշրջանում իր շահերն ունեցող Անգլիան, բազմիցս համոզվելով հայերի ռուսամետության մեջ, որոշում է իր շահերի համար օգտագործել քրդերին: Անգլիայի քաղաքական գործիչները, ուսումնասիրողները սկսում են իրենց համակրանքն արտահայտել քրդերի հանդեպ: Նրանք Էրզրումի իրենց հյուպատոսին անգամ սկսում են անվանել «Քրդստանի հյուպատոս»[6] և այլն:

5. Ն. *Ադոնց*, Քրդերի ներթափանցումը Հայաստան, «Երեկոյան Երևան» (օրաթերթ), 10. 03. 1990: Հոդվածն առաջին անգամ հրատարակվել է 1920թ. Նյու Յորքի «New Armenia» հանդեսում, vol. 14, № 1, էջ 4-6: Իսկ «Երեկոյան Երևան» թերթում հրատարակվել է արևելագետ Գ. Ասատրյանի ծավալուն մեկնաբանությամբ:

6. Ն. *Ադոնց*, նշված հոդվածը:

Այս պայմաններում Ռուսաստանը, վստահ լինելով հայերի հավատարմությանն ու նվիրվածությանը, սկսում է ինքը ևս սիրաշահել քրդերին: Ռուսները, անտեսելով հայերին ու նրանց բողոքները, շեշտում էին հատկապես քրդերի թվական գերակշռությունը: Ռուս զինվորականները, քաղաքական գործիչները, մտավորականները, վիրավորելով հայերի ազգային զգացմունքները, Արևմտյան Հայաստանը նույնպես անվանում էին Քրդստան (Էրզրումի շրջանը անվանում էին Հյուսիսային Քրդստան, Բիթլիսի (Վանի) շրջանը՝ Հարավային Քրդստան): Նրանք նույնիսկ երկրի բնիկներ էին համարում քրդերին: 1886թ. Ս.Պետերբուրգում ռուս ակադեմիկոս Վելիամինով-Զելինսկին հրատարակում է քրդական վերնախավի մասին Բիթլիսի կառավարիչներից մեկի, պատմական փաստերից զուրկ ու միայն քրդական լեգենդների հիման վրա գրված Շարաֆեդդինի գիրքը «Շարաֆ Նամե» վերնագրով: Թուրքերը դեմ չէին այս անվանափոխություններին: Նրանք շատ վաղուց էին ձգտում վերացնել իրենց համար վտանգավոր Արմենիա անունը:

Ինչպես տեսնում ենք, Քրդստան անունը շրջանառության մեջ է դրվել քաղաքական նպատակներով և Արևմտյան Հայաստանի տարածքում երբևէ չի եղել Քրդստան անունով երկիր ու մեծամասնություն կազմող քուրդ բնակչություն: Արևմտյան Հայաստանում միշտ մեծամասնություն է կազմել հայ էթնիկ տարրը, չնայած բազմաթիվ բռնագաղթերին ու կոտորածներին:

Արևմտյան Հայաստանը այսօր էլ շարունակում է լինել Ամբողջական Հայաստանի մի մասը, որտեղ հայ ժողովուրդը հազարամյակներ շարունակ ստեղծել է իր հոգևոր և նյութական մշակույթը, և որի հետքերը ոչ ժամանակը, ոչ թուրքերը, ոչ էլ քրդերը ի վիճակի չեն ջնջելու: Ի տարբերություն Արևմտյան Հայաստանի բնիկների՝ հայ-արմենների, թուրքերն ու քրդերը, որոնք ընդամենը 5-6 դար է, որ ապրում են այդ տարածքներում, քանդելուց և ավերելուց բացի ոչինչ չեն ստեղծել ու ոչինչ չեն ավելացրել եղածին: Լավագույն դեպքում նրանք սեփականացնում են հայերի ստեղծած մշակութային արժեքները, մզկիթների են վերածում եկեղեցիները, ճարտարապետական կառույցները (բերդեր, կամուրջներ) իրենց պապերի կառուցածն են համարում, հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված մշակութային արժեքները հռչակում են իրենց նախնիների ստեղծածը և այլն:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանի տարածքում ապրող քրդերը, որոնք մեծամասնություն դարձան 1915թ. Հայոց Մեծ եղեռնից հետո, ոչ մի կապ չունեն այդ տարածքների հետ (ոչ հոգևոր, ոչ էլ նյութական առումներով) և որքան էլ փորձեն Քրդստան անվանել Արևմտյան Հայաստանը, այն միշտ Ամբողջական Հայաստանի մասն է կազմելու: Ի դեպ, ըստ որոշ քուրդ առաջնորդների ու մտավորականների, «Քրդստաններ» կան նաև Իրաքում (Իրաքի հյուսիսային

մասը, որի Քերքուկ քաղաքը խուրրի-հայկական հնագույն Արրապխան է), Սիրիայում (Հյուսիսային Սիրիա) և Իրանում: Նշենք, որ դարձյալ քաղաքական նպատակներով այս անգամ Արևելյան Հայաստանում, 1920-ական թվականների սկզբներին, ռուս և թուրք բոլշևիկների կողմից կարճ ժամանակով ստեղծվել է Կարմիր Քրդստան (Լաչին, այժմ Քաշաթաղի շրջան)՝ Արցախը Խորհրդային Հայաստանից բաժանելու նպատակով:

Ինչպես տեսնում ենք, ոչ մի կապ չկա Առաջավոր Ասիայի հնագույն քաղաքակրթության ակունքներում կանգնած խուրրիական (հայկական) միտանի ցեղից սկիզբ առնող Վասպուրական նահանգի Մարդաստան գավառի, նրա բնակիչների՝ մարդերի, Մարդպետունի նախարարական տան անվան, նաև մ.թ.ա. 6–5-րդ դարերում պատմության թատերաբեմից անհետացած mar ցեղի անվան և շատ ուշ՝ 11–12-րդ և 16-րդ դարերում Առաջավոր Ասիայում հայտնված քրդերի kurdioi անունների միջև:

Ավարտենք Ն. Ադոնցի «Քրդերի ներթափանցումը Հայաստան» հոդվածից կատարված մեջբերումով, որը լիովին համապատասխանում է նաև այսօրվա քաղաքական իրավիճակին. «Աշխարհի կողմից հանցագործություն կլիներ պատնեշ դնել հայի ազատության ձգտման առջև լոկ այն պատճառով, որ նրա առողջ մարմնի վրա կա ինչ-որ էքզոտիկական մակաբույծ ուռուցք: Դրա համար մեղավոր են այն դիվանագետները, որոնք ձգձգեցին հայկական հարցի լուծումը և թույլ տվեցին, որ արյունարբու մի ռեժիմ ուժեղացնի օտար ու թշնամական տարրերի թափանցումը հայկական մարմնի մեջ»:

ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ

Արարչագործությունից հետո, երբ **Հայա** (Էա, Այա, Գեա) աստծո (աստվածուհի) տիրապետության տակ գտնվող Մայր Երկրի վրա (Արարատի երկրում) **Արարչի** (Ար Աստված) կողմից արարվեց մարդը (արարածը, հայ-արմենը), կապը Արարչի ու տիեզերքի հետ շարունակվեց: Այն արտահայտվում էր մարդու գիտակցության ու հոգևորի մեջ: Յուրաքանչյուր երևույթ մարդու գիտակցության մեջ անձնավորվում էր տիեզերական ուժի՝ որևէ աստծո բնույթի և կերպարի մեջ (ի դեպ, աստված բառի հիմքը հնդեվրոպական «ազդ, աստ» արմատն է, որը ուժ, զորություն իմաստներն ունի): Այսպես. Արարչից հետո, որը տիեզերքի, արարչագործության, կյանքի, բնության ու զարթոնքի և արևի աստվածն էր, երևան եկան սիրո և պտղաբերության, արևի ու կրակի, ռազմի, գեղեցկության ու սիրո, գրի ու դպրության, հյուրընկալության, ստորերկրյա աշխարհի ու այլ աստված-աստվածուհիների պաշտամունքներ: Հայկական լեռնաշխարհում ստեղծված աստված-աստվածուհիների բնույթը, վարքն ու բարքը վկայում է Հայկական լեռնաշխարհի և շրջակա տարածքների բնակիչների՝ հայ-արմենների բարձր գիտակցության և բարոյական բարձր հատկանիշների մասին: Նշենք. շատ քիչ ազգեր են ունեցել գրի ու դպրության (Տիր) և հյուրընկալության (Վանատուր) աստվածներ: Հայոց աստվածները իրենց բնույթով նաև բարի են: Հայկական լեռնաշխարհում չկան չար աստվածներ, որոնք հատուկ են ավելի ուշ հանդես եկած ժողովուրդների (ասորեստանցիներ, պարսիկներ, հույներ) դիցաբանությանը:

Հայտնի է, որ հայ-արմենները ի սկզբանե բնակվել են Միջերկրական ծովից Սև ծով, Կովկասի նախալեռներ ու Կասպից ծով ընկած ընդարձակ տարածքներում, որտեղ տարբեր ժամանակներում ստեղծվել ու տարբեր պատճառներով վերացել են տարբեր հայկական պետություններ: Իսկ հայտնի է, որ համընդհանուր աստվածություններ կարող էին ձևավորվել համահայկական հզոր պետություններում: Հայկական հզոր Միտանի (Խուրրի-Միտանի) պետության անկումից հետո (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջ), անցած ավելի քան երեք հազար տարվա ընթացքում ընդամենը երկու անգամ է հայերին հաջողվել միավորել այդ տարածքները մեկ միասնական պետության մեջ (Արարատ-Ուրարտու և Տիգրան Մեծի Հայաստան):



Խուրրիական աստվածներ Թեշշուբը և Հեպատը, մ.թ.ա. 2-րդ հազ. կես



Խուրրիական աստվածներ, գլանաձև կնիք

Ապրելով ընդարձակ տարածքում, հաճախ տարբեր պետական կազմավորումներում, ոչ միասնական հայկական պետության մեջ, երբ նաև դժվար էր հաղորդակցվելը (վատ ճանապարհներ, արագահոս գետեր, խիտ անտառներ, լեռներ), ձևավորվում էին տեղական բարքեր ու սովորույթներ: Հանդես են գալիս նաև տեղական աստվածներ ու ոգիներ:

Խեթական աստվածներ Յազըլիկայայի ժայռաքանդակից

Հայոց հնագույն հեթանոսական աստվածների մասին գրվել են շատ ուսումնասիրություններ և աշխատություններ: Նպատակ չունենալով ներկայացնել ընդհանրապես հայոց հեթանոսական աստվածների պաշտամունքն ու պատմությունը, որն այսօր հայոց պատմության ու մշակույթի հետ նորից դարձել է արդիական թեմա՝ կապված ազգի ինքնաճանաչման և ինքնության իմացության նոր զարթոնքի հետ, անդրադառնանք Հայկական լեռնաշխարհում ստեղծված հնագույն պետությունների (Միտանի, Արարատ-Ուրարտու, հեթանոսական

Հայաստան) դիցարանի աստված-աստվածուհիներին, որոնց մասին վկայություններ կան խուրրիական (նաև խեթական) և ուրարտական սեպագիր արձանագրություններում, ինչպես նաև հայ միջնադարյան մատենագրության մեջ: Հայկական լեռնաշխարհում և շրջակա տարածքներում հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված բազմաթիվ իրերի վրա պատկերված են տվյալ ժամանակաշրջանի աստված-աստվածուհիները: Նրանք պատկերված են գլանաձև կնիքների, պաշտամունքային անոթների, որմնանկարների, գոտիների, բրոնզե թիթեղների, ժայռաքանդակների և այլ իրերի վրա, որտեղ նրանք ներկայացված են տարբեր դիրքերով, հիմնականում գահին նստած կամ կանգնած որևէ ուժեղ կենդանու վրա (առյուծ, ցուլ): Այդ պատկերները նաև պատկերացում են տալիս հայոց թագավորների արտաքին տեսքի, կեցվածքի, հագուստի, գրված դիրքի և այլնի մասին, քանի որ, ինչպես հայտնի է, թագավորը աստծուց հետո առաջինն էր երկրի վրա:

Տարքու-Տորք աստվածը

Միտանի (Խուրրի-Միտանի, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կես) պետության դիցարանի աստված-աստվածուհիների մասին տեղեկությունները մեզ են հասել խեթական գրավոր աղբյուրների, ինչպես նաև խուրրի և խեթական արքաների միջև կնքված պայմանագրերի շնորհիվ: Միտանիի թագավոր Շատտիվազայի (մ.թ.ա. 14-րդ դարի վերջ) և խեթական թագավոր Սուպիլուլիումաս 1-ինի (1345-1322) միջև կնքված պայմանագրի տեքստում վկայված են խուրրիական աստվածների անուններ. Միթրա (Միհր), Վարունա, Ինդրա, Նասատիա, որոնք արիական՝ հայկական աստվածներ են: Հայտնի է, որ մշակութային և կրոնական սերտ հարաբերություններ են եղել խուրրիների և խեթերի միջև: Խուրրիական հզոր դիցարանը մեծ ազդեցություն է ունեցել խեթականի վրա և խուրրիական շատ աստվածներ պաշտվել են նաև Խաթթիում: Խուրրիական հնագույն աստվածների մասին կարևոր վկայություններ կան «Երկնային թագավորության մասին» պոեմում, որտեղ նկարագրվում է, թե երկնքում ինչպես են հաջորդաբար իրար փոխարինում խուրրիական դիցարանի չորս աստվածները. Ալալուն, Անուն, Կումարբին և Ամպրոպի աստվածը: Հետաքրքիր է Ալալու անունը. եթե գործել է լ–ր հնչյունափոխությունը, ապա խուրրիական դիցարանի առաջին աստծու անունը Արարու է: Խուրրիական (նաև միջագետքյան) հնագույն աստվածներից էր նաև Մայր Երկրի տիրակալ, Համաշխարհային օվկիանոսի և իմաստնության Էա-Հայա

Արդի-Խալդին և Արուբանին, բրոնզե թիթեղներ, Սերբար-թեփեի, մ.թ.ա. 7-րդ դար

աստվածությունը: Պոեմում հիշատակվում են նաև Էնլիլ, Նարաս, Արև-Աստված, Կուբաբա և այլ աստված-աստվածուհիների անուններ: Հետաքրքիր է, որ խուրրիական դիցարանում կա «Աստվածների ավագ սերունդ», որի տիրակալը Կումարբին էր, և «Աստվածների կրտսեր սերունդ», որի տիրակալը Թեշշուբն էր՝ ռազմի, ամպրոպի ու որոտ-կայծակի աստվածը: Նրա զույգը Հեպատ (Խեբաթ) աստվածուհին էր:

Արդի-Խալդի աստծո բարդրաբանդակը, Արծկե, մ.թ.ա. 7-րդ դար

Արևի աստվածը ներկայանում է Շիմագե (հարավում՝ Շիմիկա, Շիմիդի) անունով: Լուսնի աստվածը Կուշուխն է (նաև Կուժուխ): Խուրրիական դիցարանում կարևոր դեր է ունեցել Շավուշկա «Ջենք» աստվածուհին: Շավուշկան (ավելի ուշ՝ Իշտար) ռազմի, սիրո ու պտղաբերության աստվածուհին էր (հմմ. Անահիտ աստվածուհին): Նա շատ հաճախ պատկերվել է իբրև թևավոր աստվածուհի՝ կանգնած առյուծի վրա: Շավուշկան համադրվում է նաև Հեպատի հետ:

Խուրրիական (նաև միջագետքյան) դիցարանի կարևոր աստվածներից են Անուն (նման է շումերական Անին), Շիդուրին (Սիդուրի), որը աստվածային տան տնտեսուհին է, Իշխարը (Ուժխար), Կուբաբան



1

1. Արուբանիի պատկերով ոսկե կախիկ, Վան, մ.թ.ա. 8–7-րդ դդ.

2. Արուբանի աստվածուհին, մ.թ.ա. 1-ին հազ. սկիզբ

2

(հունական՝ Կիբելե), նաև Ներիգալ, Թիլլ, Նուբաղիգ և այլ աստվածներ: Խեթական պանթեոնից հայտնի են Տարքու (Տարխունտաս), Էլլիլ, Նինլիլ, Անկիս (ենթադրվում է՝ Ագնի) և այլն:

Հայոց հնագույն պետության՝ Արարատ-Ուրարտուի (մ.թ.ա. 9–6-րդ դարեր) աստվածությունների մասին մանրամասն տեղեկություններ կան Վանի Միհրի դռան արձանագրության մեջ, որի հեղինակները Իշպուինի (մ.թ.ա. 825-810) և Մենուա (մ.թ.ա. 810-786) արքաներն են: Ուրարտական աստվածների պանթեոնը կարգավորվել, ի մի է բերվել հենց այդ արքաների ժամանակ:

Ուրարտական դիցարանի գլխավոր աստվածը Խալդին է (ասուրական տարբերակով), որը Մուսասիրում հնչում է Արդի (Արդի) ձևով (հմմ. Արամազդը՝ իբրև գլխավոր աստված): Արդի-Խալդիի զույգն էր Արուբանի (Բագբարտու) աստվածուհին: Դիցարանի երկրորդ աստվածը Թեյշեբան էր՝ ռազմի, փոթորկի, որոտ-կայծակի աստվածը (հմմ. խուրրիական Թեշշուպը կամ Վահագնը): Թեյշեբայի զույգն էր Խուբա աստվածուհին (հմմ. խուրրիական Խեբաթը):

Ուրարտական դիցարանի կարևոր աստվածներից էր Արևի Շիվինի աստվածը (հմմ. խուրրիական Շիմիդի), որի զույգը Տուշպուեա աստվածուհին էր: Հիշատակվում են նաև Խուտաինի (ենթադրվում է ճակատագրի աստվածը), Սիելարդի (լուսնի աստված), Ուրատ, Իվարշա, Անիկու և այլ

Թեյշեբա աստծո բարդրաբանդակը, Արծկե, մ.թ.ա. 7-րդ դար





Թեյշեբա աստծո պատկերով բրոնզե թիթեղներ, Սերբար-թեփե, մ.թ.ա. 8–7-րդ դարեր

աստվածություններ: Մեր նախնիները՝ ուրարտացիները, ունեցել են նաև լեռների, ծովերի, հարթավայրերի աստվածներ և այլն:

Երվանդունիների և Արտաշեսյանների հարստության ժամանակ, ինչպես Միտանիում և Ուրարտուում, պետականորեն նորից կարգավորվել է կրոնական համակարգը: Եվ մ.թ.ա. 1-ին հազարամյակի վերջերին – մ.թ. 1-ին հազարամյակի սկզբներին, մինչև քրիստոնեության ընդունումը (301թ.), Հայաստանում կային համընդհանուր, համահայկական աստվածներ. Արամազդ (գլխավոր աստված, երկնքի ու երկրի տիրակալ), Անահիտ (սիրո, մայրության ու պտղաբերության), Աստղիկ (սիրո և գեղեցկության), Վահագն (արևի, փոթորկի, ռազմի), Միհր (կրակի ու արևի), Տիր (գրի ու դպրության), Վանատուր (հյուրընկալության), Նանե (իմաստության և ողջախոհության), նաև Տորք (բուսականության և խաղողագործության), որի պաշտամունքը տարածված էր նաև Խաթթիում, Անգեղ (Անգել, թռչնակերպ աստվածություն, հրեշտակ), որի պաշտամունքը տարածված էր հատկապես Հայկական լեռնաշ-



Արևի Շիվինի աստծո պատկերով բրոնզե գոտու մաս, մ.թ.ա. 7-րդ դար

խարհի հարավային մասերում (Անգեղ-տուն գավառ) և այլն:

Հայոց հնագույն աստված-աստվածուհիների մասին վկայություններ կան նաև քրիստոնեության ընդունումից հետո Հայաստանում ստեղծված պատմագրության մեջ՝ հայոց միջնադարյան պատմիչների աշխատություններում (Խորենացի, Ագաթանգեղոս, Սեբեոս), կապված հեթանոսական կրոնի ոչնչացման և նոր կրոնի՝ քրիստոնեության ընդունման հետ: Պատմիչների աշխատություններում պահպանված կցկտուր տեղեկություններից երևում է, որ հնում հայերը սիրելի աստվածներին բազմաթիվ տաճարներ, մեհյաններ, բագիններ և այլ շինություններ են նվիրել, որտեղ դրվել են նրանց մարմարե ու ոսկե արձանները: Հայտնի է, որ Եկեղյաց գավառի Երիզա ավանում եղել է Անահիտ աստվածուհու ոսկե արձանը, որը իբրև ավար մ.թ.ա. 34թ. հափշտակել է հռոմեացի զորավար Անտոնիոսը: Մեզ են հասել քիչ թվով աստվածների արձաններ և քանդակներ: Հայտնի են Անահիտ աստվածուհու բրոնզե գլուխը և Կոմմագենի Նեմրութ լեռան սրբատեղին, ուր Անտիոքոս 1-ինի (մ.թ.ա. 69-34) ժամանակ կանգնեցվել են Արամազդի, Վահագնի, Միհրի, Անահիտի, Տիրի, նաև Անտիոքոս 1-ինի հսկա արձանները: Յուրաքանչյուր աստված պատկերվել է իրեն բնութագրող որևէ խորհրդանիշով՝ զենքով, գավազանով, աղեղով, մարտական սակրով և այլն:

Անահիտ աստվածուհին

Արամազդ



Միհր

Վահագն

Տիր

Աստվածներին նվիրված տոնակատարությունների ժամանակ, ընդունված կարգի համաձայն, հայերը սիրելի աստվածներին նվիրաբերել են սպիտակ ցուլեր, սպիտակ նոխազներ, սպիտակ ձիեր, սպիտակ ջորիներ, ոսկե ու արծաթե զարդեր, ուռենու և արմավենու ճյուղեր, ծաղիկներ, հեղել են գինի և այլն:

Հայկական լեռնաշխարհի աստվածները շատ նմանություններ և ընդհանրություններ ունեն, որոնք վկայում են նրանց ընդհանուր հիմքի, արմատի մասին: Այդ նմանությունները առկա են նաև նրանց արտաքին տեսքի ու հագուկապի մեջ: Աստվածների նման էին հագնվում նաև հայոց արքաները, որոնք ինչպես վերևում նշվեց, երկրի վրա առաջինն էին աստծուց հետո: Ուրարտական աստվածների և արքաների ոչ ատամնաձև ու ատամնաձև թագերը նման են Երվանդունի և Արտաշիսյան հարստության արքաների թագերին: Իսկ Նեմրութի սրբավայրի աստվածները՝ Արամազդը, Վահագնը և Միհրը կրում են այնպիսի սրածայր խույրեր, ինչպիսիք ունեն Յազրլիկայայի ժայռաքանդակներին պատկերված աստվածներից (նաև խուրրիական աստվածներ) ոմանք:

Հազարամյակների ընթացքում Հայկական լեռնաշխարհում ստեղծված պետությունների գլուխ կանգնում էին նոր արքայատոհմեր, որոնք նոր փոփոխություններ էին կատարում դիցարանում: Առաջ էին քաշվում նոր աստվածների պաշտամունքներ, միաձուլվում էին հին ու նոր, գլխավոր ու տեղական աստվածները, որոնք նոր անուններով հին աստվածներ էին. օրինակ՝ Ար-Արա, Ալալու, Արդի-Խալդի, Արամազդ. Ան, Անու, Անիկու, Անունիտ, Անահիտ. Թեշշուբ, Թեյշեբա և այլն:

Այսպիսով, 1-ին հազարամյակի սկզբներին, քրիստոնեության ընդունումից առաջ Հայկական լեռնաշխարհում կային համահայկական աստվածներ՝ Արամազդ, Վահագն, Անահիտ, Միհր, Աստղիկ, Նանե, Տիր, Վանատուր և այլն, որոնք իրենց բնույթով խաղաղ էին, բարի՝ օժտված համամարդկային բարձր հատկանիշներով ու արժանիքներով:

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԹԱԳՈՒՀԻՆԵՐԸ

Կահիրեից 300 կմ հարավ՝ Ամառնա բնակավայրի մոտ, 1887 թ. պատահաբար հայտնաբերվեց Եգիպտոսի 18-րդ հարստության (մ.թ.ա. 1580-1090) արքունական դիվանը, որը մեծ նշանակություն ունեցավ ոչ միայն Եգիպտոսի, այլև Առաջավոր Ասիայի շատ երկրների ու ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար: Եգիպտական արքունիքի հայտնաբերված դիվանը կազմված էր մոտ 300 կավե տախտակներից և բովանդակում էր փարավոններ Ամենհոտեպ 3-րդի (1455-1419) և Ամենհոտեպ 4-րդի (1419-1400) դիվանագիտական նամակագրությունը Խուրրի-Միտանիի, Բաբելոնի, Ասորեստանի, Խաթթի և այլ երկրների միապետների հետ:

Ուսումնասիրությունները պարզել են, որ մ.թ.ա. 18-րդ դարից սկսած Խուրրի-Միտանի պետությունը կարևոր դեր է խաղացել Առաջավոր Ասիայի քաղաքական ու տնտեսական կյանքում: Այն առևտրական կարևոր հանգուցակետ էր հարևան երկրների համար:

Իր հզորության ժամանակ Խուրրի-Միտանիի արքաները իշխում էին Սիրիա–Պաղեստինին, որով սահմանակից էին դարձել հզոր Եգիպտոսին: Եգիպտոսը ևս ցանկանում էր տեր դառնալ կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող Սիրիա-Պաղեստին երկրամասին: Սկսվում են փոխադարձ ռազմական արշավանքներ: Եգիպտական փարավոնները իրենց արձանագրություններում պարծենկոտությամբ նշում են, որ արշավել են Խուրրի (նաև Նահարինա, Նահրի) երկրի վրա, ավերել են, այրել ու մեծ ավարով վերադարձել: Սակայն շատ հաճախ կրկնվող այդ արշավանքները ցույց են տալիս, որ հաջողությունը միշտ չէ, որ ուղեկցել է եգիպտացիներին, այլապես այդքան հաճախ չէին կազմակերպվի արշավանքներ դեպի Հայկական լեռնաշխարհ:

Թութմոս 4-րդ փարավոնը (1465-1455) հետևելով իր նախնիներին նոր արշավանք է ձեռնարկում դեպի Խուրրի-Միտանի, սակայն այդ արշավանքն ավարտվում է Արտատամա 1-ին արքայի հետ կնքված խաղաղության ու բարեկամության դաշնագրով: Թութմոս 4-րդը համոզվում է, որ իրեն ու իր երկրին ավելի ձեռնտու է Խուրրի-Միտանի երկիրն ունենալ իբրև դաշնակից ու բարեկամ, և կնքված պայմանագիրն ավելի ամրապնդելու համար խնամախոս

դեսպաններ է ուղարկում Արտատամա 1-ինի մոտ՝ կնության խնդրելով նրա դստերը: Խնամախոսները յոթ անգամ այցելում են Արտատամայի արքունիք, որն ի վերջո տալիս է իր համաձայնությունը, և արքայադուստրը դառնում է Եգիպտոսի թագուհի՝ Մուտեմույե անունով:

Ամառնայի նամակները ցույց են տալիս, որ Արտատամա 1-ինի դուստրը եգիպտական հաջորդ փարավոն Ամենհոտեպ 3-րդի (1455-1419) մայրն էր: Այս փարավոնը ևս ամուսնացել է Խուրրի-Միտանիի արքայադուստրերից մեկի հետ: Մինչև իր թագավորության 10-րդ տարին (մոտ 1445 թ. մ.թ.ա.) Ամենհոտեպ 3-րդը դեսպան-խնամախոսներ է ուղարկել Խուրրի-Միտանիի հաջորդ թագավոր Սուտառնա 1-ինի մոտ, խնդրելով նրա դուստր Գիլու Հեպայի ձեռքը: Հայտնի է, որ 6 անգամ Սուտառնայի արքունիք այցելելուց հետո միայն դեսպաններին հաջողվել է ստանալ արքայի համաձայնությունը: Գիլու Հեպան 317 կանանց ուղեկցությամբ ուղևորվել է Եգիպտոս:

Ամենհոտեպ 3-րդը ունեցել է խուրրիական ծագումով մեկ այլ կին ևս՝ Թիա անունով (հավանաբար Գիլու Հեպայի մահվանից հետո, որովհետև նրա մասին այլևս տեղեկություններ չկան նամակներում): Թիան ոչ արքայական ծագում է ունեցել: Նրա դամբարանում հայտնաբերված արձանագրություններից պարզվել է, որ Թիայի ծնողները եղել են Նահրի երկրից: Թիան կոչվել է «արքայի մեծ տիկին» և ազդեցիկ դիրք է ունեցել եգիպտական արքունիքում: Նա ունեցել է խելացի կնոջ համբավ և օգնել է ամուսնուն երկրի կառավարման գործում: Չնայած այդ արժանիքներին, ոչ արքայական ծագման պատճառով քրմերը հաճախ են պահանջել փարավոնից, որ բաժանվի նրանից: Սակայն Ամենհոտեպ 3-րդը միշտ մերժել է նրանց, պատասխանելով, որ Թիան հզոր փարավոնի կին է:

Հայտնի հնագետ, եգիպտագետ Պետրին, որը մանրամասն քննելով Խուրրի-Միտանիի արքայադուստրերի դիրքը եգիպտական արքունիքում, գրել է. «Թիայի դեմքը... տարբերվում է նախապես Եգիպտոսում տարածված տիպից..., Նեֆերտիտիի կերպարանքը շատ նման դիմագծեր ունի Թիայի հետ, այնքան շատ, որ հավանական է, թե երկուքն էլ պատկանում են նույն ցեղին»[1]:

Ամենհոտեպ 3-րդը երկարատև գահակալության շրջան է ունեցել և Ամառնայի նամակներից հայտնի է դառնում, որ նա, չնայած ծեր հասակին նորից ցանկացել է կին առնել Խուրրի-Միտանիի արքայադուստրերից մեկին: Այս անգամ հարսնացուն Տուշրատա արքայի դուստր Տադու Հեպան էր, որի հայտնի է Նեֆերտիտի անունով: Փարավոնը իր դեսպաններին ուղարկում է

1. Այս և հետագա մեջբերումները Ա. Խաչատրյանի «Հայաստանի սեպագրական շրջանի պատմություն» աշխատությունից են: Տես նաև Flinders Petrie,«A history of Egipt during the XVII and XVIII dinasties», II, 1924, աշխատությունը:

խնամախոսության: Դեսպանները իրենց հետ բերել էին փարավոնի նամակը, որտեղ գրված էր. «... Իմ եղբայր, ինձ կնության ուղարկիր քո դուստրն իբրև տիրուհի Եգիպտոսի»: Տուշրատան անմիջապես չի համաձայնվում, և սկսվում են երկարատև բանակցություններ: Միտանիի արքան մեծ քանակությամբ ոսկի է խնդրում փարավոնից, որը նրան անհրաժեշտ էր արտաքին թշնամիների դեմ պայքարելու համար (Խաթթի, Աշշուր): Սակայն փարավոնը չէր շտապում ուղարկել պահանջված ոսկին և գրում է. «... ինչ-որ ուղարկում են քեզ, սա չնչին է, իսկ եթե դու համաձայնվես տալ նրան ինձ կնության, որին ես փափագում եմ, նվերներ պիտի (գան ավելի շատ)»: Հերթական այցելություններից մեկի ժամանակ Մանե դեսպան-խնամախոսին է ներկայացվում հարսնացուն: Մանեն շատ է հավանում արքայադստերը և Տուշրատայի պատասխան նամակով, որտեղ նա նորից ոսկի էր խնդրում, վերադառնում է Եգիպտոս: Դեսպանների տեղեկությունները հարսնացուի մասին հավանաբար գոհացրել են փարավոնին, քանի որ Մանեն նոր նվերներով ու նոր նամակով նորից ուղևորվում է հայոց աշխարհ, որպեսզի արքայադստերը առաջնորդի Եգիպտոս: Հայտնի են նաև Տուշրատայի դեսպանների անունները՝ Կելիա, Ար-Թեշշուպ և Ասալի (գրագիր), որոնք նույնպես հաճախ էին լինում Եգիպտոսում, Մանեի նման նախապատրաստելով փարավոնի և Տադու-Հեպայի ամուսնությունը: Տուշրատան իր դստեր համար օժիտ է պատրաստում, որի համար ժամանակ էր պետք և որոշվում է, որ Մանեն պետք է 6 ամիս սպասեր Վաշուգանե մայրաքաղաքում, մինչև օժիտը պատրաստվեր: Նեֆերտիտիի օժիտը կազմված էր Հարմոհե և Մաշրիանի քաղաքների տուրքերից, ուղարկվում էին նաև մի քանի հարյուր կանայք, մի մատուռ՝ ազգային աստվածների պաշտամունքի համար: Տուշրատայի իշխանության տակ գտնվող քաղաքներն ու իշխանները ևս մասնակցում էին օժիտի պատրաստմանը:

Տադու-Հեպա (Նեֆերտիտի)

Ամառնայի նամակների հավաքածուի մեջ պահպանվել է Նեֆերտիտիի օժիտի մանրամասն ցանկը: Այն այսպիսին է. ոսկե, արծաթե ու պղնձե առարկաներ, անոթներ, հագուստի թանկարժեք գործվածքներ, ասեղնագործված իրեր, ոսկեհյուս պատմուճան, թանկագին գոհարներով զինվեր, դրվագված ապարանջաններ բազկի ու սրունքների համար, զարդեղեն, բաժակներ,

տուփեր, անուշաբույր յուղերով սրվակներ, պղնձե սպասք, ոսկե ու արծաթե արձանիկներ: Կան նաև արծաթապատ կառքեր՝ իրենց ձիերով, զենք ու զրահ, պղնձե սաղավարտներ, արծնապատ, ոսկով ու գոհարներով զարդարված ոսկեպատ աղեղներ ու այլ զենքեր: Ծերունի փարավոնի համար ուղարկվում էր ինչ-որ կախարդական բալասան, որը պետք է երկարացներ նրա կյանքը: Ուղարկվում էր նաև Նինվեի հովանավոր աստվածուհի Իշտարի (Շավուշկա) արձանիկը, որը պետք է բուժեր փարավոնին իր հիվանդության ժամանակ: Երկարատև պատրաստություններից հետո, երբ խնամախոսները վեց անգամ այցելել էին Տուշրատայի արքունիք, արքան իր դստերը ճանապարհում է Եգիպտոս, տալով իր օրհնությունը: Արքայադուստրը հասնում է Եգիպտոս և ընդունվում արքայավայել պատիվներով: Եգիպտացիները հիացած էին նրա գեղեցկությամբ և կոչում են նրան Նեֆերտիտի, որը «գեղեցկուհին եկավ» իմաստն ունի: Սակայն շուտով մահանում է Ամենհոտեպ 3-րդ փարավոնը և գահ է բարձրանում Ամենհոտեպ 3-րդի և Թիայի շատ երիտասարդ ավագ որդին, Ամենհոտեպ 4-րդ անունով (1419-1400):

Նոր փարավոնը հոր մահը անմիջապես հաղորդում է Տուշրատա արքային և խնդրում հոր հետ սկսած բարեկամությունը շարունակել իր հետ, քանի որ ինքը որոշել է Նեֆերտիտիին ընդունել իր կանանոցը՝ իբրև «մեծ իշխանուհի, իշխանուհի բոլոր կանանց և տիրուհի հարավի ու հյուսիսի»: Բարեբախտաբար մեզ է հասել գեղեցիկ ու հմայիչ Նեֆերտիտիի պատկերը: Ամառնայից հայտնաբերվել է Նեֆերտիտիի դիմաքանդակը: Պատկերված է նուրբ դիմագծերով, երկար վզով ու երազկոտ, նշաձև աչքերով հմայիչ մի կին: Ուսումնասիրողներից Բեցոլդը խոսելով Նեֆերտիտիի օժիտի մասին, այնուհետև գրում է. «Պետական թելադրանքներ, կառավարական սկզբունքներ ամենից առաջ, սակայն և կրոնական գաղափարներ նույն ճանապարհի պետք է բռնած լինեին»:

Ամենհոտեպ 4-րդ փարավոնը, չնայած երիտասարդ հասակին, ուժեղ անհատականություն էր, որի անցկացրած բարեփոխումներն արմատապես փոխել են Եգիպտոսի դարավոր սովորույթներն ու լայն, սուր բախումների տեղիք տվել: Նոր փարավոնը ժխտել է բոլոր հին աստվածներին և հաստատել միաստվածություն՝ Աթոնի «Արևի սկավառակի» պաշտամունքը: Ամենհոտեպ 4-րդը ևս անվանափոխվելով կոչվել է Էխնաթոն, որ նշանակում էր «Աթոնի վահան» կամ «Փառք Աթոնի»: Էխնաթոնը խնայել է միայն Արևի Ռա աստծուն, որն իր նկարագրով ու հատկանիշներով համապատասխանում էր նոր աստծուն: Էխնաթոնը հավատում էր, որ Արև-Աստվածը միակն է բոլորի համար, և նա է ստեղծել, արարել մարդկային ցեղը: Էխնաթոնն այնուհետև իրեն նվիրել է նոր կրոնի քարոզմանը, գրել է բազմաթիվ ներբողներ, կառուցել է

նոր մայրաքաղաք Ախեթաթոն անունով, որ նշանակում էր «Աթոն աստծու քաղաք»: Կառուցել է նաև տաճարներ, որոնց պատերը զարդարել է ոսկով իր սիրելի կնոջ՝ Նեֆերտիտիի ու երեք աղջիկների պատկերներով: Էխնաթոնը իր գրած ներբողների մեծ մասը նվիրել է Նեֆերտիտիին: Այդ ներբողներում նա գովերգում էր նրա հմայքն ու գեղեցկությունը.

Ես սիրում եմ քաղցր շունչը քո,
Ամեն օր հիանում եմ քո գեղեցկությամբ,
Իմ ցանկությունն է լսել քո ձայնը հմայիչ,
Որ հնչում է ինչպես շրջյուն հյուսիսային քամու[2]:

Կրոնական այս հեղափոխության մեջ մեծ է եղել արևապաշտ Միտանիի արքայադուստրերի դերը, որոնք Եգիպտոս էին տարել իրենց նախնիների՝ արևապաշտ հայ-արիների Արև-Աստծո պաշտամունքը: Այս մասին պրոֆեսոր Պետրին գրել է. «Էխնաթոնի մայրը միտանական-հայկական ծագում ուներ և նա էր բերել Աթոնի կրոնը իր հայրենիքից և սովորեցրել որդուն»[3]:

Ամառնայի նամակներից պարզ է դառնում, որ Էխնաթոնի ու Տուշրատայի հարաբերությունները այնքան էլ բարեկամաբար չեն զարգացել: Նոր փարավոնը չի ուղարկում Ամենհոտեպ 3-րդի խոստացած նվերները: Տուշրատան հատկապես շատ էր ուզում ստանալ իր դստեր երկու ոսկե արձանները, որոնք պատրաստի վիճակում ցույց էին տվել իր դեսպաններին: Որպես պատասխան Ամենհոտեպ 4-րդը ուղարկում է փայտե ոսկեզօծված արձաններ, որը խիստ վիրավորական էր Տուշրատայի համար: Հետագա նամակագրությունները և իրադարձությունները ցույց են տալիս, որ հարաբերությունները ավելի ու ավելի սառն են դարձել և ի վերջո խզվել են: Սա այն ժամանակն էր, երբ Խուրրի-Միտանին թուլանում էր, իսկ Եգիպտոսն էլ քաղաքական նպատակներով չէր ցանկանում շարունակել բարեկամությունը թուլացող երկրի հետ:

Էխնաթոնը և Նեֆերտիտին որդի չեն ունեցել, այդ պատճառով էլ, երբ կյանքի 30-րդ տարում վախճանվել է փարավոնը, գահը անցել է փեսաներին, նախ՝ Սեմնեխկարին, ապա Թութանհամոնին: Ամուսնու մահից հետո ապրելով ևս մի քանի տարի, Նեֆերտիտին մահացել է 37 տարեկանում:

Այսպիսով, գրեթե երեք սերունդ շարունակվել են Խուրրի-Միտանիի և Եգիպտոսի արքայական ընտանիքների ազգակցական-խնամիական կապերը: Կարճ ժամանակամիջոցում Եգիպտոս հարս են գնացել Արտատամա 1-ինի դուստր Մուտեմույան, Սուտառնա 1-ինի դուստր Գիլու Հեպան, իշխան Յուայի

2. *В. Любимов,* Искусство древнего мира, Москва, 1980, стр. 89.
3. *J. Breasted,* Ansient Times, Boston, 1935, p 116-117. Մ. Գավուկչյան «Արմեն ու հայ անունների ծագումը և Ուրարտուն, Պեյրութ, 1973, էջ 373:

դուստր Թիան և Տուշրատա I-ինի դուստր Տադու Հեպա-Նեֆերտիտին: Հայոց աշխարհի արքայադուստրերը մեծ համբավ են ունեցել եգիպտական արքունիքում[4]: Նրանք աչքի են ընկել իրենց բացառիկ խելքով, հմայիչ գեղեցկությամբ[5] (խուրի-հուրի=գեղեցկուհի) և խելացի խորհրդատուներ ու օգնականներ են եղել իրենց ամուսին-փարավոնների համար: Հայոց արքայադուստրերի հետ անկասկած Եգիպտոս են մեկնել նաև հարյուրավոր կանայք՝ դայակներ, սպասավորներ, պալատական այլ կանայք, որոնք եգիպտական արքունիք էին մտցնում իրենց հայրենիքի բարքերը, սովորությունները, ինչպես նաև կրոնական հայացքները: Եգիպտոսի պատմության մեջ աչքի է ընկնում հենց այս՝ նոր թագավորության շրջանը, որը սկսվում է 18-րդ հարստության փարավոնների գահակալությամբ: Այս շրջանը համարվում է եգիպտական պետության ծաղկման ու բարգավաճման ժամանակաշրջան: Կարելի է մտածել, որ այս հաջողությունները պայմանավորված են եղել նաև Խուրրի-Միտանիի թագավորների և եգիպտական փարավոնների միջև հաստատված ազգակցական ու բարեկամական կապերով:

4. Համեմատության համար նշենք, որ խեթական թագավոր Խաթթուսիլի 3-րդի (մ.թ.ա. 13-րդ դար) կինը՝ խուրրիական ծագումով Պուդո Հեպան ևս մեծ ազդեցություն է ունեցել խեթական արքունիքում: Նա խուրրիաբնակ Կիցվատնայի (Կիլիկիա) քրմի դուստրն էր, եղել է կիրթ, զարգացած ու ազդեցիկ թագուհի «tawannas»: Նրա ազդեցությունը մեծ է եղել նաև կրոնական ու մշակութային հարցերում: Խաթթուսիլի 3-րդը այնքան մեծ վստահություն է ունեցել կնոջ՝ Պուդո Հեպայի հանդեպ, որ հաճախ թույլատրել է իր անունից կազմված փաստաթուղթը վավերացնել միայն Պուդո Հեպայի կնիքով (ИДВ, II, стр. 151):

5. Կարելի է մտածել, որ Հայկական լեռնաշխարհից հարավ ապրող ժողովուրդների մոտ հնում տարածված ու այժմ էլ օգտագործվող **հուրի-փերի արտահայտությունը գեղեցկուհի իմաստով կապ ունի խուրրի (=հայ) անվան ու հմայիչ հայուհիների հետ:**

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ. ՀԱՅՈՑ ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ

Համաշխարհային, նաև հայոց պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պատմական դեպքերը, իրադարձությունները, տնտեսական ու քաղաքական իրավիճակները ժամանակ առ ժամանակ կրկնվում են: Այդ մասին շատերը գիտեն (փիլիսոփաներ, պատմաբաններ, աստղաբաններ), սակայն քչերն են փորձում օգտագործել պատմության դասերը: Յուրաքանչյուր նոր սերունդ զարմանալիորեն վստահում է միայն իր խելքին, փորձին, ուժին ու զարմանալիորեն գործում է նույն սխալները, ինչ իրենց նախորդները:

Պատմությունը բազմաթիվ անգամներ կրկնվել է նաև հայոց երկարատև պատմության ընթացքում: Գրավոր աղբյուրներով վավերացված հայոց ավելի քան 5-6 հազարամյա պատմությունը վկայում է, որ Հայկական լեռնաշխարհում մեր նախնիների՝ հայ-արմենների կողմից ստեղծված պետական կազմավորումների ու պետությունների (Միտանի, Նաիրի, Հայասա, Արարատ-Ուրարտու, Երվանդունիների Հայաստան, Արտաշիսյանների Հայաստան, Արշակունիների Հայաստան, Բագրատունիների Հայաստան, Կիլիկիայի հայկական թագավորություն) առաջնորդները՝ թագավորներն ու արքաները, նաև ազնվականներն ու հոգևորականները նույնպես դասեր չեն քաղել պատմությունից:

Կրկնվող սխալներից կարևորվում են **կողմնորոշման** հարցը ու **անմիաբանությունը,** որը կողմնորոշման հարցի ուղղակի արդյունքն է, և **օտարամոլությունը,** որը սեփական ուժերին չվստահելու, սեփական պատմությունն ու մշակույթը չիմանալու հետևանք է:

Անդրադառնանք վերոհիշյալ և այլ հարցերի, որոնք ճակատագրական են եղել հայ ժողովրդի համար: Փորձենք վերլուծել պատմության դասերը, քանի որ առանց պատմության իմացության ու նրա դասերի, չենք կարող անկորուստ ու անխափան առաջ շարժվել: Առանց հետ նայելու ու առանց իմանալու, թե ի՞նչ ես թողել անցյալում, դժվար է առաջ գնալ: Սա կարևոր է հատկապես հայ ժողովրդի համար, քանի որ հայ ցեղի պատմությունը շատ հին է, այնքան, որքան մարդկային ցեղի պատմությունն է և սկսվում է այն ժամանակներից, երբ Մայր Երկրի վրա արարվել է մարդ արարածը: Հայկական լեռնաշխարհում ստեղծված առասպելաբանությունը՝ խուրրի-հայկական «Երկնային թագավորության մասին» (մ.թ.ա. 3–2-րդ հազարամյակներ) և «Վահագնի ծնունդը»

պոեմների վկայությունները, նաև մեր ժողովրդի **հայ** ու **արմեն** անունները թույլ են տալիս ասելու, որ հայ ցեղի մարդը արարվել է Հայկական լեռնաշխարհում՝ Տիգրիս ու Եփրատ գետերի ակունքների շրջանում **երկրային** (Հայա աստվածուհի, որտեղից էլ հայ անվանումը) ու **երկնային, տիեզերական** (Արարիչ Ար Աստված, որտեղից էլ՝ արմեն, արման անվանումները) ուժերի կողմից[1], ի տարբերություն այլ ցեղերի, որոնք երկրային սկիզբ ու ծագում ունեն (համաձայն շումերական, աքադական և բաբելական առասպելաբանության՝ մարդն ստեղծվել է Երկրի վրա ապրող աստվածների կողմից, իսկ ըստ Աստվածաշնչի՝ մարդը ստեղծվել է կավից): Ինչպես տեսնում ենք ի սկզբանե՝ իր արարման պահից հայ ցեղի մարդը՝ հայ-արմենը, այլ սկիզբ ու ծագում ունի և նյութից ու նյութականից բացի (երկրային սկիզբ) օժտված է նաև հոգևոր, ոգեղեն հատկանիշներով (երկնային սկիզբ): Հայ մարդու հնագույն կերպարը՝ ի դեմս Հայկ Նահապետի, Արա Գեղեցիկի, Արամի (Արամե), Մենուայի, Արգիշտիի, Երվանդի, Արտաշեսի, Տիգրան 2-րդի և այլոց, հազարամյակների հեռվից թույլ է տալիս ասելու, որ հայ ցեղի մարդը քաջ է, արի, հպարտ, հաստատակամ, ազնիվ, շիտակ, արարող ու հետաքրքրասեր: Նրան հատուկ են անկեղծությունը, բարությունը, խոսքը չդրժելը, ասպետական վերաբերմունքը մարտի դաշտում և այլն: Հայ ցեղի մարդը ունի նաև իր արտաքին բնորոշ հատկանիշները, որը գիտնականները (ֆոն Լուշան) «արմենոիդ» մարդաբանական տեսակ են կոչել: Այդ տեսակին բնորոշ են կլոր գանգը, տափակ ծոծրակը, բարձր քթոսկրը, կլոր, խոշոր ականակապիճները, ալիքաձև մազերը և այլն:

Պատմությունը հայ ժողովրդին բազում փորձությունների է ենթարկել: Մարդկային, նյութական ու հոգևոր հսկայական կորուստներ ենք ունեցել: Սակայն մեր ապրած հազարամյակները, դժբախտություններն ու դժվարությունները ի վիճակի չեն եղել փոխելու հայի տեսակը, և հայ ցեղի մարդը հազարամյակներ շարունակ պահպանել է իր լավագույն որակները, իրեն բնորոշ հատկանիշները: Մարդկային ու նյութական կորուստներից առավել հոգևոր ու բարոյական կորուստներն են անդառնալի, երբ այլևայլ պատճառներով խեղվում է մարդը, նրա գիտակցությունը, մտածողությունը, ոգին: Ցավոք, հազարամյակների հեռավորությունից կարող ենք արձանագրել, որ տարբեր թշնամիների դեմ դարեր տևած հաջող ու անհաջող պատերազմների, տնտեսական ու մշակութային շփումների հետևանքով հայ ցեղի ամբողջական կերպարը որակական փոփոխությունների է ենթարկվել: Դարերի ընթացքում մեզ են փոխանցվել օտար գեներ, օտար արյուն, օտար բարքեր, օտար սովորույթներ, նաև օտար կրոն: Եվ այսօր **«ոգեղեն, տիեզերական»** հայի դեմ

1. *Ա.Տիրյան*, 2002, էջ 11-22:

կանգնած է օտար գեներ կրող «երկրային» հայը: «Երկրային» հայը շատ ավելի նյութապաշտ է, նրան խորթ են հայ ցեղին բնորոշ վերոհիշյալ հատկանիշներից շատերը: Նա հաճախ ոչ միայն չի ընկալում դրանք, այլև չի ընդունում այն ամենը, ինչ ազգային է: Նա խոնարհվում է օտարին, գովաբանում ամեն օտար, վտանգավոր երևույթ (կրոն, բարքեր, սովորույթներ): Նա նաև հեշտ ընկալունակ է օտար մշակույթի, վարք ու բարքի հանդեպ: Նա փորձում է անգլիացուց լավ անգլերեն խոսել, ռուսից լավ՝ ռուսերեն և այլն: Հենց այսպիսի մարդկանց մեջ են մեծ թիվ կազմում այն հայերը, որոնք ոչ միայն իրենք չեն ընդունում այն, ինչ ազգային է, այլև խանգարում ու պայքարում են այն ամենի դեմ, ինչ հայկական է ու ազգային: Բարեբախտաբար միշտ եղել ու այսօր էլ շարունակում է գոյություն ունենալ հայի ոգեղեն տեսակը, որն իր մեջ կրել ու կրում է հայ ցեղի լավագույն որակներն ու հատկանիշները: Այդ հատկանիշներով օժտված էին Հայկ Նահապետը, Արամը, Արգիշտի 1-ինը, Տիգրան 2-րդը, Լևոն 1-ինը, Դավիթ Բեկը, Անդրանիկը, Գարեգին Նժդեհը, Վազգեն Սարգսյանը և ուրիշներ: Հենց այս հայերն են Հայաստանը ու հայ ոգին պահել ու հենց այսպիսի հայերն են պահելու Հայաստանը: Նաև այսպիսի հայը կարող է ու պետք է իրականացնի հայության մեծ երազանքներն ու ձգտումները:

Ժողովրդի հավաքական միտքը շատ զորեղ է, ճշմարիտ և իմաստուն: Սակայն ցանկացած ժողովուրդ միայնակ, առանց արժանավոր առաջնորդի անզոր է: **Հզոր առաջնորդի, անհատի** դերը շատ մեծ է պատմության կերտման մեջ: Եվ պատահական չէ, որ հանգիստ ընթացող պատմության ընթացքը բեկվում է, երբ հայտնվում է հզոր անհատը: Շատ մեծ ու պատասխանատու է ցանկացած իրադարձության կամ պետության գլուխ կանգնած առաջնորդի ու անհատի դերը: Իսկ առաջնորդը պետք է ունենա շատ կարևոր մի հատկություն: Նա պետք է օժտված լինի **միավորող, համախմբող** հատկությամբ:

Հայ ազգը հիմնականում անհատների ազգ է: Իզուր չէ ասվում «Յուրաքանչյուր հայ արքա է»: Ուրեմն շատ հզոր անհատ պետք է լինի այն հայը, որը կարողանա համախմբել ողջ հայությանը: Իսկ **համախմբված հայությունը մեծ ուժ է:** Հետևաբար հայության հաջողության գրավականը հայ ցեղի լավագույն հատկանիշներով, ազգային գաղափարախոսությամբ և ազգային նկարագրով օժտված **հզոր անհատների միավորումն է էլ ավելի հզոր անհատի շուրջ,** որը և կառաջնորդի ողջ ազգը:

Հայոց պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայոց պետականության, հայ հասարակության, հայ ազնվականության ու հոգևոր դասի առջև հաճախ է դրվել **կողմնորոշման** խնդիրը: Իսկ այս երևույթը ազգը և պետությունը պառակտելու, թուլացնելու լավագույն ու հեշտ միջոցն է: Կողմնորոշման խնդիրը հաճախ հրահրվել է դրսից, օգնական ուժեր ունենալով

ներսում: Պատմությունը վկայում է, որ հարցը շահարկվել է գահակալական պայքարի, թույլ թագավոր և թույլ պետություն ունենալու ժամանակ: Կողմնորոշման խնդիրը և արտաքին ուժերի միջամտությունը ճակատագրական են եղել Հայկական լեռնաշխարհում ստեղծված մեզ հայտնի առաջին հայոց հզոր պետության՝ Միտանիի կամ Խուրրի-Միտանիի համար (մ.թ.ա. 16-14-րդ դդ.): Միտանիի թագավորներ Պարատտարնայի (մ.թ.ա. 15-րդ դ. սկիզբ), նրա որդի Սաուսադատտարի (մ.թ.ա. 15-րդ դ. կես) ու Արտադամայի (մ.թ.ա. 15-րդ դարի վերջ) ժամանակ Միտանին դարձել է Առաջավոր Ասիայի հզոր պետություններից մեկը, որը միավորել է ողջ հայալեզու (խուրրիալեզու) տարածքները և որի սահմանները տարածվում էին Միջերկրական ծովի արևելյան ափամերձ շրջաններից, Կիլիկիա-Կիցվատնայից մինչև Աշշուր, Արրապխա (Քիրքուկ), Զագրոսի լեռներ, Տիգրիս ու Եփրատ գետերի ավազաններ և Կովկասի նախալեռներ: Այդ ժամանակաշրջանում Միտանին Եգիպտոսի միակ ախոյանն էր տարածաշրջանում և տասնամյակներ տևած Միտանի-Եգիպտոս ռազմական բախումները ավարտվել են հաշտության պայմանագրով, որի հետևանքով Առաջավոր Ասիան բաժանվել է ազդեցության ոլորտների: Սակայն ստեղծված խաղաղ վիճակը ձեռնտու չէր հզորացող Խաթթիի, ապա Բաբելոնի ու նոր կազմավորվող Ասորեստանի համար: Խեթերի ընդարձակվելու, նոր տարածքներ ձեռք բերելու բոլոր փորձերը ավարտվում էին անհաջողությամբ՝ բախվելով խուրրիների (հայ-արմենների) ռազմական ուժին: Մոտավորապես մ.թ.ա. 1345թ. Խաթթիում գահ է բարձրացել Սուպիլուլիումաս 1-ինը (1345-1322), որին հաջողվել է Միտանիում հրահրել գահակալական պայքար: Պայքարի արդյունքում, դավաղրությունների հետևանքով Միտանին բաժանվել է երկու մասի՝ Խուրրի և Միտանի: Քաղաքական քաոսը Միտանիում ստեղծվել էր կողմնորոշման պատճառով (Եգիպտոս, թե՞ Խաթթի), որը հմտորեն կազմակերպել ու իրագործել է Խաթթիի թագավոր Սուպիլուլիումասը:

Մասնատված Միտանին այլևս վտանգավոր չէր և նույնիսկ բարեկամ ու դաշնակից Եգիպտոսը երես է թեքել թուլացող Միտանիից և նրա օգնություն խնդրող թագավորից՝ Տուշրատայից: Միտանիի թուլացմանն ու մասնատմանը մասնակցել են նաև հզորացող Աշշուրը (ապագա Ասորեստանը) և Բաբելոնը: Միտանիի անկումից հետո՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջին և 1-ին հազարամյակի սկզբներին ստեղծվել են խուրրիական (հայկական) փոքր թագավորություններ. Շուպրիա (Սասուն, Աղձնիք), Իսուվա (Ծոփք), Բաբխի (Հայկական Տավրոսի լեռնային շրջան) և այլն, որոնք չնայած հերոսաբար կռվում էին Խաթթիի, Ասորեստանի ու Բաբելոնի դեմ, սակայն նրանք Միտանիի նախկին հզորությունը չունեին և վտանգավոր չէին:

Դարեր տևած պայքարից հետո, մ.թ.ա. 9-րդ դարում Հայկական լեռնաշխարհում ստեղծվել է նոր հզոր պետություն՝ Արարատ-Ուրարտուն, հայությանը սպառնացող նոր վտանգավոր ու հզոր թշնամու՝ Ասորեստանի դեմ պայքարելու համար: Ուրարտական պետությունը գոյություն է ունեցել մոտ 300 տարի: Ուրարտական վերջին թագավորը Ռուսա 4-րդն էր (մ.թ.ա. 609-590): Ռուսա 4-րդից հետո տեղի է ունեցել արքայատոհմի փոփոխություն և մ.թ.ա. 580թ. գահը իրենց ձեռքն են վերցրել նոր արքայատոհմի՝ Երվանդունիների ներկայացուցիչները: Առաջին թագավորը Երվանդ 1-ինն էր, որն իշխել է մ.թ.ա. 580-560թթ.:

Կողմնորոշման հարցը և սեփական ուժերին չվստահելը իրենց առավել զգացնել տվեցին մ.թ.ա. 1-ին հազարամյակի վերջերին, երբ պատմության բատերաբեմում հայտնվեցին Հռոմը և Պարսկաստանը: Այս երկրներից յուրաքանչյուրը գործադրելով տարբեր միջոցներ (ռազմական, տնտեսական, բանակցություն, դավաղրություն) ցանկանում էր կամ իր կողմը գրավել, կամ նվաճել Հայաստանը: Տիգրան 2-րդ Մեծի (մ.թ.ա. 95-55) ժամանակ նրանց բոլոր ջանքերը ձախողվեցին: Հայոց թագավորին հաջողվեց պարտության մատնել ներքին ու արտաքին թշնամիներին, որոնք փորձում էին իր դեմ հանել նույնիսկ որդիներին: Դատաստան տեսնելով ապստամբած դավաճանների, այդ թվում իր որդիներ Զարեհի ու Տիգրանի հետ, նա ապահովեց հայոց պետության ու պետականության ապագան: Տիգրան 2-րդի մահից հետո Հռոմն ու Պարսկաստանը շարունակում են իրենց մրցակցությունը Հայաստանին տիրելու համար: Հայոց թագավորները ստիպված էին հանդես գալ կամ Հռոմի, կամ Պարսկաստանի կողմից:

Տիգրան 2-րդ Մեծ

298թ. Մծբինի հաշտության պայմանագրով (Հռոմի և Պարսկաստանի միջև) Հայաստանը Հռոմի օժանդակությամբ ճանաչվում է անկախ պետություն, քանի որ հայերը նրանց դաշնակիցն էին: Հայոց թագավոր է հռչակվում Տրդատ 3-րդը (298-330): 301թ. Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո հայերը ավելի շատ կողմնորոշվում են դեպի, քիչ ավելի ուշ (320թ.) նույնպես քրիստոնեություն ընդունած, Արևելահռոմեական կայսրություն (Բյուզանդիա): Սակայն բյուզանդական կայսրերը ոչ միայն շարունակեցին հռոմեացիների նվաճողական քաղաքականությունը հայերի հանդեպ, այլև պատեհ առիթը բաց չէին թողնում Հայաստանը ընդհանրապես որպես պետություն վերացնելու և պրովինցիայի կարգավիճակով Բյուզանդի-

Հայոց Արտավազդ թագավորը, Տիգրան 2-րդի որդին

ային միացնելու համար: Օգնության նպատակով կողմերին ուղղված հայկական արքունիքի բոլոր դիմումները ավարտվում էին հուսախաբությամբ: Ե՛վ բյուզանդացիները, և՛ պարսիկները հմտորեն օգտագործում էին արքունիքի, կաթողիկոսի և նախարարական տների միջև եղած հակասությունները: Այս ամենը ավարտվեց Հայաստանի առաջին (387թ.) և երկրորդ (591թ.) բաժանումներով: Դրվում էր մինչ օրս շարունակվող հայ ժողովրդի ու հայոց պատմության կրկնվող դժբախտությունների ու անհաջողությունների սկիզբը: Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև բաժանված երկիրը այլևս վտանգավոր չէր: Հայաստանի առաջին բաժանումից հետո Բյուզանդիան վերացնում է հայոց թագավորությունը Արևմտյան Հայաստանում: Արշակ 3-րդ Արշակունու մահից հետո (387թ.) այլևս նոր թագավոր չի նշանակվում հայոց գահին: Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանում մինչև 428թ. պահպանվում է հայոց թագավորությունը: Այն վերանում է, երբ պարսից թագավորից դատարկ խոստումներ ստացած (իբր թագավորից հետո իշխանությունը տրվելու է նրանց), անհեռատես ու փառասեր հայ նախարարները ըմբոստանում են թագավորի՝ Արտաշեսի (422-428) դեմ, պահանջելով հեռացնել նրան գահից: Դա նաև պարսից թագավորի ցանկությունն էր: Եվ 428թ. գահընկեց է արվում Արշակունյաց արքայատոհմի վերջին թագավորը՝ Արտաշեսը: Երկրի այդ վիճակը ազգի հետագա գոյության ու ապագայի համար անհեռանկար, վտանգավոր վիճակ էր ստեղծում, քանի որ ազգը գոյատևում ու բարգավաճում է միայն սեփական պետություն ունենալու պայմաններում: Զարմանալիորեն հայ ցեղը իր լավագույն որակների շնորհիվ (ազգային ինքնության գիտակցում, ազգային ավանդույթներ, ծեսեր, լեզու, մշակույթ) մի քանի անգամ իր երկարատև պատմության ընթացքում կարողացել է պահպանել իր ինքնությունը՝ առանց պետություն ունենալու:

Հայոց Արտաշես թագավորը

7-րդ դարի սկզբներից սկսվել են արաբական

արշավանքները: 640թ. արաբները առաջին անգամ հայտնվում են Հայաստանում: Հայերը հույս ունեին, որ բյուզանդացիները կօգնեն իրենց, բայց բյուզանդական բանակը ոչինչ չարեց հայերին պաշտպանելու համար: Ժողովրդին և հայրենիքը պաշտպանելու գործը իր վրա վերցրեց Թեոդորոս Ռշտունին, որը համախմբելով հայոց ռազմական ուժը, հմուտ գործողություններով 646թ. արաբներին դուրս քշեց Հայաստանի սահմաններից: Սակայն սեփական ուժերին չվստահելը, կասկածը հաղթանակի հանդեպ գլուխ էր բարձրացրել, և ազնվականության, կրոնական ու զինվորական գործիչների միջև չկար քաղաքական միասնություն: Հայ ազնվականների մի մասը, կաթողիկոս Ներսես Տայեցու (641-661) գլխավորությամբ, կողմնորոշվել էր դեպի Բյուզանդիա: Ազնվականության մյուս մասը սպարապետ Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ գտնում էր, որ ստեղծված իրավիճակում պետք է բանակցությունների մեջ մտնել արաբների հետ և հաշտության պայմանագիր կնքել: Թեոդորոս Ռշտունին հեռատեսորեն հասկանում էր, որ արաբական խալիֆայությունը հետզհետե հզորանում էր, իսկ Բյուզանդիան՝ թուլանում, և այս պայմաններում հայերին ձեռնտու էր բարեկամ լինել արաբներին: 652թ. Դամասկոսում արաբների հետ կնքվում է պայմանագիր, որը Հայաստանին թույլ էր տալիս ունենալ որոշ ինքնուրույնություն: Պայմանագրով Թեոդորոս Ռշտունին նշանակվում է Հայաստանի ու Անդրկովկասի (Արմենիայի) կառավարիչ, 3 տարի հայերը հարկ չէին վճարելու, իսկ հետո իրենք էին որոշելու հարկի չափը, 15.000 հեծելազոր կարող էին ունենալ, Բյուզանդիայի հարձակման դեպքում արաբները օգնելու էին հայերին և այլն:

855թ. արաբական խալիֆը Հայաստանի կառավարիչ է նշանակում Աշոտ Բագրատունուն, որը հմտորեն օգտագործելով արաբա-բյուզանդական հակամարտությունները, նախապատրաստում է հայկական պետականության վերականգնման գործը: Դա տեղի է ունենում 885թ., երբ թագավոր է դառնում Աշոտ 1-ինը (885-890), և Հայաստանում հիմք է դրվում Բագրատունիների թագավորությանը: Բագրատունյաց թագավորները դժվարին պայքարում կարողանում են միավորել երկրի մի մասը: Սակայն հայկական ուժեղ պետության ստեղծմանը դեմ էր Բյուզանդիան, որը նորից նպատակ էր դրել զավթել ամբողջ Հայաստանը, դավանափոխ անել հայերին և ձուլել հույներին: Դա բյուզանդական կայսրերի վաղեմի երազանքն էր, որը նրանք ժամանակ առ ժամանակ փորձում էին իրականացնել: Հայաստանի հանդեպ Բյուզանդիայի

Հայոց թագուհի

Արքայադուստր Խոսրովդուխտը, 3-րդ դար

վարած անհեռատես քաղաքականությունը սկսվել էր դեռևս 4-րդ դարից: Հայաստանը որպես պետություն վերացնելու ու հայերի դիմադրությունը կոտրելու համար բյուզանդացիները դիմեցին հայկական ռազմական ուժը Հայաստանից դուրս բերելու աղետաբեր քաղաքականությանը: Հուստինիանոս 1-ինի (527-565) ժամանակ լայնորեն զինվորական ծառայության մեջ են ներգրավվում Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի բնակիչները, որոնք մասնակցում էին Բյուզանդիայի մղած բոլոր պատերազմներին: Իսկ պատերազմներ Բյուզանդիան մղում էր Բալկաններում, Հյուսիսային Աֆրիկայում և Պարսկաստանում: Բյուզանդական կայսրերից Մորիկը (Մավրիկիոս) հայոց ռազմական ուժը ուղղակի վերացնելու, ոչնչացնելու քաղաքականություն էր վարում: Նրա հրամանով երկրում անցկացված զորահավաքների ժամանակ կազմավորվում էին հայերից բաղկացած հեծյալ ու հետևակ գնդեր, որոնք ուղարկվում էին Թրակիա, Իտալիա և այլ ճակատներ, ուր և նրանք ոչնչանում էին արյունահեղ ընդհարումների ու պատերազմների ժամանակ: Արևմուտքում՝ Իտալիայում ու Բալկաններում (Թրակիա, Դանուբի ափեր) գերմանական ցեղերի (օստ գոթեր, ալեմաններ, ֆրանկներ) ու սլավոնների դեմ մղված պատերազմներում են գտնվել հայ նախարարական տների շատ ներկայացուցիչներ, այդ թվում՝ Մուշեղ Մամիկոնյանը, Արտավան Արշակունին, Արատիոս (Հրահատ), Նարսես ու Իսակես (Սահակ) Կամսարական եղբայրները և ուրիշներ: Բյուզանդացիների կողմից վարվող այս քաղաքականությունը հայ ժողովրդին զրկում էր ինքն իրեն պաշտպանելու հնարավորությունից: Հայոց ռազմական, այդ թվում նախարարական ուժը մեծ չափով ոչնչացվեց, իսկ մարտական ոգին թուլացավ հենց բյուզանդական տիրապետության ժամանակ, բյուզանդական կայսրերի անհեռատես ու վտանգավոր քաղաքականության հետևանքով: Իսկ հետևանքները աղետալի եղան հայերի, հատկապես բյուզանդացիների համար:

11-րդ դարում Առաջավոր Ասիայում հայտնվում են նոր թշնամիներ՝ թուրք-սելջուկները, որոնք սպառնում էին և՛ հայերին, և՛ բյուզանդացիներին: Սակայն այս վտանգը չի ազդում բյուզանդացիների կողմից վարվող հակահայ քաղաքականության վրա: Այնքան մեծ էր Հայաստանը վերացնելու ցանկությունը, որ բյուզանդացիները չէին զգում թուրք-սելջուկների կողմից եկող վտանգը իրենց պետության համար: 1020թ. մահանում է Բագրատունյաց Հայաստանի թագավոր Գագիկ 1-ինը: Գահը անցնում է նրա ավագ որդուն՝ Հովհաննես-Սմբատին (1020-1041), բայց նրա դեմ ըմբոստանում է կրտսեր եղբայրը: Նա փորձում է գահին հաստատվել հայ նախարարների, ապա օտար պետությունների օգնությամբ: Ի վերջո կաթողիկոս Պետրոս Գետադարձի օգնությամբ, իշխաններ Սահակ և Վահրամ Պահլավունիների և այլոց միջամտությամբ 1022թ. հաշտություն է կնքվում, որի համաձայն Անին իր շրջակայքով հանձնվում է Հովհաննես-Սմբատին, իսկ բաժան-բաժան արված գավառները՝ Աշոտին: Ինչպես տեսնում ենք, արդեն փոքրացած Հայաստանը նորից բաժանվում է երկու մասի: 1041թ. Աշոտի, ապա Հովհաննես-Սմբատի մահից հետո բյուզանդամոլ տարրերի, Պետրոս Գետադարձի և նրան միացած Սարգիս Սյունեցու (Վեստ Սարգիս) օժանդակությամբ Անին հանձնվում է բյուզանդացիներին: Չնայած անեցիները և հայրենասեր նախարարները Վահրամ Պահլավունու գլխավորությամբ վճռականորեն ոտքի կանգնեցին, նույնիսկ գահ բարձրացրին Աշոտ 4-րդի պատանի որդուն՝ Գագիկ 2-րդին (1042-1045), սակայն արդեն ուշ էր, և բյուզանդացիները գրավեցին Անին, ու Բագրատունյաց թագավորությունը վերացավ: Իսկ դա խիստ վտանգավոր էր, քանի որ սկսվել էին թուրք-սելջուկյան արշավանքները, որոնք, ինչպես վերը նշվեց, աղետալի եղան և՛ հայերի, և՛ բյուզանդացիների համար: 1071թ. Մանազկերտի մոտ տեղի ունեցած ճակատամարտում բյուզանդական բանակը ծանր պարտություն կրեց սելջուկներից: Անպաշտպան հայ բնակչությունը ֆիզիկական գոյությունը պահպանելու համար սկսեց հեռանալ հայրենիքից: Նրանց մի ստվար հատված հաստատվեց Կիլիկիայում, էլ ավելի մեծացնելով տեղի հայ բնակչության թիվը:

1080թ. Կիլիկիայում ստեղծվում է հայկական թագավորություն, որի հիմնադիրը Ռուբեն 1-ինն էր (1080-1095): Այս թագավորությունը ստեղծվեց Բյուզանդիայի դեմ մղված պայքարում, որի ժամանակ հայերը հաճախ հանդես էին գալիս խաչակիրների հետ, որոնք Ասորիքում և Պաղեստինում ստեղծել էին պետություններ:

Կիլիկիայի հայկական թագավորությունը մեծ հաջողություններ ունեցավ Լևոն 2-րդ իշխանի (1187-1219), ավելի ուշ (թագադրվելուց հետո) Լևոն 1-ին թագավորի (1198-1219) ժամանակ: 1226թ. Կիլիկիայում հաստատվում է նոր՝ Հեթումյան արքայատոհմի իշխանությունը, երբ Լևոն 1-ինի դուստր Զաբելը ամուսնանում է Կոնստանտին Գունդստաբլի որդի Հեթումի հետ (1226-1270): Նոր թագավորը կարողանում է ներքին ու արտաքին ճիշտ քաղաքականություն վարել: Նա ազնվականներին զանազան պաշտոններ տալով կապում է կենտրոնական իշխանության և արքունիքի հետ: Հեթումի թագավորության տարիներին սկսվում են թաթար-մոնղոլական արշավանքները դեպի Մերձավոր Արևելք ու Փոքր Ասիա: Կիլիկյան արքունիքը ունենալով մայր հայրենիքի

տխուր փորձը, որը գրավվել ու ավերվել էր մոնղոլների կողմից, որոշում է բանակցությունների մեջ մտնել նրանց հետ: Կոնստանտին Գունդստաբլը մեկնում է մոնղոլների կողմից գրավված Կեսարիա և առաջարկում բարեկամության պայմանագիր կնքել: Բաթու խանը համաձայնվում է՝ պայմանով, որ ներկայանա թագավորը: Հայերը ընդունում են առաջարկված պայմանները, և Կիլիկիան զերծ է մնում մոնղոլների հարձակումներից ու ավերածություններից: 1254թ. Հեթում 1-ինը մեկնում է մոնղոլների մայրաքաղաք Կարակորում: Կնքվում է բարեկամության պայմանագիր, որով Կիլիկիան պահպանում է իր ինքնուրույնությունը, կողմերը նաև փոխադարձաբար օգնելու էին իրար թշնամական հարձակումների ժամանակ, հայ առևտրականները կարող էին առևտուր անել մոնղոլական կայսրության տարածքում և այլն:

13-րդ դարի վերջերին և 14-րդ դարի սկզբներին մոնղոլական կայսրությունը աստիճանաբար թուլանում էր, թուլանում էին նաև խաչակիրների ստեղծած պետությունները, որոնք նվաճվեցին ուժեղացող եգիպտական սուլթանության կողմից: Դրանով եգիպտացիները սահմանակից դարձան Կիլիկիային: Միաժամանակ Եգիպտոսը թշնամաբար էր տրամադրված Կիլիկիայի հանդեպ: Նոր դաշնակիցների փնտրտուքով Հեթում 1-ինի որդի Լևոն 2-րդը (նաև Լևոն 3-րդ, 1270-1289) հայացքն ուղղեց դեպի Արևմուտք: Իսկ Արևմուտքը՝ հատկապես Հռոմի պապը, պահանջում էր ընդունել կաթոլիկություն: Լևոն 2-րդի որդի ապաշնորհ Հեթում 2-րդը, որը արևմտամետ քաղաքականություն էր վարում, ամբողջովին հարում է կաթոլիկությանը և երկրի արտաքին ու ներքին քաղաքականությունը ենթարկում Արևմուտքի շահերին: Դա առաջ է բերում դժգոհություն երկրի ներսում ու արքունիքում, նաև հարևան երկրներում, հատկապես Եգիպտոսում: Կիլիկիայի հարևան սելջուկյան ու արաբական իշխանությունները Կիլիկիայի արևմտամետ քաղաքականությունը համարում էին վտանգավոր, որը կարող էր խաչակրաց նոր արշավանքի պատճառ հանդիսանալ: 1320 թվականից սկսվում են եգիպտական և սելջուկյան զորքերի հարձակումները Կիլիկիայի վրա, որոնց հետևանքով Կիլիկիան ունենում է մարդկային և տարածքային կորուստներ: 1323թ. Կահիրեում կնքվում է հաշտության պայմանագիր Կիլիկիայի համար ծանր պայմաններով (վճարվելու էին տարեկան մեծ հարկեր, այդ թվում Այաս նավահանգստի եկամուտների 50%-ը և այլն): Եգիպտացիները հայերին հասկացրին նաև, որ անցանկալի են նրանց կապերը Արևմուտքի հետ: Սակայն նոր թագավոր Լևոն 4-րդը (Լևոն 5-րդ) չանսաց այդ նախազգուշացմանը և նորից կապերի մեջ մտավ Վատիկանի և Ֆրանսիայի թագավորի հետ, որոնք միայն սին խոստումներ տվեցին: Նա նաև արքունիքից հեռացրեց (գլխատեց) իր քաղաքականությանը ընդդիմացող ազնվականներին՝ Օշին պայլին և նրա եղբորը՝ Կոնստանտին Գունդստաբլին ու արքունիք հրավիրեց լատինամոլ

գործիչների: Սրան հետևեց Եգիպտոսի նոր ներխուժումը Կիլիկիա 1335թ.: Հռոմի պապը և եվրոպական պետությունները դարձյալ ոչնչով չօգնեցին հայերին, և հայերը ստիպված նորից բանակցությունների մեջ մտան ու 1337թ. նոր, էլ ավելի ծանր պայմանագիր կնքվեց Եգիպտոսի հետ: Հայերը նորից պարտություն կրեցին: Այս բոլորը հետևանք էր անհեռատես հայ թագավորների, հատկապես Լևոն 4-րդի (Լևոն 5-րդ) ու նրա արքունիքի վարած լատինամոլ քաղաքականության: Հայկական արքունիքը և թագավորը հույսները դրել էին Արևմուտքի վրա, որը դատարկ խոստումներից բացի ոչինչ չարեց: Միաժամանակ այդ քաղաքականությամբ արքունիքը նորից իր դեմ տրամադրեց հարևան մահմեդական երկրներին՝ Եգիպտոսին և Իկոնիայի սուլթանությանը:

Թագավորի և արքունիքի կողմից վարվող այս քաղաքականությունը նորից երկպառակություն առաջացրեց երկրի ներսում՝ ժողովրդի, ազնվականության ու հոգևոր դասերի միջև: Սկսված քաղաքական քաոսը հասցրեց նրան, որ 1375թ. եգիպտական մամլուկները գրավեցին Սիս մայրաքաղաքը, և Կիլիկիան որպես պետություն դադարեց գոյություն ունենալ:

Կիլիկիայի հայկական պետությունը կործանվեց, որովհետև արքունիքը և թագավորները սկսեցին հույսները դնել ոչ թե սեփական ուժերի՝ ժողովրդի ու ազնվականության, այլ դրսի ուժերի վրա: Նրանք չկարողացան օգտվել հարևանների՝ արաբների և սելջուկների միջև եղած հակամարտություններից: Եվ իբրև այս բոլորի հետևանք Կիլիկիան կործանվեց: Հիշենք, որ Թեոդորոս Ռշտունին նման պայմաններում ճիշտ կողմնորոշվեց և 652թ. բարեկամության պայմանագիր կնքեց արաբների հետ: Նույն կերպ վարվեց նաև Հեթում 1-ինը 1254թ.՝ մոնղոլների արշավանքների ժամանակ: Ավելի վաղ Տիգրան 2-րդը ևս ճիշտ գնահատելով իրավիճակը և ճիշտ կողմնորոշվելով անձամբ ներկայացավ հռոմեացի զորավար Պոմպեոսին և մ.թ.ա. 66թ. Արտաշատում համեմատաբար մեղմ պայմաններով կնքված պայմանագրով ապահովեց հայոց պետականության գոյությունը և շարունակականությունը գոնե Հայկական լեռնաշխարհի սահմաններում:

11-րդ դարի կեսերից սկսում է խառնակ ու դաժան մի ժամանակաշրջան, երբ իրար հաջորդելով Փոքր Ասիա ու Հայկական լեռնաշխարհ են ներխուժում սելջուկները (1047թվից), մոնղոլները (1220-1222թթ., մոնղոլների հետ Հայաստան են մտել նաև թուրքական կարա-կոյունլու և աղ-կոյունլու ցեղերը 1284-1291թթ.), ինչ ուշ՝ Լենկ-Թեմուրի հրոսակները և այլն: 1453թ. թուրքերը գրավում են Բյուզանդիայի մայրաքաղաք Կոնստանդնուպոլիսը: Այս քաղաքի գրավումը մեկ անգամ ևս վկայում է, որ միշտ պետք է ապավինել սեփական ուժերին: Վենետիկի հանրապետությունը և եվրոպական պետությունները ոչ միայն չօգնեցին բյուզանդացիներին Կ.Պոլիսը պաշտպանելու համար, այլև թույլ տվեցին, որ Բյուզանդիան որպես պետություն վերանա պատմության թատերաբեմից:

Բյուզանդիայի հետ կատարվեց այն, ինչ դարեր շարունակ նրա կայսրերը համառորեն ցանկանում էին իրագործել հայերի ու Հայաստանի հանդեպ: Պատմությունը նորից կրկնվում էր, Բյուզանդիան Հայաստանի հանդեպ վարում էր նույն քաղաքականությունը, ինչ Միտանիի հանդեպ Խաթթիի վարած և Արարատ-Ուրարտուի հանդեպ Ասորեստանի վարած քաղաքականություններն էին: Արդյունքում պատմության թատերաբեմից անհետացան Խաթթին, Ասորեստանը և Բյուզանդիան: Պատմությունը միշտ կրկնվում է, իսկ նրա տված դասերը շատ դաժան են: 11-րդ դարից սկսած քաղաքական իրավիճակը պահանջում էր, որ հայերը, հույները, պարսիկները և մյուսները միացյալ ուժերով պայքար սկսեն թուրք-սելջուկների, մոնղոլների, Լենկ-Թեմուրի և Արևելքից հայտնված այլ քոչվոր ու ռազմատենչ ցեղերի դեմ, բայց դա տեղի չունեցավ:

1514թ. սկսվում են թուրք-պարսկական պատերազմները, որոնք ընդհատումներով շարունակվում են մինչև 1639թ.: Ռազմական գործողությունները հիմնականում տեղի են ունենում Հայաստանի տարածքում, որը նոր ավերածությունների, կոտորածների ու գաղթի պատճառ է հանդիսանում: Շատ դաժան էին հատկապես սուլթաններ Մուրադ 2-րդի (1421-1451) և Սուլեյման 1-ինի (1520-1556) ընդունած օրենքները, որոնցով թուրքական բանակը համալրելու նպատակով հավաքագրվում էին 2-5 (նաև 8-18) տարեկան քրիստոնյա երեխաներ: Ակամա թուրքական բանակի զինվորի թեկնածու դարձած հայ և այլ քրիստոնյա երեխաները դաստիարակվում էին իրենց ազգակիցների ու հավատակիցների հանդեպ մոլեռանդ ատելությամբ և անհանդուրժողականությամբ: Այս ձևով հավաքագրված թուրքական բանակը (ենիչերի = նոր զորք) օգտագործվում էր ինչպես հայերի, այնպես էլ այլ ժողովուրդների դեմ:

Տասնամյակներ տևած պատերազմներից հետո, Թուրքիայի և Պարսկաստանի կնքած պայմանագրերով (1555թ., 1639թ.), Հայաստանը բաժանվում է Թուրքիայի և Պարսկաստանի միջև: Այս պայմաններում շատ հայեր են սպանվում, շատերն էլ՝ գաղթում, սակայն Հայաստանի հիմնական բնակիչները շարունակում էին լինել հայերը: Եվ նորից ծնվում էր օտարների լծից ազատագրվելու գաղափարը: Հայ ժողովրդի լավագույն զավակները սկսում են մտածել Հայաստանի ազատագրման ու սեփական պետություն ունենալու մասին: **1547թ.** Էջմիածնում հրավիրվում է գաղտնի ժողով, որտեղ հայոց կաթողիկոս Ստեփանոս Սալմաստեցու գլխավորությամբ օգնության խնդրանքով պատվիրակություն է ուղարկվում Եվրոպա՝ Վենետիկի հանրապետություն: **1562թ.** Սեբաստիայում նոր կաթողիկոսի՝ Միքայել Սեբաստացու գլխավորությամբ հրավիրվում է նոր գաղտնի ժողով: Նորից որոշվում է դիմել Արևմուտքին ու Հռոմի պապին: Սակայն երկու պատվիրակությունների այցերն էլ անհաջողությամբ են ավարտվում: Արևմուտքը օգնության ոչ մի խոստում չի տալիս

հայերին: Սրանք ազատագրական պայքարի առաջին քայլերն էին՝ մոտ 200-300 տարվա լռությունից հետո: **1677թ.** նոր ժողով է հրավիրվում կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ, նորից պատվիրակություն է ուղարկվում Եվրոպա՝ Հռոմի պապից և եվրոպական այլ երկրներից օգնության խնդրանքով: Նրա գործը շարունակում է Իսրայել Օրին, որը (**1701թ.**) դիմում է նաև Ռուսաստանին, համոզվելով, որ Եվրոպան և Հռոմի պապը առանց սեփական շահի ցանկություն չունեն օգնելու հայերին: Սակայն Ռուսաստանը ևս չօգնեց հայերին: Անգամ երբ **1722թ.** հայերը Դավիթ-Բեկի գլխավորությամբ ապստամբեցին ու հաջողություններ ունեցան, ռուսական կայսր Պետրոս Մեծը, չնայած իր տված խոստմանը, օգնության չեկավ հայերին այն պատճառաբանությամբ, որ սկսվել էր ռուս-շվեդական պատերազմը:

Հայաստանի ազատագրման համար մտահոգված էին նաև հայկական գաղթօջախներում: Հնդկաստանի Մադրաս քաղաքում **1760թ.** սկսում է գործել Հովսեփ Էմինը (1726-1809), սակայն Էմինը ևս հիասթափվում է Եվրոպայից ու Ռուսաստանից և վերադառնում Հնդկաստան:

Ռուս-պարսկական 1804-1813թթ., 1826-1828թթ. և ռուս-թուրքական 1806-1812թթ., 1828-1829թթ. պատերազմների ժամանակ, չնայած հայ ժողովրդի հերոսական ջանքերին ու ռուսական բանակին ցույց տրված մեծ օգնությանը, ազատագրվեց Հայաստանի փոքր մասը՝ Արևելյան Հայաստանը: Պատճառը հիմնականում եվրոպական երկրների՝ Անգլիայի և Ֆրանսիայի հակառուսական տրամադրություններն էին, քանի որ ազատագրված տարածքները կցվելու էին Ռուսաստանին, իսկ դրանով էլ ավելի էր ընդարձակվում Ռուսական կայսրությունը, որին դեմ էր Եվրոպան: Պատմության ընթացքը ցույց տվեց, որ քրիստոնյա Եվրոպան, նաև Ռուսաստանը ոչ միայն ցանկություն չունեին օգնելու Հայաստանին ու հայերին, այլև սառնասրտորեն պատրաստվում էին թույլ տալ, որ Արևելքում, քրիստոնյա Բյուզանդիայի նման, վերանա նաև քրիստոնյա Հայաստանը: Տեղն է նշելու, որ 17–18-րդ դարերում եվրոպացիների կողմից կազմված քարտեզներում Արևմտյան Հայաստանը սկսում է հիշատակվել Թուրքոմանիա (Թուրքիա և Արմենիա անուններից) անունով (անվան օգտագործումը վերացել է 19-րդ դարի սկզբներին): Արևմտյան Հայաստանը ազատագրելու հույսով հայերը ռուսներին շարունակում էին օգնել նաև Ղրիմի պատերազմի (1853-1856), ռուս-թուրքական պատերազմի (1877-1878) և 1-ին համաշխարհային պատերազմի (1914-1919) ժամանակ: Սակայն բոլոր պատերազմներն ավարտվել են հայերի համար ծանր հետևանքներով:

Մերձավոր Արևելքը միշտ եղել է զանազան պետությունների ու նրանց շահերի բախման կենտրոն, ուր 19–20-րդ դարերում բախվում էին հատկապես Եվրոպայի և Ռուսաստանի շահերը: Ռուսաստանը ցանկանում էր իր դիրքերը ամրապնդել Մերձավոր Արևելքում՝ իր կայսրությանը միացնելով Արևմտյան

Հայաստանը և այլ տարածքներ, իսկ եվրոպական երկրները ցանկանում էին թույլ չտալ Ռուսաստանի հզորացումը՝ պահելով Արևմտյան Հայաստանը Թուրքիայի կազմում: Ցավալիորեն Հայաստանը հայտնվել էր հզոր պետությունների շահերի բախման կենտրոնում: Եվրոպական երկրների ջանքերով պատերազմների ժամանակ ռուսների և նրանց մեծապես օգնող հայ կամավորների արյան գնով ազատագրված հայկական տարածքները նորից վերադարձվում էին թուրքերին: Անպաշտպան մնացած հայ բնակչությունը նորից հայտնվում էր Թուրքիայի տիրապետության տակ, որը բոլոր առիթները օգտագործում էր դաժանորեն վրեժ լուծելու հայերից: Այդ պատերազմներից հետո կնքված Փարիզի (1856թ. մարտ), Սան-Ստեֆանոյի (Կ.Պոլսի մոտ, 1878թ. փետրվար), Բեռլինի (1878թ. հունիս), նաև Մոսկվայի (1921թ. մարտի 16) և Կարսի (1921թ. հոկտեմբերի 13) պայմանագրերով ու 2-րդ համաշխարհային պատերազմից հետո (1939-1945) կնքված բոլոր պայմանագրերով ոտնահարվեցին հայերի իրավունքները: Եվրոպական երկրները փորձում էին իրենց հարցերը Թուրքիայի հետ լուծել «Հայկական հարցի» միջոցով: Դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ եվրոպական երկրներին ու Ռուսաստանին ապավինելը հասցրեց 1895-1896թթ. և 1915-1923թթ. հայկական կոտորածներին Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, մասամբ Արևելյան Հայաստանում: Պատմության դասերը վկայում են, որ քրիստոնյա Եվրոպայի աչքի առաջ կործանվեցին քրիստոնյա Բյուզանդիան (1453թ.), քրիստոնյա Կիլիկիայի հայկական թագավորությունը (1375թ., իսկ 1921թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում ստորագրված ֆրանս-թուրքական պայմանագրով Կիլիկիան հանձնվեց Թուրքիային) և քրիստոնյա Արևմտյան Հայաստանը (1915-1923թթ.):

Ինչպես տեսնում ենք, հայերի հույսերը ոչ միայն չարդարացան, այլև արդեն միջազգայնացված Հայկական հարցը դաժան վախճան ունեցավ 20-րդ դարի սկզբներին: Պատահական չէ, որ Կ.Պոլսում ի պատասխան հայերի օգնության խնդրանքի անգլիացի լորդ Դեֆերինը հայտարարում է. «Անգլիան միայն նավատորմիղով կարող է օգնել, իսկ նավատորմիղը Նոյի տապանը չէ, որ կարողանա կանգ առնել Արարատի վրա»[2]: Ավելի ուշ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Լլոյդ Ջորջը խոստովանում է, որ բրիտանական կառավարության քաղաքականությունը հանգեցրեց 1895-1897թթ., 1909թ. հայկական ջարդերին և 1915թ. զարհուրելի եղեռնին:

Հայտնի է, որ 19-20-րդ դարերում, նաև այսօր, Անգլիան համարյա միշտ հակահայկական քաղաքականություն է վարել ու անբարյացակամ վերաբերմունք ունեցել: Ո՞րն էր դրա պատճառը, որտեղի՞ց էր գալիս այդ անբարյացակամությունը: Հարցի պատասխանը ստանալու համար անդրադառնանք

2. ՀԺՊ, հ. 6, 1981, էջ 284:

17–18-րդ դարերի դեպքերին, երբ Անգլիան սկսեց Հնդկաստանի գաղութացումը: Անգլիացիների դեմ իբրև լուրջ մրցակիցներ հանդես եկան հայ առևտրականները, որոնց հարգում ու վստահում էին հնդիկները: Հաշվի առնելով դա անգլիացիները, հոլանդացիներն ու ֆրանսիացիները համագործակցեցին հայ առևտրականների հետ և օգտագործեցին նրանց Հնդկաստան թափանցելու համար: 1686թ. Արևելա-հնդկական ընկերության հետ կնքված պայմանագրով հայ առևտրականները օգտվում էին անգլիացիների ազդեցության տակ գտնվող երկրներում ազատ առևտուր անելու, պաշտոններ վարելու, սեփականություն ձեռք բերելու իրավունքներից: Սակայն երբ անգլիացիները ամրապնդվեցին Հնդկաստանում, նրանց քաղաքականությունը փոխվեց հայերի հանդեպ և սկսեցին նրանց (նաև այլոց) Հնդկաստանից դուրս մղելու քաղաքականություն վարել: Հայ և անգլիացի առևտրականների մրցակցության ժամանակ անգլիացիները օգտագործեցին իրենց պետության ողջ ուժը, այդ թվում՝ նավատորմը: Եվ անգլիական նավերի օգնությամբ հայ առևտրականների ապրանքով լեցուն նավերը սկսեցին խորտակվել ծովում: Հայ առևտրականները սպանվում էին կամ սնանկանում: Մրցակցությունը ավարտվեց անգլիացիների հաղթանակով: Անգլիացի գաղութարարների դեմ պայքարում էին հնդիկ հայրենասերները: Այդ պայքարում նրանց շարքերում հայտնվեցին նաև բազմաթիվ հայեր: Այսպես. 1760-1764թթ. Բենգալիայում անգլիացիների դեմ կռվող հնդկական զորքի հրամանատարն էր Գորգին խանը (Գրիգոր Հարությունյան): Հայերը մասնակցել են 19-րդ դարի առաջին կեսին բռնկված հակաանգլիական բոլոր ապստամբություններին: Հայ սպաների գլխավորությամբ կազմավորվել են հայ-հնդկական զինված ջոկատներ, որոնք քաջաբար դիմակայել են անգլիացի գաղութարարներին:

19-րդ դարում Մերձավոր Արևելքում ամրապնդվել ցանկացող Անգլիան հասկանում էր, որ հայերը այս տարածաշրջանում ևս լուրջ մրցակիցներ կարող են լինել, ինչպես Հնդկաստանում: Եթե պետություն չունենալով հայերը Հնդկաստանում լուրջ մրցակիցներ դարձան անգլիացիներին, ապա անկախ պետություն ունենալու դեպքում նրանք էլ ավելի զորեղ մրցակիցներ կարող էին դառնալ:

Հայաստանի և հայերի ճակատագրի հանդեպ անտարբեր էին նաև ռուս քաղաքական գործիչները: Այսպես, ռուս Լոբանով-Ռոստովսկին հայտարարում է. «Հայաստանը մեզ պետք է առանց հայերի»: Ռուսաստանը չէր պաշտպանում թուրքական տիրապետությունից ազատագրվելու արևմտահայության ձգտումները, վախենալով, որ ապագայում կարող էր ստեղծվել միացյալ Հայաստան պետություն: Իսկ դա վատ օրինակ էր կայսրության մյուս ժողովուրդների համար: Ռուսները ևս ցանկանում էին Հայաստանը տեսնել առանց հայերի և պատահական չէ, որ Կարսի մարզը 1878թ. Ռուսաստանին անցնելուց հետո կառավարությունը այնտեղ, նաև Արևելյան Հայաստանի այլ

մարզերում՝ Լոռիում, Սևանի ավազանում, Գանձակի շրջանում բնակեցնում է հազարավոր ռուս ընտանիքներ: Պետականությունից զրկված հայ ժողովուրդը իր ինքնությունը փորձում էր պահպանել եկեղեցու և հայկական դպրոցների միջոցով: Ցարական Ռուսաստանի կառավարությունը հասկանում էր դրա վտանգավորությունը և հարվածեց հենց այդ կետերին: 1903թ. հունիսի 12-ի հրամանագրով բռնագրավվում է հայկական եկեղեցու գույքը, և փակվում են հայկական դպրոցները: Սակայն հրամանագրի կատարման ժամանակ ռուս ոստիկանները հանդիպեցին հայ ժողովրդի միահամուռ դիմադրությանը: Ոտքի ելան հոգևորականները, մտավորականները, գյուղացիները, արհեստավորները և ուրիշներ: Հայ ժողովրդի բոլոր խավերի դիմադրությունը կոտրելու և 1905թ. հունվարին սկսված հեղափոխական շարժումներից ժողովրդի ուշադրությունը շեղելու համար Կովկասում 1905թ. փետրվար-մարտ ամիսներին կազմակերպվեցին հայ-թաթարական (աղրբեջանական) ընդհարումներ, որոնց զոհ գնացին հազարավոր հայեր: Իշխանությունը այն դադարեցրեց 1906թ. սեպտեմբերին, երբ այլևս կարիք չկար ապակայունացնել իրավիճակը Կովկասում: Պատմությունը կրկնվեց 20-րդ դարի վերջին, երբ 1988թ. փետրվարի 26-28-ը Սումգայիթում, ապա Բաքվում ու Գանձակում կազմակերպվեցին հայկական ջարդեր, որոնք հրահրվեցին խորհրդային (ռուսական) կառավարության կողմից հայերին ու Արցախյան շարժմանը հարվածելու համար: Այս գործողությունները պետք է հուշեին հայ քաղաքական գործիչներին ու կուսակցություններին, որ չպետք է հուսալ դրսի որևէ օգնության, որ առանց սեփական շահի ոչ ոք չէր օգնի հայերին: Իսկ Թուրքիան միշտ կարողանում էր հմտորեն օգտվել եվրոպական երկրների և Ռուսաստանի միջև առկա հակասություններից ու հաշվեհարդար տեսնել իր երկրի քրիստոնյաների, առաջին հերթին հայերի հետ: Ցավոք, 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Հայաստանում **չգտնվեց այն ուժը՝ անհատը կամ կուսակցությունը** (Արմենական կուսակցությունը ստեղծվել է 1885թ., Հնչակյանը՝ 1887թ., ՀՅԴ-ն՝ 1890թ.), որը կարողանար համախմբել ու ղեկավարել ողջ հայությանը գալիք արհավիրքը՝ 1915թ. Մեծ եղեռնը թույլ չտալու կամ գոնե արժանապատվորեն դիմակայելու համար: Առանձին քաղաքական կուսակցություններ կամ անհատները համագործակցում էին եվրոպական պետությունների, Ռուսաստանի (բոլշևիկներ), անգամ Թուրքիայի (երիտթուրքեր) հետ, սակայն չկար միասնական ծրագիր հայությանը հուզող հարցերի մասին բանակցելու կամ համագործակցելու համար:

Քաղաքական շատ գործիչներ հասկանում էին, որ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի հաջողության համար պետք է դաշինքի մեջ մտնել հույների, արաբների, ասորիների ու քրդերի հետ, ընդդեմ թուրքերի: Սակայն թուրքերին հաջողվում է խանգարել ոչ միայն այդպիսի դաշինքի

ստեղծմանը, այլև հայերի դեմ է հանում շատ քուրդ ցեղապետերի: Զարմանալիորեն գալիք արհավիրքը զգացել ու կանխատեսել է Իռլանդացի հայագետ Հ.Լինչը (նրա հայրական կողմից տատը սեբաստացի հայուհի էր), որը 19-րդ դարի երկրորդ կեսին եղել է Հայաստանում: Խոսելով Ռուսական կայսրության ժողովուրդներ կլանող էքսպանսիայի մասին, Լինչը գրում է. «Այլ է վիճակը Հայաստանում, ուր չնայած ազգը խոր անկման մեջ է հատկապես մահմեդական լծի տակ գտնվելու պատճառով, իր մեջ զգում է կենսատու տարրեր, որը նրան ստիպում է ձգտել դեպի բարձրագույն իդեալներ, արժեքներ ու խնդիրներ: Իսկ դա վտանգավոր է նրանով, որ տիրող ազգը (թուրքը, ռուսը – հեղինակ) կարող է դա կանգնեցնել բռնի մեթոդներով»[3]: Ինչպես տեսնում ենք, նույնիսկ այս պայմաններում բարձր էր **հայի ինքնագիտակցությունը,** որը զգում էին և՛ բարեկամները, և՛ թշնամիները:

Զեյթունի (1862, 1895) և Սասունի (1894, 1904) ապստամբությունները ցույց տվեցին, որ առանց լավ նախապատրաստական աշխատանքի չէր կարելի ժողովրդին ապստամբության կոչել, չէր կարելի վստահել եվրոպական երկրներին և հույսը դնել նրանց օգնության վրա: Նշենք նաև, որ դարեր շարունակ Թուրքիայում հայերը բանակ չէին զորակոչվում, նրանց արգելված էր զենք կրել: Եվ դարեր շարունակ հայ տղամարդը զրկված է եղել իր ընտանիքը և հայրենիքը պաշտպանելու հնարավորությունից: Այստեղից էլ սխալ մտայնությունը մահմեդականների և այլոց մեջ, թե հայերը անկարող են պաշտպանել իրենք իրենց: Պատմությունը վկայում է, որ առիթի դեպքում հայերը ցույց էին տալիս իրենց քաջությունը և ռազմական ունակությունը: Թուրքիայում դարեր շարունակվող վերոհիշյալ օրենքը խախտվեց 1-ին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ հատուկ (նենգ) նպատակով, երիտթուրքերի հրամանով թուրքական բանակ զորակոչվեց Արևմտյան Հայաստանի բնակչությունը: Հայոց Մեծ եղեռնի նախօրեին Արևմտյան Հայաստանից թուրքական բանակ զորակոչվեց մոտ 300 000 հայ տղամարդ: Սակայն նրանք զենք չստացան, չմասնակցեցին ռազմական գործողություններին և փոքր խմբերով ոչնչացվեցին թուրք զինվորների կողմից: Սա հայերին ոչնչացնելու երիտթուրքերի դիվային ծրագրի կարևոր մասերից էր, քանի որ Արևմտյան Հայաստանը զրկվում էր իր կռվող ուժից և բնակչությունը լիովին անպաշտպան վիճակում էր հայտնվում: Այս և բազմաթիվ այլ պատճառներ հասցրին նրան, որ Արևմտյան Հայաստանը, Կիլիկիան, մասամբ Արևելյան Հայաստանը հայաթափվեցին:

Որ պատմությունը կրկնվում է՝ համոզվում ենք նաև մեր օրերում: Այսօր նորից միջազգայնացվել է արցախյան հարցի կարգավորումը: Մեր ժողովրդի

3. *Հ.Ֆ.Բ. Լինչ*, Армения, т. 1, Тифлис, 1910, с. 584.

ռազմական հաղթանակից հետո այն կարգավորելու հարցը նորից իրենց ձեռքն են վերցրել արևմտյան երկրները՝ ԱՄՆ-ն, Ռուսաստանը և Ֆրանսիան (Մինսկի խումբ), որոնք 1994թ. մայիսյան զինադադարից հետո բազմաթիվ անգամներ անօգուտ փորձում են հաշտեցնել կողմերին՝ հայերին ու ադրբեջանցիներին, առանց հաշվի առնելու պատմական փաստերը և արդարությունը: Ինչպես միշտ, այս անգամ էլ դժվար թե երեք երկիր, որոնցից յուրաքանչյուրը սեփական շահն ունի տարածաշրջանում, կարողանան համաձայնության գալ հարցի լուծման համար: Ամենայն հավանականությամբ Արցախյան հարցը կսառեցվի: Այն Հայկական հարցի մի մասն է և հավանաբար կլուծվի Արևմտյան Հայաստանի և հայկական այլ տարածքների հարցերի լուծման հետ:

Հայաստանը՝ Հայկական լեռնաշխարհը, շրջակա տարածքներով գտնվում է Արևելքի ու Արևմուտքի միջև: Ի սկզբանե այս տարածքը կարծես նախատեսված է եղել կապ, կամուրջ լինելու արևելքի ու արևմուտքի, հարավի ու հյուսիսի միջև: Արևելքի ու Արևմուտքի միջև կապող օղակ են նաև այդ տարածքի բնակիչները՝ հայ-արմենները, որոնք իրենց արտաքին տեսքով և՛ եվրոպացի են, և՛ ասիացի: Հետևաբար, տարբեր առիթներով շատ հաճախ հնչող այն հարցին՝ հայերը եվրոպացի՞ են, թե՞ ասիացի, միանշանակ կարելի է պատասխանել. հայերը և՛ ասիացի են, և՛ եվրոպացի, հայերը և՛ արևելքցի են, և՛ արևմուտքցի: **Հայերը եվրոպացուն և ասիացուն իրար հետ կապող օղակ են, կամուրջ:** Հազարամյակներ շարունակ իրենց վերապահված այդ դերը հաջողությամբ են կատարել Հայաստանը և հայ-արմենները: Հայաստանը արարչագործության, քաղաքակրթության ու մշակույթի ստեղծման այն կենտրոնն է, որից սնվում ու սկիզբ են առնում արևմտյան և արևելյան քաղաքակրթության ու մշակույթի շատ տարրեր: Ի վերուստ հաստատված կարգը խախտվեց այն ժամանակ, երբ թուրքական ցեղերը տեր դարձան Հայաստանի մեծ մասին և հաստատվեցին այդ տարածքներում: Այսօր Թուրքիան փորձում է ստանձնել այն դերը, ինչ նախասահմանված և վերապահված էր հայերին: Նա փորձում է կապ, կամուրջ լինել արևմուտքի և արևելքի միջև: Դա Թուրքիան կարող է իրականացնել միայն նյութական ոլորտում՝ նավթամուղեր, գազամուղեր ու երկաթգծեր անցկացնելով իր տարածքով: Սակայն երկիրը և մարդկությունը միայն նյութական արժեքներով չէ որ ապրում են: Մարդուն, հասարակությանը անհրաժեշտ են նաև հոգևոր արժեքներ՝ մշակույթ, արվեստ, ճարտարապետություն, երաժշտություն, նկարչություն և այլն: Այս դեպքում Թուրքիան անզոր է: Իր պետությունը ստեղծելով հնագույն, բազմադարյան մշակութային շերտեր և հարուստ պատմական անցյալ ունեցող հայոց հողի վրա, որքան էլ ցանկանա Թուրքիան ի վիճակի չէ ամբողջությամբ տեր դառնալու մեր նախնիների ստեղծած մշակույթին: Թուրքերն իրենց մշակույթով, մտածելակերպով, գործողություններով, կենցաղով, սովորույթներով, վարք ու բարքով չեն կարող կապող

օղակ լինել արևմուտքի և արևելքի միջև: Ժամանակը և տարածությունը ի զորու չեն փոխելու այս ժողովրդին, որքան էլ փոխվի նրանց արտաքին տեսքը ի հաշիվ հայերի, հույների, սլավոնների և այլոց: Հասարակությունը և միջավայրն են դաստիարակում մարդուն: Ուստի իզուր են որոշ գործիչներ փորձում իրենք իրենց ու այլոց համոզել, որ այսօրվա թուրքը նախկինը չէ: Այն որ իրենք չեն փոխվել, ամենից լավ գիտեն իրենք՝ թուրքերը: Բոլորից լավ իրենք են ճանաչում իրենց: Եվ անզորությունից ծնվում է ատելությունը Հայաստանի ու հայերի հանդեպ:

Բազմադարյան պայքարից ու բազմաթիվ անմեղ զոհեր տալուց հետո, 20-րդ դարի վերջերին և 21-րդ դարի սկզբներին պատմության թատերաբեմում՝ Հայկական լեռնաշխարհի մի փոքրիկ հատվածում, նորից հայտնվել է Հայաստան պետությունը: Որքան էլ մենք թշնամիներ ունենանք, որքան էլ տարբեր ժողովուրդներ ու պետություններ չցանկանան մեզ տեսնել մեր հայրենիքում ու այս տարածաշրջանում, միշտ հառնել ու հառնում են հայ ժողովուրդն ու Հայաստան պետությունը:

Այսօր՝ 21-րդ դարի սկզբներին կարող ենք փաստել, որ ունենք երկու հայկական պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը: Այս պետությունները ղեկավարող պետական այրերի վրա հայ ժողովուրդը մեծ պատասխանատվություն և պարտականություն է դրել. սկսել մասնատված (Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի միջև) Հայաստանի միավորումը մեկ միասնական պետության մեջ: Դնել հայոց նոր հզոր պետության հիմքը: Դա երկարատև, ծանր, համառ ու նպատակասլաց աշխատանք է պահանջում, որը կարող է իրականացվել տասնամյակների ընթացքում, մի քանի սերունդների կողմից:

21-րդ դարում Հայաստանի նոր վերելքն ապահովելու և ի սկզբանե մեզ համար նախատեսված (ընդհատված) առաքելությունը իրականացնելու, նորից Արևմուտքի և Արևելքի միջև կապող օղակ լինելու համար պետք է հաշվի առնել մեր ժողովրդի հազարամյակներ շարունակվող պատմության ուսանելի փորձն ու դասերը, որոնք պետք է դրվեն ազգային ծրագրի՝ գաղափարախոսության հիմքում: Իսկ հայ ժողովրդի անցած երկարատև պատմության փորձն ու դասերը սովորեցնում են.

– Գնահատել **պետություն և անկախություն** ունենալու փաստը.

– Ունենալ **հստակ նպատակ, ազգային ծրագիր** ու **ազգային գաղափարախոսություն,** որը ծրագրում և իրականացնում է ազգի ընտրյալ մասը՝ առողջ մտավորականությունը (հնում թագավորը, քրմությունը, ազնվականությունը, զինվորականությունը): Հայ իրականության մեջ հայոց պետականության՝ թագավորի և ազնվականության վերացումից հետո, եկեղեցու հետ ազգը ղեկավարել սկսեց նաև մտավորականությունը: Մեծ է հատկապես մտավորա-

Սևրի դաշնագրի հիման վրա (1920թ. օգոստոսի 10)
ԱՄՆ նախագահ Վիդրո Վիլսոնի պատրաստած Հայաստանի քարտեզը

կանության ուժը և դերը: Պատահական չէ, որ 1915թ. եղեռնը սկսվեց հայ մտավորականության ոչնչացումով, երբ ապրիլի 24-ին ձերբակալվեցին և ոչնչացվեցին Պոլսի հայ մտավորականները: 20-րդ դարի սկզբներին մտավորականությունը ոչնչացվեց նաև Արևելյան Հայաստանում: Ցարական Ռուսաստանից հետո հայ մտավորականների և զինվորականների ջարդ կազմակերպեցին բոլշևիկները՝ իշխանության գալուց անմիջապես հետո: Այն շարունակվեց նաև 1920-50-ական թվականներին: Ոչնչացվեցին հազարավոր մտավորականներ: Արդյունքում չձևավորվեց առողջ և ունակ մտավորական խավ: Վախի մթնոլորտում ապրած մտավորականը ի զորու չէ նպատակասլաց գործունեության և առաջնորդի դերում հանդես գալու: 20-րդ դարում կատարված մտավորականների ջարդերի արդյունքները զգացվում են նաև այսօր: Հայոց նորանկախ պետության մեջ այժմ ստեղծվում է մտավորականների նոր սերունդ: Այդ մտավորականները մշտապես պետք է լինեն պետության ուշադրության կենտրոնում, քանի որ հայ ժողովուրդը մեծ սպասելիքներ ունի նրանցից:

– Պետության հովանավորությամբ անհրաժեշտ է ստեղծել **ռազմավարական, վերլուծական կենտրոն՝** ազգային գաղափարախոսություն ստեղծելու, համազգային, համապետական հարցերն ու խնդիրները մշակելու, ծրագրելու, կանխատեսելու և իրականացնելու համար: Օրինակ, 1915թ. Հայոց Մեծ եղեռնից հետո առիթներ եղան Հայաստանը միավորելու (ռուս բոլշևիկների կողմից 1917թ. դեկտեմբերին ընդունված «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, 1920թ. օգոստոսի 10-ին կնքված Սևրի պայմանագիրը), բայց մեր ստացած հարվածը այնքան ուժեղ էր, իսկ պետականորեն մտածող հայոց այրերն ու կուսակցությունները այնքան հուսահատ ու անմիաբան, որ չկարողացան օգտվել ընձեռված հնարավորություններից:

– Հայոց պետականության և հայ ժողովրդի ապահովության գրավականը **ուժեղ բանակն է:** Աշխարհի ոչ մի անկյունում այնքան արյուն չի հեղվել, ոչ մի տեղ այնքան պատերազմներ ու ճակատամարտեր չեն եղել, որքան Հայկական լեռնաշխարհում և շրջակա տարածքներում: Միայն թվարկենք այն ցեղերին ու ժողովուրդներին, որոնք փորձել են նվաճել կամ ազդեցության ոլորտում պահել այս տարածաշրջանը. եգիպտացիներ, խեթեր, սեմական ցեղեր (աքադացիներ, բաբելացիներ, ասորեստանցիներ, արամեացիներ), հույներ, հռոմեացիներ, պարսիկներ, բյուզանդացիներ, արաբներ, մոնղոլներ, թուրք-սելջուկներ, ավելի ուշ Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա, Ռուսաստան, ԱՄՆ: Իսկ ողբերգությունը այս տարածաշրջանում այսօր էլ շարունակվում է: Եվ կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ չի ստեղծվել նոր հզոր հայկական պետություն: Այս իրավիճակում յուրաքանչյուր հայ (տղամարդ, կին) պետք է պատրաստ լինի պաշտպանելու իր հայրենիքն ու ընտանիքը:

Հայ ռազմիկը պետք է կռվի ու արյուն թափի միայն հայոց հողը պաշտպանելու համար: Դեպքերի բերումով դարեր շարունակ հայ զինվորի մարտական ու բարոյական բարձր հատկանիշները օգտագործվել են օտար տիրակալների ու օտար պետությունների կողմից, հաղթանակներ ու փառք ապահովելով նրանց: Չանդրադառնալով պատմության հնագույն շրջանին, բավարարվենք 1-ին և 2-րդ համաշխարհային պատերազմների տվյալներով: Այսպես. 1-ին համաշխարհային պատերազմի (1914-1919) ժամանակ ռուսական կայսրության կազմում գտնվող Արևելյան Հայաստանից ռուսական բանակ է զորակոչվել ավելի քան 250 000 հայ: Նույն ժամանակ Արևմտյան Հայաստանից թուրքական բանակ է զորակոչվել մոտ 300 000 հայ, որոնք, ինչպես վերևում նշվեց, զենք չստացան և փոքր խմբերով ոչնչացվեցին: Հիշենք նաև, որ Եվրոպայում դաշնակիցների բանակում կռվում էր մոտ 50 000 հայ: Ինչպես տեսնում ենք, 1-ին համաշխարհային պատերազմի ժամանակ տարբեր պետությունների կողմից մոտ 600 000 հայ զինվոր հավաքագրվեց: Եվ եթե **գտնվեր մի ուժ,** որը կարողանար այդ թվի գոնե 5-10 տոկոսը օգտագործել Հայաստանը ու անօգնական հայ բնակչությանը պաշտպանելու համար, ապա այդքան մեծ չէին լինի հայերի մարդկային, նյութական ու տարածքային կորուստները 1915-1923թթ.: 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ (1939-1945) ևս հայ ժողովուրդը գործուն մասնակցություն ունեցավ ռազմական գործողություններին: Խորհրդային բանակ զորակոչվեց ավելի քան 600 000 հայ, որից մոտ 300 000-ը զոհվեց:

Այսպիսով, պատմությունը ևս մեկ անգամ ապացուցում է, որ հայոց ռազմական ուժը պետք է օգտագործվի միայն Հայաստանի համար, հայ զինվորը պետք է կռվի միայն Հայաստանի ու հայ ժողովրդի համար: Ոչ մի պետություն ու ժողովուրդ իր զինվորի արյան գնով չի պաշտպանելու Հայաստանն ու հայ ժողովրդին:

– Հայոց պատմության ամենամեծ դասերից մեկը **կողմնորոշման,** մասնավորապես միակողմանի կողմնորոշման հարցն է եղել, իսկ միակողմանի կողմնորոշումը վատ դաշնակից ու վատ բարեկամ է: Հիշենք 19-րդ դարի 2-րդ կեսին Արևմտյան Հայաստանում ստեղծված իրավիճակը, երբ Ռուսաստանը վստահ լինելով հայերի դեպի Ռուսաստան կողմնորոշմանը, սկսեց սիրաշահել քրդերին, Արևմտյան Հայաստանը անգլիացիների նման անվանելով Քրդստան: Բազմաթիվ անգամներ՝ և՛ անցյալում, և՛ ներկայում, վստահորեն կարող ենք ասել նաև ապագայում, ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ այլ պետություն չեն օգնել և չեն օգնելու հայ ժողովրդի մեծ ձգտումների իրականացմանը: Պատմության փորձը ցույց է տալիս նաև, որ կողմնորոշման հարցը միշտ վերնախավի մոտ է առաջանում, իսկ ժողովուրդը վստահում է ինքն իրեն: Հետևաբար անհրաժեշտ է, որ ժողովրդին առաջնորդող ուժը հենվի սեփական ժողովրդի վրա և վստահի նրան:

– Անհրաժեշտ է ունենալ (ընտրել) ազգային ոգով ու մտածողությամբ օժտված **ուժեղ** (ոչ բռնակալ) **առաջնորդ** (նախագահ, պրեզիդենտ), որը լավ ծանոթ է իր ժողովրդի պատմությանը, հայության խնդիրներին և մեծ ցանկություն ունի իրագործելու հայրենիքի միավորման ու հզորացման գործընթացը: Պատմությունը ցույց է տալիս, որ շատ մեծ է հզոր անհատի դերը հասարակության մեջ: Հենց հզոր անհատներն են կերտում պատմությունը: Իսկ ժողովուրդը ակտիվ կամ պասսիվ մասնակցություն է ունենում հզոր անհատի ձեռնարկած գործողություններին: Պետությունների, այդ թվում հայոց հնագույն պետությունների փորձը ցույց է տալիս, որ առաջնորդին (թագավոր)՝ պետության ղեկավարին պետք է օգնի հայոց պատմությունից մեզ ծանոթ **ավագների խորհուրդը,** որը պետք է բաղկացած լինի ազգի ընտրյալ մտավորականներից, քաղաքական գործիչներից և պարզապես հարգանք վայելող անհատներից:

– Մեր ժամանակներում կարևորվում են նաև ազգերի ու ժողովուրդների **էթնիկ պատկանելության** հարցերը: Ազգերի իրար հետ հարաբերվելու ժամանակ մեծ դեր է խաղում նույն էթնոսին (ցեղին) պատկանելու, նույն արմատից ծագելու պարագան: Հայերը երբեք չեն օգտագործել այդ գործոնը: Մեր նախնիները եվրոպացիների հետ շփվելիս ավելի շատ առաջ են քաշել քրիստոնեական հավատքին պատկանելու հարցը: Երկրորդ սլլան է մղվել կամ անտեսվել հայերի և հնդեվրոպացիների (արիացիներ) նույն արմատից ծագելու փաստը: Մինչդեռ 19–20-րդ դարերում աշխարհում նոր հետաքրքրություն է առաջացել սեփական պատմության ու մշակույթի հանդեպ: Այս առումով հայերը մեծ ասելիք ունեն: Հայ ժողովուրդը հազարամյակներ շարունակ ապրել ու արարել է իր բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում և շրջակա տարածքներում: Հայաստանը արարչագործության, երկրային դրախտի, իմաստնության ու կենաց ծառի, ինչպես նաև մարդկության վերածննդի երկիրն է համաշխարհային ջրհեղեղից հետո:

Հայաստանը հնդեվրոպական ժողովուրդների նախնիների՝ արիական ցեղերի հայրենիքն է: Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդները, որոնց թիվը մոտ երկու միլիարդ է, ծանոթանալով հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին, որից սկիզբ են առնում նաև իրենց նախնիների՝ արիական ցեղերի պատմությունն ու մշակույթը, անկասկած նոր հայացքով և ուշադրությամբ կնայեն Առաջավոր Ասիայի այն մասին, որը հայտնի է Հայաստան անունով: Հնդեվրոպացիները իրենց հայացքը վերջապես կարող են դարձնել դեպի Հայաստան, երբ իրենք իրենց համար պարզեն, որ այստեղ են իրենց արմատները, իրենց հնագույն պատմության ու մշակույթի ակունքները և որ Հայաստանը նաև իրենց հնագույն հայրենիքն է (նախահայրենիքը), նախնիների բնօրրանը, երկիրը, հողը: Իսկ որ նախնիների երկիրը, հողն ու ցեղի արմատները շատ կարևոր են յուրաքանչյուր անհատի ու ժողովրդի համար,

դատարկ խոսքեր չեն: Հիշենք ամերիկացիների և անգլիացիների համարյա միշտ միասին հանդես գալու քաղաքականությունը, սլավոնական ժողովուրդների բարեկամությունը, թուրքական ժողովուրդների համերաշխությունը և այլն: Հողի, երկրի (նաև նախնիների երկրի) ու արմատների ուժը շատ մեծ է, այնքան որ հաճախ չի գործում քաղաքականության մեջ ասույթի ուժ ստացած «Չկան հավերժական բարեկամներ ու հավերժական թշնամիներ» արտահայտությունը: Այս մտորումը բարի ցանկություն կամ առասպել չէ: Ապագան անպայման ցույց կտա հարցին այսպես մոտենալու ճշմարտացիությունը: Հնդեվրոպացիներին (արիական ցեղի հետնորդներին) պետք է տալ իրենց նախնիների երկրի ու հողի զորության ուժը: Չպետք է թույլ տալ, որ նախնիների հողն ու այնտեղ մնացած ցեղակիցների մասին հիշողությունները մոռացվեն: Դաժան իրողություն է. առանց հնդեվրոպացի (արիացի) գերմանացիների, անգլիացիների և այլոց լուռ թույլտվության թուրքերը չէին համարձակվի ցեղասպանություն իրականացնել արիական ցեղի հայրենիքում՝ Հայաստանում: Ստեղծված պայմաններում՝ ապավինելով բազում հազարամյակներ ամբարած իր գենետիկ հիշողությանը (նաև հոգևոր ու նյութական մշակութային արժեքներին), մայր ժողովուրդը՝ հայ ժողովուրդը պետք է փնտրի, գտնի ու իր շուրջը համախմբի հազարամյակներ շարունակ աշխարհում սփռված իր զավակներին:

Տեղն է խոսելու հետաքրքիր մի երևույթի մասին ևս: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերին Հայկական լեռնաշխարհի հարավային մասում և Հյուսիսային Միջագետքում կազմավորված Ասորեստանի բնակչության մեջ մեծ թիվ է կազմել «արմենոիդ» մարդաբանական տեսակը: Սիրիայի հյուսիսային շրջաններում (նախկինում՝ Միտանիի տարածքը) այսօր էլ մեծ է «արմենոիդ» տեսակին պատկանող բնակչության թիվը: Անգեն աչքով նկատելի է, որ Թուրքիայի բնակչության մեջ նույնպես մեծ թիվ է կազմում «արմենոիդ» մարդաբանական տեսակը, ուստի չպետք է աչքաթող անենք այն փաստը, որ Թուրքիայում կան միլիոնավոր թրքացած ու քրդացած հայեր, որոնք մարդաբանական, մշակութային, հեռավոր գենետիկ հիշողությամբ ու այլ գործոններով կապված են հայության հետ: Նրանցից շատերը գիտեն, շատերն էլ չգիտեն այդ մասին: Նրանց իրենց արմատներին կարելի է կապել հայ մշակույթի ու պատմության միջոցով (գրքեր, ֆիլմեր, հեռուստահաղորդումներ):

– **Հայոց պատմությունը հզոր զենք է,** որը համարյա չի օգտագործվել ու չի օգտագործվում: Մեզնից լավ մեր պատմությունը գիտեն օտարները: Եվ այսօր նրանց օգնությամբ ունենք հայ ժողովրդի խեղաթյուրված, աղավաղված ու թերի գրված պատմություն: Փորձ է արվում Հայկական լեռնաշխարհի հնագույն Արարիչ Ար-Արա Աստծուն ներկայացնել իբրև չարի ու չարիքի աստված, որը հիմնավորված չէ ոչ մի հնագույն գրավոր վկայությամբ: Նույն

ձևով Արարիչ Ար Աստծո և Արև-Աստծո խորհրդանիշ արևխաչը՝ սվաստիկան ներկայացվում է իբրև չարի ու դժբախտության խորհրդանիշ (խաչակիրներից հետո նույնը չեղավ խաչի հանդեպ): 20-րդ դարի կեսերից նաև փորձ է արվում գիտական աշխարհում շրջանառության մեջ դրված (ֆոն Լուշանի կողմից) «արմենոիդ» մարդաբանական տեսակ («եվրոպեոիդ» մարդաբանական տեսակի մի ճյուղը) անվանումը փոխարինել «առաջավորասիական» մարդաբանական տեսակ անվանումով և այլն: Ինչպես տեսնում ենք, համառորեն և հետևողականորեն փորձ է արվում սրբագրել հայոց պատմությունը, խեղաթյուրել այն և թույլ չտալ, որ **հայը գիտակցի իր ով լինելը, չճանաչի ինքն իրեն, իսկ աշխարհն էլ չիմանա, թե ով է հայը:** Վստահորեն կարելի է ասել, որ **Հայաստանի հզորությունը և փառքը կվերականգնվի այն ժամանակ, երբ հայը ճանաչի ինքն իրեն, գնահատի իր ունեցածը, իմանա իր պատմությունն ու մշակույթը:** Հայ ժողովրդի իրական պատմությունը դեռևս գրված չէ: Մոտ հարյուր տարի առաջ այդ մասին ցավով գրել է նաև հայոց մեծ բանաստեղծ Հովաննես Թումանյանը. «Մի «Հայոց պատմություն» պետք է տալ այս ժողովրդին, նրան դատողը դատելիս կարողանա ծանոթանալ ու այնպես դատել, որ նրան պաշտպանողը նրան պաշտպանելիս առաջ քաշի այդ պատմությունը և այնպես պաշտպանի, որ նա ինքը՝ պատասխանի կանչվելիս բացանի այդ պատմությունը ու այնտեղից հանի իր պատասխանը, որ ուրիշներն էլ ճանաչեն նրան, ինքն էլ ճանաչի իրեն»: Հայոց պատմության ուսումնասիրությունը պետք է սկսել Առաջավոր Ասիայում հայտնաբերված բոլոր սեպագիր և այլ հնագույն գրավոր աղբյուրները հայերեն թարգմանելով ու հրատարակելով, քանի որ դրանք բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ են պարունակում հայերի ու Հայաստանի մասին, որոնք այսօր հասու չեն հայ ուսումնասիրողներին:

Ցիրուցան է արված նաև հայ հոգևոր ու նյութական մշակույթը՝ երաժշտությունը, ճարտարապետությունը, գորգարվեստը: Մեզ շրջապատող նոր կազմավորվող ժողովուրդները (թուրք-ադրբեջանցիներ, վրացիներ, քրդեր), տեր դառնալով պատմական Հայաստանի մեծ մասին, փորձում են տեր դառնալ նաև այդ հողի վրա ստեղծված մշակութային արժեքներին: Այսօր, երբ համեմատաբար խաղաղ իրավիճակ է հայկական սահմաններում և անմիջական ռազմական գործողություններ չկան, ընթանում է մեկ այլ՝ մշակութային և քաղաքակրթության պատերազմ: Վերջին հարյուրամյակներում վկա ենք դարձել հայկական մշակութային արժեքների (եկեղեցիներ, կամուրջներ, խաչքարեր, զանազան շինություններ) ավերման կամ յուրացման: Հայկական քրիստոնեական եկեղեցիները իրենց զուգահեռները չունեն աշխարհի ոչ մի քրիստոնեական երկրում: Յուրաքանչյուր քրիստոնեական դավանանք ունի միայն իրեն հատուկ

եկեղեցական ճարտարապետական ոճը: Այս առումով բացառություն են վրացական համարվող եկեղեցիները, որոնք իրենց մանրամասներով և արտաքին տեսքով հար նման են հայկական եկեղեցիներին (որոշ դեպքերում դրանց գմբեթները ավելի բարձր են): Իսկ Ադրբեջանը փորձում է աշխարհին ներկայանալ որպես հնագույն գորգագործության երկիր: Բաքվում գործում է գորգի հարուստ թանգարան, որտեղ ցուցադրվում են Արցախի և Գանձակի շրջանի հայկական գյուղերից հավաքված (գնված կամ փոխանակված նոր գորգի հետ) հնագույն հայկական գորգեր: Մշակութային այս պատերազմում վկա ենք դառնում այն փաստին, երբ թուրքերն ու ադրբեջանցիները ոչնչացնում են այն ամենը, ինչ հնարավոր չէ յուրացնել ու ներկայացնել որպես իրենց նախնիների ստեղծած մշակույթ (եկեղեցի, խաչքար, շինություն): Եվ միայն հայ գիտնականը՝ պատմաբանը, արվեստաբանը և մյուսները կարող են ու պետք է պայքարեն դրա դեմ՝ արժանիորեն ներկայացնելով հայոց պատմությունն ու մշակույթը: Իսկ պատմությունը նորից ու նորից մեզ՝ հայերիս սովորեցնում, դասեր է տալիս, որ **պետք է արարել, ստեղծել ու կառուցել միայն հայրենի հողի վրա,** որովհետև օտար հողի վրա կառուցածը այլևս մերը չէ: Վկան Թիֆլիսում, Բաքվում, Կ.Պոլսում, նաև Ռուսաստանի ու Եվրոպայի տարբեր քաղաքներում, Հնդկաստանում ու այլ երկրներում կառուցված ճարտարապետական հուշարձանները (եկեղեցիներ, բնակելի շինություններ, մշակույթի օջախներ), որոնք կամ յուրացվում են, կամ ավերվում: Պետք է դադարեցնել հայ կապիտալի փոշիացումը, Հայաստանից դուրս կառուցելով զանազան ճարտարապետական կառույցներ (մշակույթի տներ, եկեղեցիներ), որոնք մի օր անպայման տարբեր պատճառներով դադարում են հայերինը լինել:

– Ազգային մտածողության կարևոր խնդիրներից մեկը հայեցի **անուն-ազգանուն ունենալն է**: Հարյուր հազարավոր հայեր կրում են թուրքական, պարսկական, հրեական («Աստվածաշնչի» միջոցով), ռուսական և այլ ոչ հայկական անուն-ազգանուններ, որոնք ոչ միայն հաճախ ծիծաղելի են, այլև վիրավորում են հայ մարդու ազգային արժանապատվությունն ու ինքնասիրությունը: Պետք է պետականորեն դնել հարցը և սկսել օտար ծագում ունեցող անուն-ազգանունների հայացման գործընթացը: Հատկապես նոր սերունդը պետք է կրի հայկական անուն-ազգանուն: Նաև դրանից է մարդու մեջ սկսվում հայրենասիրությունը և ազգասիրությունը:

– Աշխարհին պետք է ներկայացնել նաև բարեհնչյուն **հայոց լեզուն,** որի մեջ ներառված են հնդեվրոպական ժողովուրդների լեզուներում եղած բոլոր հնչյունները: Հայոց լեզվի 36 հնչյունները լիովին բավարար են ոչ միայն հնդեվրոպական բոլոր լեզուներով, այլև աշխարհի ցանկացած լեզվով խոսելու համար: Պատահական չէ, որ հայը շատ հեշտ ու արագ է սովորում օտար լեզուներ, մաքուր հնչեցնելով ցանկացած լեզու: Հայոց լեզուն մասսայա-

կանացնելու, միջազգայնացնելու համար պետք է ստեղծել հայախոսների միություն, հենվելով հայոց պատմության ու մշակութային արժեքների վրա:

Հաջողության հասնելու համար պետք է օգտագործվեն հայության բոլոր միջոցները (գաղափարական, ֆինանսական): Շատ կարևոր են տպագրվող գրքերը՝ հատկապես օտար լեզուներով, նկարահանվող ֆիլմերը և այլն: Համոզված կարելի է ասել. մեծ հաջողություններ կարձանագրվեն, երբ **համագործակցեն հայ մտավորականը և հայոց կապիտալը:**

Ինչպես տեսնում ենք, պատմությունը և ճակատագիրը դաժան փորձության են ենթարկել մեզ՝ հայերիս: Մենք ունեցել ենք հայրենիքի մեծ մասի կորուստ, ցեղասպանություն և ցիրուցան արված հայրենակիցներ: Այս ամենը պետք է կոտրեր հայ մարդու ոգին: Սակայն այդպես չեղավ: Հայ մարդը ուժ գտավ իր մեջ, ապավինեց հոգևորին, արարումին և ապրեց: Անցած պատմությունը ծանր բեռ է դրել այսօրվա սերնդի ուսերին: Նոր սերունդը պետք է ուղղի պապերի ու հայրերի թույլ տված սխալները, շտկի ու շարունակի նրանց ավարտին չհասցրած ու կիսատ թողած գործը: Հաջողությունն ապահովելու համար պետք է իմանանք, որ ունենք հզոր զենք, որը չունի աշխարհի ոչ մի ժողովուրդ: Այդ զենքը, ինչպես վերը նշվեց, **հայոց պատմությունն է:** Առանց ետ նայելու և առանց իմանալու, թե ինչ ես թողել անցյալում, դժվար է առաջ գնալ: Վկան՝ մեր հարևան նոր կազմավորվող ժողովուրդների (թուրքեր, ադրբեջանցիներ) պատմությունը, երբ նրանց ներկայացուցիչները պատեհ ու անպատեհ առիթներով մեզ՝ հայերիս խորհուրդ են տալիս ետ չնայել, չհիշել ու չվկայակոչել անցյալը և հաշտվել այսօր ստեղծված իրավիճակի հետ: Այսպես կարող է ասել այն ժողովրդի ներկայացուցիչը, որը գիտակցում է դիմացինի առավելությունը, նրա հնագույն ժողովուրդ լինելը և հնագույն պատմություն ու մշակույթ ունենալու փաստը:

– Հայ ցեղի արմատը շատ խորն է, հին ու ամուր: Հայ նոր սերունդը պետք է իմանա, որ ինքը հզոր ոգի ու հին պատմություն ունեցող և հոգևոր մեծ արժեքներ, մեծ մշակույթ ու քաղաքակրթություն ստեղծած ժողովրդի զավակ է:

Հայ նոր սերունդը պետք է դաստիարակվի նախնիների՝ հայ-արիների օրենքներով ու մարտական գաղափարներով: Արդարությունը և ոտնահարված իրավունքները պաշտպանելու, վերականգնելու համար պետք է ուժեղ լինել և՛ հոգեպես, և՛ ֆիզիկապես: Հայ ազգը բազմաթիվ նվիրական իղձեր ունի, որոնցից առաջինը կորցրած հայրենիքի վերադարձն է ու հայության համախմբումը Հայաստանում: Պետք է կարողանանք ճիշտ օգտագործել այսօր մեզ տրված ժամանակը և հնարավորությունները ազգային նոր զարթոնքի համար:

Միշտ պետք է հիշենք. անհնար ոչինչ չկա: Մենք ոչ միայն թշնամիներ, այլև բարեկամներ ու դաշնակիցներ ունենք: Մենք նաև կամք ու մեծ ցանկություն ունենք տեր դառնալու մեր պատմությանը, մշակույթին ու հայրենիքին:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱ – Հանդէս Ամսօրեայ
ՀԱՊ – Հին Արևելքի պոեզիա
ՀԺՊ – Հայ ժողովրդի պատմություն
ՀԺՊՔ – Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա
ՊԲՀ – Պատմա-բանասիրական հանդես

АВИИУ – Ассиро-Вавилонские Источники по Истории Урарту
ВДИ – Вестник Древней Истории
ИДВ – История Древнего Востока
УКН – Урартские Клинообразные Надписи

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց սրբազան լեռան Սիս, Մասիս և Արարատ անունների մասին 5
Սվաստիկա խորհրդանիշի հնագույն ակունքներում 9
Խաչ խորհրդանիշի հնագույն ակունքներում 20
Որն է հայ ցեղի հարատևության գաղտնիքը 25
Հնագույն պատմական վկայություններ հայ ռազմիկի մասին 33
Վասպուրականի Մարդաստան գավառի, Մարդպետունի նախարարական տան mard և քրդերի kurdioi անունների մասին 52
Հայոց հնագույն աստվածները 57
Եգիպտոսի հայ թագուհիները 65
Պատմության դասերը. հայոց անցյալը, ներկան և ապագան 71

ԱՆԺԵԼԱ ԱՎԵՏԻՍԻ ՏԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հրատ խմբագիր ԴԱՆԻԵԼՅԱՆ Գ. Վ.
Տեխ. խմբագիր ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ Մ. Պ.
Համակարգչ. էջադրումը ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ռ. Հ.

Ստորագրված է տպագրության 4.05.2007: Չափը 60x84 $^{1}/_{16}$:
Տառատեսակը թայմս: Թուղթը օֆսեթ: Տպագրությունը օֆսեթ:
6,25 պայմ. տպ. մամուլ: 5,25 հրատ. հաշվարկային. մամուլ:

Պատվեր 20: Տպաքանակ 500:

«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՅԻ» տպագրատուն
Երևան, Նոր Նորքի I զանգված, Սաֆարյան փ.11/1Ա
Հեռ. 67 39 99, բջջ. (091) 43 73 07, (091) 41 70 47, (093) 82 04 82

ՊԱՀ. 92687
Ա7-47
հշ.

ԱՆԺԵԼԱ ԱՎԵՏԻՍԻ ՏԵՐՅԱՆ

Պատմաբան: Զբաղվում է հայոց պատմության հնագույն շրջանի հարցերով: Հրատարակել է մի շարք աշխատություններ և գրել բազմաթիվ հոդվածներ:

Աշխատությունների ցանկը.

«Ար աստծո պաշտամունքը Հայաստանում», Երևան, 1995թ.

«Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան», Երևան, 2002թ.

Հոդվածների ժողովածու ՀՀ պաշտպանության նախարարության «Հայրենիքի մարտիկ» ամսագրում, № 1, 2006թ.

«Միտանի. Հայոց հնագույն պետություն», Երևան, 2006թ.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ